

## ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

#### Արամ Օրբելյան - (Նախագահ)

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**Աշոտ Հայրապետյան** - «Հայաստանի  
Հանրապետության արդարադատության  
նախարարության իրավաբանական  
ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն,

իրավաբանական գիտությունների թեկնածու

#### **Գրիգոր Բաղիրյան** - Հայաստանում

Ֆրանսիական համալսարան հիմնադրամի

իրավաբանական ֆակուլտետի դեկան,

իրավաբանական գիտությունների դոկտոր

#### **Վոլոդյա Հովհաննիսյան** - Հայաստանի

Հանրապետության սահմանադրական

դատարանի անդամ, իրավաբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ

#### **Ռուզաննա Հակոբյան** - «Գավառի պետական

համալսարան» ՊՈԱԿ ռեկտոր,

իրավաբանական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

#### **Կարեն Սարգսյան** - Հայ-Ռուսական

(Սլավոնական) համալսարանի

իրավաբանական ֆակուլտետի դեկան,

իրավաբանական գիտությունների

թեկնածու, դոցենտ

#### **Ստեփան Ծաղիկյան** - Հայ-Ռուսական

(Սլավոնական) համալսարանի քրեական

իրավունքի և քրեական դատավարության

իրավունքի ամբիոնի վարիչ,

իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

#### **Գառնիկ Սաֆարյան** - Հայաստանի

Հանրապետության գիտությունների ազգային

ակադեմիայի փիլիսոփայության,

սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի

պետաիրավական հետազոտությունների

բաժնի վարիչ, իրավաբանական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### ՀԱՄԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Գուրգեն Աֆրիկյան - իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԽՄԲԱԳԻՐ՝** Գրիգոր Մինասյան - իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝** Սիլվա Արիստակեսյան

### ՄԲԱԳՐԻՉ՝ Մանյա Փաշինյան

Համարի վրա աշխատել են՝

Սամվել Աբրահամյանը, Արտակ Դուլյանը

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ  
հասցեն՝ ք.Երևան, Մ. Խորենացի 162<sup>ա</sup>

գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության  
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից  
խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացի 162<sup>ա</sup>, հեռախոս 574406  
ֆաքս 574453 էլ. կայք [www.lawinstitute.am](http://www.lawinstitute.am)

---

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության  
բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) սահմանած թեկնածուական  
ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար  
ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

1. <b>ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ</b> ՀՀ վճռաբեկ դատարանը՝ որպես դատական քաղաքականություն ձևավորող մարմին	2
2. <b>ԳՈՌ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ</b> Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում	11
3. <b>ՄԱՄՎԵԼ ԱՈՍԲԵԼՅԱՆ</b> Իրավակիրառական պրակտիկայի սահմանադրա-իրավական բովանդակությունը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի իմաստով	17
4. <b>ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ</b> Իրավական կարգավորման համակարգում իրավունքի կենսագործման հիմնախնդրի փիլիսոփայական պատկերացումը	22
5. <b>ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ</b> Օտարերկրացիներին տրվող անձնական և գույքային արտոնությունները և անձեռնմխելիությունը ըստ Կիլիկիայի հայկական թագավորության կողմից Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների հետ կնքած միջազգային պայմանագրերի	26
6. <b>ՄԵՐՈՒԺԱՆ ՄՏԱՄԲՈԼՅԱՆ</b> ՆԱՏՕ-ի դերը Աբխազիայում և Հարավային Օսիայում հակամարտությունների կարգավորման մեջ	32
7. <b>ՄՀԵՐ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ</b> Միավորվելու սահմանադրական իրավունքի օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում	36
8. <b>ՀԱՅԿ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ</b> Իրավունքի դատական մեկնաբանման լեզվաբանական մոտեցման առանձնահատկությունները	40
9. <b>ЛИЛИТ ДАЛАКЯН</b> Роль правовых позиций Конституционного Суда РА в решении проблем доступности Кассационного Суда РА в сфере административного правосудия	44
10. <b>KORYUN AREVSHATYAN</b> The protection of patients' rights and fundamental freedoms based on the assessments of the european court of human rights	50
11. <b>ANI SIMONYAN</b> The Recognition of the Right to Development in UN Documents	54

### ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման  
և եվրահնտեզրման բաժնի ավագ դատախազ,  
իրավագիտության թեկնածու, դոցենտ

## ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԵՎԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը (ՀՀ Սահմանադրության 27.11.2005թ. խմբագրությամբ): Այս նորմն հանդիսանում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնի կարգավիճակի սահմանադրական հիմքը: Տեսության մեջ և իրավական պրակտիկայում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «օրենքի միատեսակ կիրառությունը» որպես իրավական կատեգորիա արժանացավ հակասական գնահատականների: Տեսաբանների մի մասը այն դիտում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի խնդիր՝ կամ գործառնական նպատակ,՝ մյուսները՝ որպես նպատակաուղղված գործունեություն կամ գործառույթ: ՀՀ կառավարության 10.03.2011թ. հաստատած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի 9.11-րդ կետում օրենքի միատեսակ կիրառությունը դիտվում է որպես խնդիր, իսկ 9.9-րդ կետում՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական լիազորություն: Նորմատիվ իրավական ակտերում օրենքի միատեսակ կիրառությունը նույնպես տարբեր կերպ է որակվում: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում օրենքի միատեսակ կիրառությունը հստակ դիտվում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության նպատակ: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում օգտագործվում է «օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր» ձևակերպումը (ՀՀ վճռաբեկ դատարանի 02.06.2009թ. որոշման 20-րդ կետ), սակայն ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2007թ. ՄԴՈ-691 որոշմամբ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելը դիտվում է որպես գործառույթ: Կարծում ենք՝ օրենքի միատեսակ կիրառությունը ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության սահմանադրական նպատակն է (կոչումը), ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի ձևակերպումից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը **կոչված է** ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը (ընդգծումն՝ Ղ.Ա.):

ՀՀ սահմանադրական դատարանը 28.07.2009թ. ՄԴՈ-818 որոշման 6-րդ կետում օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթից բխեցրել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավունքի զարգացման իրավասությունը, որի շրջանակներում, նա պետք է մեկնաբանի իրավական հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի համապատասխան սուբյեկտներին կանխատեսել

իրենց վարքագծի իրավական հետևանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնահարցերը բազմազան են, որոնք դուրս են սույն հետազոտության առարկայի շրջանակներից, ուստի աշխատանքում կքննարկենք համատեսական նշանակության հետևյալ հարցերը՝

- 1) ՀՀ վճռաբեկ դատարանի դերակատարությունը հանրային կյանքում,
- 2) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների բնույթը,
- 3) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հարաբերական կայունությունը և փոփոխման ընթացակարգը,
- 4) ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության ոլորտների սահմանագատումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դերակատարությունը հանրային կյանքում: ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակը էական նշանակություն ունեցավ հանրային կյանքում նրա դերակատարության փոփոխության և նորովի ընկալման հարցում: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում, հանդիսանալով գոտ երրորդ ատյանի դատարան, խիստ սահմանափակ ազդեցություն ուներ իրավական քաղաքականության վրա, նրա որոշումները ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների, այնպես էլ դատական համակարգում չունեին բավարար հեղինակություն: ՀՀ վճռաբեկ դատարանը հազվադեպ էր ունակ իրեն վերապահված քաղաքական իշխանությանը ներհատուկ ուժով վերահսկել գործադիր մարմինների ակտերի օրինականությունը, և դրանով իսկ հակադրվելու այդ մարմինների քաղաքականությանը: Ավելին՝ իշխանության այլ մարմինների հետ հակասություններից խուսափելու նպատակով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, դատավարական որոշումներին տալով հակաիրավական, ոչ համակարգային մեկնաբանություն, նպատակ էր հետապնդում պարզապես խուսափել ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու պրակտիկայից: Օրինակ՝ դատարանները ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի (նախկին խմբագրությամբ) ոչ իրավական մեկնաբանության արդյունքում ձևավորել էին կայուն պրակտիկա, ըստ որի ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության որոշումները վիճարկելու հայցերն անհրաժեշտ է մերժել այն պատճառաբանությամբ, որ այդ ակտերը կարող են վիճարկվել միայն ՀՀ սահմանադրական դատարանում: ՀՀ սահմա-

ԱՐԴԱՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

նադրական դատարանը 16.11.2006թ. ՄԴՈ-665 որոշման 5-րդ կետում արդարացիորեն նշել է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վճռաբեկ դատարանները ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը մեկնաբանել են՝ առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր.-ի 14-րդ և 15-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Եթե ընդհանուր իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության դիսպոզիցիան գուգորդել ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքացու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, թե ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

ՀՀ վճռաբեկ դատարանը պատշաճ դերակատարություն չուներ մաս դատական համակարգի ներսում, որի ապացույցը դատական շրջապատույտի ձևավորված պրակտիկան էր: ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանում էր առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի ակտերը, արտահայտում կոնկրետ իրավական դիրքորոշում, սակայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, անտեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, կայացնում էին նույնաբովանդակ որոշումներ, որի արդյունքում ձևավորվում էր դատական շրջապատույտ:

Հանրային կյանքում ՀՀ վճռաբեկ դատարանի գործառնական դերակատարությունը փոխվեց օրենքների միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական դրույթի և դրանից բխող դատավարական և դատարանակազմական մի շարք նորմերի ամրագրմամբ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքում (2007թ. խմբագրությամբ) սահմանվեց.

1. ՀՀ վճռաբեկ դատարան կարող են բողոքարկվել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, իսկ վերաքննիչ ու վարչական դատարանի որոշումները օրինական ուժի մեջ էին մտնում հրապարակման պահից,
2. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքեր, իսկ նոր երևան եկած հանգամանքները հանվեցին վճռաբեկ բողոքի և այն վարույթ ընդունելու հիմքերի ցանկից,
3. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում էր ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատը, իսկ վճռաբեկ բողոքը քննում էր ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով,
4. ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը համանման գործերով պարտադիր են առաջին և վերաքննիչ

նիչ դատարանների համար:  
Դատաիրավական քաղաքականության հեղինակների կարծիքով սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ վճռաբեկ դատարանը դադարում է զուտ երրորդ ատյանի դատարան լինելուց և հանդես է գալիս որպես իրավունքի դատարան, ուստի օրենսդրական վերը նշված նորամուծություններն իրենց համակցությամբ կազմում էին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես իրավունքի դատարան կարգելու գաղափարախոսության իրավական հիմքը:

Ինչպես ցանկացած նոր ինստիտուտ, ՀՀ վճռաբեկ դատարանի նոր կարգավիճակը և գործունեությունը հանրային կյանքում առաջացրեց հսկասական տրամադրություններ: Հասարակական կյանքում դժգոհությունների հիմնական առիթը վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հայեցողական հիմքերի նախատեսումն էր<sup>4</sup>: Բանն այն է, որ նոր մոտեցման համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը պարտավոր չէ քննության առնելու օրենքի ձևական պահանջներին համապատասխանող ցանկացած վճռաբեկ բողոք, այլ օրենքով սահմանված հայեցողական հիմքերի շրջանակներում որոշում է բողոքը ենթակա է քննության, թե ոչ: Նշված դժգոհությունների իրավական արտահայտման ձևը՝ ՀՀ քաղաքացիների, ՀՀ գլխավոր դատախազի, փաստաբանների կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հայեցողական հիմքերի և բողոքները վերադարձնելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը չպատճառաբանելու սահմանադրականության վիճարկումն էր: ՀՀ սահմանադրական դատարանը 09.04.2007թ. ՄԴՈ-690 և 11.04.2007թ. ՄԴՈ-691 գործերով գտել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերը չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը, այն պատճառաբանությամբ, որ դրանք նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձևական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությամբ, և սահմանել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված<sup>5</sup>:

Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես իրավունքի դատարանի գաղափարախոսության միասնական իրավական հիմքերը երկար կյանք չունեցան և սկսվեց դատական վերակառուցումների նոր ալիք<sup>6</sup>: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի 07.10.2008թ. թիվ 20L որոշմամբ ՀՀ դատական ղեկարտամենտին հանձնարարվել էր մեկամսյա ժամկետում պատրաստել դատաիրավական բարեփոխումների տրամաբանական ավարտին հասցնելու հայեցակարգից բխող օրենսդրական նախագծերի փաթեթը: Նոր դատական համակարգի վերափոխման ընթացքում կատարվեցին մաս օրենսդրական մի շարք փոփոխություններ, որոնցով կարծեք փորձ է արվում վերադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին՝ մինչև ՀՀ Սահմանադրության փոփոխությունը եղած կարգավիճակին: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի, քաղ. դատ. օր-ի և դատական օրենսգրքում 26.12.2008թ. փոփոխություններով և լրացումներով նոր կամ նոր երևան եկած հանգամանքները դիտարկվեցին որպես վճռաբեկ բողոք բերելու և բողոքը վարույթ ընդունելու

www.lawinstitute.am

հիմք (ՀՀ քր. դատ. օր-ի 406-րդ հոդվածի 1-ին մաս, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, ՀՀ քաղ. դատ. օր-ի 226 –րդ հոդված), ՀՀ վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող ակտերը ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում (ՀՀ քր. դատ. օր-ի 402-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ քաղ. դատ. օր-ի 221<sup>1</sup> հոդվածի, ՀՀ վարչ. դատ. օր-ի 117.16 հոդված):

Չնայած ՀՀ վճռաբեկ դատարանի դատավարական կարգավիճակի առանձին տարրերի փոփոխության հիմնավորվածության՝ օրենքի միատեսակ կիրառման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած դատական քաղաքականությունը հանգեցրել է հանրային կյանքի տարբեր ոլորտների էական փոփոխության: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատական քաղաքականության առաջնահերթություններից է անձի անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման դատավարական կառուցակարգերը ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի պահանջներին համահունչ դարձնելը: ՀՀ վճռաբեկ դատարանի նպատակաուղղված քաղաքականության արդյունքում էապես փոխվել են անձին ազատությունից զրկելու, մասնավորապես կալանքի՝ որպես խափանման միջոցի հայեցակարգային հիմքերը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մի քայլ առաջ ընկնելով ՀՀ օրենսդիր մարմնից, կալանքի կիրառման ընթացակարգերը համապատասխանեցրել է միջազգային և սահմանադրական չափանիշներին: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 10.04.2009թ. կայացրել է իր բնույթով աննախադեպ որոշում՝ սահմանելով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական կարգավորումը, մասնավորապես՝ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումը, հակասում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կալանքի օրինականության սկզբունքին: Մեկ այլ օրինակ. ՀՀ վճռաբեկ դատարանի հետևողական քաղաքականության արդյունքում վերացվել է այն պրակտիկան, երբ հանձնված անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել այլ հոդվածով, քան հանձնվել է ՀՀ-ին: Կարելի է շարունակել ՀՀ վճռաբեկ դատարանի հանրային նշանակության որոշումների ցանկը, որոնցում արտացոլված դատական քաղաքականությունը փոխել է իրավական կյանքում առկա երևույթների դասավորվածությունը, սակայն այդ հարցերի համալիր քննարկումը դուրս է սույն աշխատության նպատակների շրջանակներից:

**ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի բնույթը:**

Օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրի կենսագործման օրենսդրական երաշխիքներից առանձնանում է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթ, որն ըստ էության սահմանում է անգոտաքստնական իրավունքին բնորոշ *stare decisis* կանոնը<sup>2</sup>: Նշված դրույթով պետությունը պաշտոնապես ճանաչեց նույնաման փաստական հանգամանքներով գործերով այլ դատարանների համար ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նորմատիվությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, 25.07.2008թ. որոշ-

մամբ մեկնաբանելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «նույնաման փաստական հանգամանքներով գործ» հասկացությունը, նշել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս, պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինելու կամ չլինելու հարցը<sup>3</sup>:

ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին: Կարծում ենք՝ այս դրույթը, թեև ձևակերպված է որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք, սակայն հանդիսանում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների նորմատիվության հատկանիշներից մեկը: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 26.13.2006թ.-ին այս հարցի վերաբերյալ արտահայտել է հետաքրքրություն ներկայացնող դիքքորոշում: Այդ գործով վճռաբեկ բողոք բերած անձինք իրենց բողոքը հիմնավորում էին այն փաստարկով, որ վերաքննիչ դատարանի վճիռը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի 12.06.2005թ. թիվ ԲՎԲ - 37205 որոշմանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոքն այս հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ. «Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի այս փաստարկը չի գնահատում որպես բողոքի հիմք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտին: Հետևաբար, բողոք բերած անձի այս պատճառաբանությունը պետք է գնահատել որպես բողոքի ընդունելիությունը հիմնավորող փաստարկ: Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ասպացույց գնահատում է գործում եղած բոլոր ասպացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Հետևաբար վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերանայվող դատական ակտի հակասելը վճռաբեկ դատարանի նախկինում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդունած որոշմանը ինքնին ստորադաս դատարանի վերանայվող դատական ակտը բեկանելու հիմք չէ, այլ ընդամենը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկն է»:

Սույն գործով արտահայտված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից բխում է, որ եթե այլ դատարանի ակտը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշմանը, ապա դա ինքնին վերանայվող դատական ակտը բեկանելու հիմք չէ, այլ ընդամենը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից է: Այս մտեցումն ընդունելի չէ: Եթե հետևենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 26.10.2006թ. դիրքորոշմանը, ապա ստացվում է, որ դատավարական օրենսդրությամբ թվարկվում են ընդամենը բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, որոնք չեն կարող հանդիսանալ դատական ակտը բեկանելու հիմք: Կարծում ենք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի այս որոշումն ինքնին չի բացառում, որ այլ դատարանի ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշմանը հակասելը, գործում առկա այլ հանգամանքների համակցությամբ, կարող է հանդիսանալ դատական ակտը բեկանելու հիմք: Ավելին, այլ դատարանի ակտի հակասությունը ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմանը պետք է դիտվի մաս դատական ակտը բեկանելու ինքնուրույն հիմք, քանի որ եթե այն չի համարվում բեկանման հիմք, ապա ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է իր որոշմանը հակասող ստորադաս դատական ակտը թողնել ուժի մեջ<sup>9</sup>, ինչն ամենևին չի համապատասխանում մրս կարգավիճակին: ՀՀ վճռաբեկ դատարանի այս որոշման մեջ առավել մտահոգիչն այն է, որ առանձին պարբերությամբ հիշատակվում է ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը, որի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: Նախ նշենք, որ քննարկվող որոշման պատճառաբանությունից չի երևում սահմանադրական այս նորմի և բողոքի այդ հիմքը մերժելու հիմնավորման միջև առկա կապը: Դատարանը բավարարվել է հիշատակելով ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի բովանդակությունը, սակայն պարզ չէ, թե այս նորմի վկայակոչմամբ դատարանը ինչ<sup>10</sup> խնդիր է լուծում: Դատարանը ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը չի մեկնաբանել կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո: Ուստի չենք կարծում, որ սահմանադրական քննարկվող նորմը վկայակոչելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ցանկացել է մատնանշել, որ դատարանի անկախությունը և միայն Սահմանադրությանը և օրենքներին ենթարկվելը, բացառում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հրապարակմանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: ՀՀ դատական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը են-

թակա են պաշտոնական հրապարակման Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներն օժտված են գիտատեսական բնույթով: Գործող օրենսդրությունը բարձր դատարանի դատավորների պաշտոնում նշանակվող թեկնածուների համար նախատեսում է ոչ պարտադիր գիտական ցեղ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավագիտության բնագավառում գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող և վերջին հինգ տարիների ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտապես իրավունք դասավանդող կամ գիտական հաստատությունում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են ընդգրկվել վերաքննիչ ատյանի դատարանների դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում: Փաստորեն, ՀՀ դատական օրենսգիրքը հնարավորություն է նախատեսում իրավագիտության դոկտորներին՝ անմիջապես նշանակվելու ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր: Նման օրենսդրական դրույթի գործնական կիրառությունը կնպաստի դատական ակտերի գիտատեսական որակների հարստացմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 17 դատավորներից միայն երկուսն են իրավագիտության թեկնածու<sup>10</sup>: Կարծում ենք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության գիտատեսական հիմքերի ամրապնդման, այդ քաղաքականության կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է դատավորի թափուր պաշտոններում նշանակումներ անելիս կարևորել նաև թեկնածուների գիտական աստիճանների կամ գիտահետազոտական բնույթի աշխատանքային փորձի առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների հարաբերական կայունությունը և փոփոխման ընթացակարգը: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կայունությունը սերտորեն առնչվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականության և իրավական որոշակիության հետ: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները չեն կարող համարվել կայուն, եթե նույնանման իրավիճակներում դատարանը կայացնում է միմյանց հակասող դատական ակտեր՝ ցուցաբերելով ոչնչով չարդարացված, չպատճառաբանված տարբերակված մոտեցում: Նման դեպքերում ՀՀ վճռաբեկ դատարանը դատական քաղաքականություն ձևավորող, դատական համակարգում իրավական միասնականությունն ապահովող մարմնի փոխարեն հանդես է գալիս իրավական անորոշության աղբյուր:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին» հաշվետվության 50-րդ կետում հստակ նշվում է, որ գերագույն կամ սահմանադրական դատարանների հակասական որոշումների առկայությունը կարող է հակասել իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար անհրաժեշտ է, որ դատարանները, հատկապես բարձր դատարանները, դիրքորոշումների հակասություններից խուսափելու և նրանց դատական պրակտիկայի ներդաշնակությունը ապահովելու համար հնարավորություն ունենան օգտագործել տարբեր կառուցակարգեր<sup>11</sup>:

Եվրոպական դատարանը, Բեյանն ընդդեմ Ռուսիայի գործով, ուսումնասիրել է Ռուսիայի գերագույն դատարանի որոշումների հակասականության հարցը, և նշել, որ իր պրակտիկայի հետևողականությունն ապահովող մեխանիզմի բացակայության պարագայում ներպետական բարձրագույն դատարանը միևնույն օրը կայացրել է Հ-309-2002 օրենքի կիրառելիության ոլորտի վերաբերյալ տրամադժողեն հակառակ որոշումներ: Եվրոպական դատարանը նշված որոշման 37-39-րդ կետերում նշել է. «Իհարկե, դատական պրակտիկայում առկա տարբերությունները ինքնին ուղեկցում են իրավական ցանկացած համակարգ, որը հիմնված է վերջինիս տարածքում առկա նյութական իրավունքի հարցերով լիազորված տարբեր իրավասությունների ամբողջության վրա: Մակայն, գերագույն դատարանի դերը հենց կայանում է նրանում, որպեսզի վերացնի այդ հակասությունները: Մակայն, պետք է նշել, որ այս դեպքում վճռաբեկ բարձր դատարանը ինքն է հանդիսանում այն խորը և կայուն տարբերությունների աղբյուրը, որոնք մատնանշվել են բողոքաբերի կողմից: Երկրի բարձրագույն դատական ատյանի կողմից ձևավորված այս պրակտիկան ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, որը ենթադրվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բոլոր հոդվածներում և հանդիսանում «իրավունքի գերակայության» հիմնարար բաղադրիչներից մեկը: Փոխանակ ենթակա մեկնաբանությունն ամրապնդելու, վճռաբեկ բարձր դատարանը ինքն է դարձել իրավական անորոշության աղբյուր, այդպիսով խաթարելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ»: Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դատական անորոշությունը դիմումատուին գրկել է Հ-309-2002 օրենքով սահմանված երաշխիքներից օգտվելու որևէ հնարավորությունից, մինչդեռ միևնույն իրավիճակում գտնվող այլ մարդկանց այդ իրավունքներն ընձեռվել են: Հետևաբար, թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում<sup>12</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում այն միասնական չէ. ՀՀ վճռաբեկ դատարանը միևնույն հարցի վերաբերյալ կայացրել է հակասական որոշումներ, օրենքներին տվել տարբեր մեկնաբանություններ: ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության առանձին ոլորտներում իրավական անորոշության, կամայականության, երկակի չափանիշների կիրառման բազմաթիվ օրինակներ են նշվում ոչ միայն գիտական աշխատանքներում և փաստաբանների իրականացրած հետազոտություններում, այլև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում (տես աշխատանքի 4-րդ գլխի 1-ին պարագրաֆը):

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականությունը և կայունությունը չի խաթարվում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը փոխում է իր մախկին դիրքորոշումը՝ դատական ակտում հստակ պատճառաբանելով նման փոփոխության անհրաժեշտությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն մեկ դեպքում է ՀՀ վճռաբեկ դատարանը պաշտոնապես փոփոխել իր մախկին դիրքորոշումը և ակտով

պատճառաբանել այն: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը Մյասնիկ Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. որոշման 16-րդ կետում նշել է. «Եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը մատնանշված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոններն ընդհանրապես, ո՛չ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած՝ եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության»:

Հետագայում ՀՀ սահմանադրական դատարանը 07.12.2009թ. ՄԴՈ-844 որոշմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ մաս «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործունականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, պայմանավորված դատախազի «անգործությամբ», որի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը Մ.Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009 թ. որոշման 16-րդ կետում դիրքորոշում է հայտնել, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՀՀ վճռաբեկ դատարանը 12.02.2010թ. որոշման 13-րդ կետում հաստատել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշման ընդունումից հետո ծագել է հակասություն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-844 որոշման և ՀՀ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության կապակցությամբ կայացված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի Մ. Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. որոշման միջև, իսկ նշված որոշման 14-րդ կետում նշել է, որ Մ. Ավետիսյանի վերաբերյալ 29.06.2009թ. **որոշմամբ ձևավորված դիրքորոշումը պետք է վերանայել (ընդգծումն՝ Ղ.Ա.)** և համապա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տասխանեցնել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քր. դատ. օր-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հետ:

Այսպիսով՝ նշված դեպքն այն եզակիներից է, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը կոնկրետ նորմի վերաբերյալ հայտնել է իրավական դիրքորոշում, սակայն հետագայում պաշտոնապես վերանայել, փոփոխել է այն: ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների պաշտոնապես փոփոխելու պրակտիկայի եզակիությունը, կարծում ենք, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ, ի տարբերություն ՀՀ սահմանադրական և Եվրոպական դատարանների, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխության իրավական ընթացակարգ: Այս առումով գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ ծագում են ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների իրավական դիրքորոշումների փոփոխության կամ ՀՀ պալատների իրավական դիրքորոշումների հակասությունը լուծելու հարցեր (օրինակ՝ միջնորդային իրավական հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը և քաղաքացիական ու վարչական պալատը կայացրել են հակասական որոշումներ), ապա նման գործերը պետք է քննի ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով<sup>13</sup>:

*ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի քաղաքականության սահմանազատումը:* Դատական քաղաքականության ձևավորման ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության ոլորտն ավելի նեղ է, քան ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ոլորտը: Բանն այն է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության իրավական հիմքը առավելապես օրենքներն են, որոնց հասկացությունները առավել կոնկրետ են, տրվում են իրավական հասկացությունների բնորոշումները, այլ կերպ ասած, ՀՀ Սահմանադրության համեմատ, օրենքները հասարակական հարաբերությունները կարգավորում են առավել մանրամասն՝ դրանով իսկ սահմանափակելով ՀՀ վճռաբեկ դատարանի հայեցողության սահմանները, դատական քաղաքականության տիրույթը: Մինչդեռ սահմանադրական նորմերի ընդհանրական բնույթը ՀՀ սահմանադրական դատարանին այդ նորմերը մեկնաբանելու առավել լայն հնարավորություն են տալիս<sup>14</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի քաղաքականության սահմանազատումը կարևոր նշանակություն ունի այդ երկու մարմինների դիրքորոշումների հակասություններից խուսափելու, իրավական համակարգի միասնականությունը և որոշակիությունը ապահովելու համար: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում նշվում է, որ բացի սահմանադրական արդարադատության հարցերի, ՀՀ բարձրագույն դատական ատյանը վճռաբեկ դատարանն է: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը:

Տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում հաճախ է դրվում հետևյալ հարցադրումը. եթե ընդհանուր իրավասության դատարանները, կոնկրետ գործ քննելիս կարծում են, որ կիրառվող իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ապա արդյո՞ք պարտավոր են այդ ակտի սահմանադրականության որոշման հարցով դիմել ՀՀ սահմանադրական դատարան: Մինչև հայ իրականությանն անդրադառնալը, համառոտ ներկայացնենք արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկայում սույն հարցի վերաբերյալ առկա մոտեցումները: Այս վեճը բավականին սուր բնույթ ստացավ ՌԴ գերագույն դատարանի և ՌԴ սահմանադրական դատարանի միջև:

Քննարկվող հարցի վերաբերյալ ՌԴ գերագույն դատարանի պլենումը իր դիրքորոշումն հայտնել է 1995թ. դեկտեմբերի 31-ի որոշմամբ, որի 2-րդ կետում տրվում են այն դեպքերը, երբ դատարանները Սահմանադրությունը կիրառում են անմիջականորեն՝ 1. երբ Սահմանադրությամբ սանթրոնված նորմը լրացուցիչ կարգավորման կարիք չունի և օրենքի ընդունման պահանջը բացակայում է, 2. երբ դատարանը կգտնի, որ Սահմանադրությունից առաջ կամ դրանից հետո ընդունված օրենքը հակասում է Սահմանադրությանը և այլն: Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ կիրառվող կամ կիրառված օրենքի՝ Սահմանադրության համապատասխանության հարցի անորոշության դեպքում դատարանը դիմում է Սահմանադրական դատարան: Տեսության մեջ արդարացիորեն նշում է, որ ՌԴ գերագույն դատարանի պլենումի որոշման 3-րդ կետում օգտագործվող «անորոշություն» տերմինը մնում է չարգաբանված: Եթե «անորոշություն» ասելով նկատի ունեն օրենքի սահմանադրականության վերաբերյալ դատարանի կասկածը, ապա ինչպես պետք է հասկանալ այն, որ դատարանը Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման մեջ պետք է հիմնավորի սահմանադրությանը հակասելու փաստը: Եթե դատարանը դիմումում պատճառաբանում է իր դիրքորոշումը, ապա նա արդեն գտել է բարդ իրավական վիճակի ելքը, և չինչ չի խանգարում նրան գործն ըստ էության լուծել սահմանադրական նորմի հիման վրա՝ անտեսելով Սահմանադրությանը հակասող նորմը<sup>15</sup>:

Մյուս կողմից, ՌԴ սահմանադրական դատարանը 1998թ. հունիսի 16-ի թիվ 19-Պ որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարանները, գտնելով, որ օրենքը հակասում է Սահմանադրությանը, իրավունք չունեն այն կիրառել կոնկրետ գործով և պարտավոր են օրենքի սահմանադրականությունը որոշելու հարցով դիմել սահմանադրական դատարան<sup>16</sup>:

Տեսության մեջ առաջարկվում է հարցի լուծման հետևյալ տարբերակը. «Դատարանը, եզրակացնելով, որ կիրառման ենթակա օրենքը հակասում է Սահմանադրությանը, իրավունք ունի գործը լուծել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի կամ Սահմանադրության հիման վրա, առանց սահմանադրական դատարանի դիմելու, եթե կհանդգնի, որ Սահմանադրության նորմերը, նրա հետագուտած փաստական հանգամանքներն անհրաժեշտ և բավարար են օրինական և հիմնավոր որոշում կա-



յացնելու համար: Եթե դատարանը կգա այն հանգ-  
մունքին, որ օրինական և հիմնավոր որոշում կա-  
յացնելն անհնար է առանց՝ իր կարծիքով սահմա-  
նադրությանը հակասող օրենքի կիրառմանը, նա  
պարտավոր է կասեցնել գործի վարույթը և դիմել  
սահմանադրական դատարան: Բոլոր դեպքերում,  
եթե դատարանը կեզրակացնի, որ հակասահմա-  
նադրական օրենքը կապված է քրեական, վարչա-  
կան և կարգապահական պատասխանատվության  
միջոցների կիրառման հետ, նա պարտավոր է կա-  
սեցնել վարույթը և դիմել սահմանադրական դատա-  
րան: Ակնհայտ է, որ նշված պատասխանատվու-  
թյան միջոցների կիրառումը հնարավոր է միայն  
նման պատասխանատվության միջոց նախատեսող  
ակտի հիման վրա»<sup>17</sup>:

Ն. Վիրտուկը նշում է. «Պետք է համաձայ-  
նել, որ եթե դատարանը, հաշվի առնելով գործի  
փաստական հանգամանքները, կհամոզվի, որ Սահ-  
մանադրության նորմը բավարար է օրինական և  
հիմնավոր որոշում կայացնելու համար, նա կարող է  
անմիջականորեն կիրառել Սահմանադրության  
նորմը՝ անտեսելով այն օրենքը, որը դատարանի  
հանդգմամբ հակասահմանադրական է: Սակայն,  
այս իրավիճակում դատարանը չի ազատվում այդ  
օրենքի սահմանադրականությունը որոշելու հարցով  
Սահմանադրական դատարան դիմելու պարտակա-  
նությունից, հակառակ դեպքում նա կխախտի օրի-  
նականության սկզբունքը»<sup>18</sup>:

Այժմ ՀՀ դատարանները իրավասու են ան-  
միջականորեն դիմել ՀՀ սահմանադրական դատա-  
րան: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդ-  
վածի համաձայն՝ Սահմանադրությամբ և սահմա-  
նադրական դատարանի մասին օրենքով սահման-  
ված կարգով սահմանադրական դատարան կարող  
են դիմել դատարանները իրենց վարույթում գտնվող  
կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի  
դրույթների սահմանադրականության հարցերով:  
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրեն-  
քի 71-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ սույն  
հոդվածում նշված գործերով ՀՀ սահմանադրական  
դատարան դիմում են դատարանները, ինչպես նաև  
զլխավոր դատախազը, եթե գտնում են, որ Սահմա-  
նադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմա-  
նադրական դատարանի ենթակայությանը վերա-  
պահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմա-  
տիվ բնույթ, դրույթ կամ դրույթները, որոնք ենթակա  
են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ  
գործով, հակասում են Սահմանադրությանը:

Ինչպես նշվեց, առանձին տեսաբաններ  
կարծում են, որ եթե ընդհանուր իրավասության դա-  
տարանը, կոնկրետ գործի քննության ընթացքում  
գտնում է, որ այդ օրենքը հակասում է Սահմանադ-  
րությանը, ապա կարող է վեճը լուծել անմիջականորեն  
սահմանադրական նորմի հիման վրա, եթե վս-  
տահ է, որ օրենքի նորմը ուղղակիորեն հակասում է  
Սահմանադրությանը և դա բխում է անձի սահմադ-  
րական իրավունքների իրականացման անհրաժեշ-  
տությունից<sup>19</sup>: Այս դեպքում, պետք է նկատի ունենալ,  
որ ընդհանուր իրավասության դատարանը դատա-  
կան ակտի եզրափակիչ մասում պաշտոնապես  
օրենքը չի ճանաչում հակասահմանադրական, սա-  
կայն որոշման պատճառաբանական մասում այս-  
պես, թե այնպես ներկայացնում է օրենքի հակա-

սահմանադրականությունը: Կարծում ենք՝ այս իրա-  
վիճակը կարելի է դիտել որպես «սովերային սահ-  
մանադրական արդարադատություն», որի կիրառ-  
ման հնարավորությունը վտանգավոր է: Բանն այն  
է, որ հնարավոր է մի իրավիճակ, որ կոնկրետ գործի  
քննության ընթացքում կիրառվող նորմատիվ իրա-  
վական ակտը մի դատավորի կողմից գնահատվի  
որպես սահմանադրական, մեկ այլ դատավորի կող-  
մից՝ սահմանադրությանը հակասող: Նման դեպ-  
քում առաջանում է նորմատիվ իրավական ակտերի  
առնչությամբ ՀՀ Սահմանադրության միասնական  
կիրառության ապահովման խնդիր: Արդյոք ՀՀ վճ-  
ռաբեկ դատարանն իրավասու է ապահովել ՀՀ  
Սահմանադրության միասնական կիրառության  
հարցը: Կարծում ենք, եթե ՀՀ Սահմանադրության  
միասնական կիրառությունն առնչվում է նորմատիվ-  
իրավական ակտերի սահմանադրականությանը,  
ապա դա ՀՀ Սահմանադրական դատարանի բա-  
ցառիկ իրավասությունն է: Եթե ՀՀ վճռաբեկ դատա-  
րանն ապահովում է օրենքների միատեսակ կիրա-  
ռությունը, ապա ՀՀ Սահմանադրական դատարանն  
ապահովում է իրավական ակտերի սահմանադրա-  
կանության ոլորտում Սահմանադրության միասնա-  
կան կիրառությունը:

Գ. Մուրադյանը այս կապակցությամբ ար-  
դարացիորեն նշում է. «Դատական օրենսգրքով վճ-  
ռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները  
պարտադիր են բոլոր ստորադաս դատարանների  
համար, ուստի, եթե ՀՀ վճռաբեկ դատարանն իր  
որոշումների պատճառաբանական մասում եզրա-  
հանգումներ է արել որևէ գործով կիրառման ենթա-  
կա օրենքի հակասահմանադրականության մասին  
և այդ հիմքով չի կիրառել այն, ղեկավարվելով միայն  
Սահմանադրության պահանջներով, ապա այդ  
օրենքը փաստացի ճանաչվել է հակասահմանադ-  
րական և ոչ մի դատարան այն իրավունք չունի կի-  
րառելու, եթե չհիմնավորի, որ վճռաբեկ դատարանի  
այդ որոշումը չի կարող վերաբերել իր կողմից լուծ-  
ման ենթակա գործին»<sup>20</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը  
25.02.2011թ. ՄԴՈ-943 որոշման 8-րդ կետում հստակ  
սահմանել է.

«Սահմանադրական դատարանի որոշումների և  
դատական այլ ակտերի բնույթի, բովանդակության և  
դրանց իրավաբանական ուժի համեմատական  
վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական  
արդարադատություն իրականացնելը և այդ գործա-  
ռույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում  
կայացնելը ՀՀ սահմանադրական դատարանի բա-  
ցառիկ իրավասությունն է (ՀՀ Սահմանադրության  
92-րդ հոդվածի երկրորդ մաս և 93-րդ հոդված): ՀՀ-  
ում այլ դատարան կամ պետական այլ մարմին  
իրավասու չէ իրականացնել ՀՀ Սահմանադրության  
100-րդ հոդվածով սահմանադրական դատարանին  
վերապահված որևէ լիազորություն»:

*Այսպիսով՝ կարելի է եզրակացնել.*

1. ՀՀ վճռաբեկ դատարանը, մինչև սահմանադ-  
րական բարեփոխումները, իշխանության համա-  
կարգում չունեի բավարար հեղինակություն, ավելին՝  
քաղաքական իշխանության այլ մարմինների հետ  
հակասություններից խուսափելու նպատակով, ի  
վնաս մարդու իրավունքների դատական պաշտպա-  
նության, ինքնասահմանափակում էր սեփական իշ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խանութունը՝ հրաժարվելով դատական վերահսկողության ենթարկել չէ՛ նախագահի և չէ՛ կառավարության որոշումների օրինականությունը: Չէ՛ վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառություն ապահովող մարմնի կարգավիճակի սահմանադրական ամրագրմամբ հանրային կյանքում էականորեն փոխվեց նրա դերակատարությունը, հանրային կյանքի վրա ներազդելու իրավական գործիքների (դատական ակտերի) բնույթը: Չէ՛ վճռաբեկ դատարանի ձևավորած դատական քաղաքականությունը մի շարք ոլորտներում առաջ է բերել արմատական փոփոխություններ, ազդել է գործադիր իշխանության մարմինների գործունեության բովանդակության և առաջնահերթությունների վրա:

2. Չէ՛ վճռաբեկ դատարանի որոշումների կայունությունը խաթարվում է, երբ նույնանման իրավիճակներում կայացվում է միմյանց հակասող դատական ակտեր՝ ցուցաբերելով ոչնչով չարդարացված, չպատճառաբանված, տարբերակված մոտեցում: Նման դեպքերում չէ՛ վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնից վերահույս է իրավական անորոշության աղբյուրի:

3. Չէ՛ վճռաբեկ դատարանի քաղաքականության միասնականությունը և կայունությունը չի խախտվում, երբ չէ՛ վճռաբեկ դատարանը փոխում է

իր նախկին դիրքորոշումը՝ դատական ակտում հստակ պատճառաբանելով նման փոփոխության անհրաժեշտությունը: Այն դեպքերում, երբ ծագում են չէ՛ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների իրավական դիրքորոշումների փոփոխության կամ նրանց միջև առկա հակասությունը լուծելու անհրաժեշտություն, ապա նման գործերը պետք է քննի չէ՛ վճռաբեկ դատարանը՝ ողջ կազմով:

4. Իրավական ակտերի սահմանադրականության որոշման ոլորտում չէ՛ Սահմանադրության միատեսակ կիրառության ապահովման պարտականությունը դրված է չէ՛ սահմանադրական դատարանի վրա: Եթե այլ դատարանները և չէ՛ վճռաբեկ դատարանը գործի կամ բողոքի քննության ընթացքում կարծում են, որ կիրառվող իրավական ակտը հակասում է չէ՛ Սահմանադրությանը, ապա պարտավոր են կասեցնել գործի վարույթը և դիմել չէ՛ սահմանադրական դատարան:

<sup>1</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. Չէ՛ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հիմնախնդիրները քրեական դատավարությունում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում, Սեմինարի նյութերի ժողովածու: (ք. Երևան, 2007թ. մարտի 6), Եր.: ՌՉՀ հրատ., 2007. էջ 20, Գասպարյան Վ. Չէ՛ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը: Նույն տեղը, էջ 46, Ենգոյան Հ. Դատական արդյունավետ պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Նույն տեղը, էջ 97:

<sup>2</sup> Տե՛ս Մուրադյան Գ. Չէ՛ վճռաբեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական նախադեպը»: Նույն տեղը, էջ 71:

<sup>3</sup> Տե՛ս Դիրքանյան Ս., Մելիքյան Ռ. Վճռաբեկությունը քրեական դատավարությունում: «Պետություն և իրավունք», 2007, թիվ 35, էջ 54:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ջհանգիրյանի ելույթը՝ չէ՛ դատախազության կոլեգիայի 25.07.07թ. նիստում. <http://www.genproc.am/main/am/51/2397/>, Ա.Թամազյանի ելույթը՝ չէ՛ դատախազության կոլեգիայի 25.07.07 նիստում. <http://www.genproc.am/main/am/51/2401/>, Ղազարյան Ա. Չէ՛ վճռաբեկ դատարանի պրակտիկան քրեական գործերով (ընդգրկում է 01/01/07-01/07/09 ժամանակահատվածը): «Փաստաբանների պալատ», 2010:

<sup>5</sup> Տե՛ս Չէ՛ սահմանադրական դատարանը հետազայում անդրադարձել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու առանձին իրավակարգավորումների սահմանադրականությանը: Այդ մասին մանրամասն տես Ղամբարյան Ա. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ինստիտուտը դատական համակարգի վերափոխման գործընթացում: «Օրինականություն», 2009, թիվ 56, էջեր 14-18:

<sup>6</sup> Տե՛ս Ղազինյան Գ., Վաղարշյան Ա. Դատական շինարարությունը Հայաստանի երեք Հանրապետություններում և դատական համակարգի վերակառուցման արդի հայեցակարգի մեթոդաբանությունը: «Իրավագիտության հարցեր», 2008, թիվ 3-4, էջ 18:

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010, էջ 911:

<sup>8</sup> Տե՛ս նաև Չէ՛ վճռաբեկ դատարանի՝ Ս. Այվազյանի վերաբերյալ գործով 23.05.2008թ. որոշման 26-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս Այս տարբերակը հնարավոր ենք համարում, եթե վճռաբեկ դատարանը փոխում է իր նախկին դիրքորոշումը, պատճառաբանում այն և ընդունում է վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումը:

<sup>10</sup> Տե՛ս Տվյալները վերցվել են Չէ՛ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված դատավորների կենսագրություններից. [http://www.court.am/?l=lo&mode=common\\_court&id=29](http://www.court.am/?l=lo&mode=common_court&id=29) (12.05.2011 դրությամբ):

<sup>11</sup> Տե՛ս Доклад о верховенства права. Европейская комиссия за демократию через право (Венецианская комиссия). Принято на 86 пленарном заседании Венецианской Комиссии. (Венеция, 25-26 марта 2011 г.). С. 17.

<sup>12</sup> Տե՛ս Бюллетень Европейского Суда по правам человека. Российское издание, 2008. № 6. С.14-15.

<sup>13</sup> Տե՛ս Նմանատիպ կարգավորում նախատեսված է ՌԴ սահմանադրական դատարանի, Եվրոպական դատարանի պարագայում:

<sup>14</sup> Տե՛ս Չէ՛ սահմանադրական և վճռաբեկ դատարանների կարգավիճակների փոխհարաբերակցության առանձին

հարցերի մասին տես Меликян Р. Н., Татоян А. А. Некоторые вопросы согласования конституционно-правовых статусов Конституционного и Кассационного судов РА. «Актуальные проблемы правосудия в контексте современного конституционализма». Сборник материалов Международной научно-практической конференции, посвященной 15-летию принятия Конституции РА. 24-25 сентября 2010г., Ереван- Дилижан. Ереван, изд. «Тигран Меш», 2010. С. 39-49.

<sup>15</sup> Տե՛ս Լазарев Լ. Разграничение юрисдикции и взаимодействие судов в защите прав и свобод личности. Российская юстиция. 1996. № 4. С.15; Терехова Л.А. Проблемы обжалования нормативных актов. Вестник Омского университета, 1997. № 2. С. 90-93.

<sup>16</sup> Մի շարք գիտնականներ չեն համաձայնվել ՌԴ սահմանադրական դատարանի այս դիրքորոշման հետ: Տե՛ս Железнова Н.Д. Практика судебного контроля за содержанием нормативных актов. Судебная власть в России. М.: 2002. С. 84-102; Лебедев В. М. Становление и развитие судебной власти в Российской Федерации. М.: 2000, Проблемы защиты публичных и частных интересов в административных судах. М.: 2001; Жилин Г.А. Признание нормативных актов недействительными. Российская юстиция, 1998. № 7. С.41.

<sup>17</sup> Տե՛ս Конституционный судебный процесс: Уч. для вузов. Отв. ред. Саликов М.С. М.: 2003. С. 298.

<sup>18</sup> Տե՛ս Витрук Н. В. Конституционное правосудие. Судебное конституционное право и процесс. Учеб. пос. - 2е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2005. С. 433-434.

<sup>19</sup> Տե՛ս Գաապարյան Վ. ՀՀ վճռարեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը: Նույն տեղը, էջ 58:

<sup>20</sup> Տե՛ս Մուրադյան Գ. ՀՀ վճռարեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական ցախադեղ»: Նույն տեղը, էջ 78:

## РЕЗЮМЕ

### *Кассационный Суд РА как орган, формирующий судебную политику*

В данной статье автор рассматривает функции Кассационного Суда в сфере судебной политики.

А. Гамбарян отмечает, что до конституционных реформ Кассационный Суд РА не обладал достаточной репутацией в системе власти. Более того, в целях избежания противоречий с другими органами политической власти, в ущерб судебной защите прав человека ограничивал собственную власть, отказываясь подвергать судебному контролю законность решений Президента РА и Правительства РА. Установлением конституционного статуса Кассационного Суда РА в качестве органа, обеспечивающего единообразное применение закона, существенным образом изменилась его роль в общественной жизни и характер правовых инструментов воздействия на общественную жизнь. Сформированная Кассационным Судом РА судебная политика привела к коренным изменениям в ряде сфер, повлияла на содержание и приоритеты деятельности органов исполнительной власти.

В статье отмечается, что стабильность решений Кассационного Суда искажается, когда в идентичной обстановке выносятся противоречивые друг другу судебные акты, проявляя неоправданный, немотивированный различный подход. В подобных случаях Кассационный Суд РА из органа, обеспечивающего единообразное применение закона, перерастает в источник правовой неопределенности. Единство и стабильность политики Кассационного Суда не нарушается, когда Кассационный Суд меняет свою прежнюю позицию, четко мотивируя в судебном акте необходимость такого изменения. В тех случаях, когда возникает необходимость изменения правовых позиций соответствующих палат Кассационного Суда РА или разрешения имеющихся между ними противоречий, то подобные дела должен рассматривать Кассационный Суд РА в полном составе.

По мнению автора, в сфере определения конституционности правовых актов обязанность обеспечения единообразного применения Конституции РА возложена на Конституционный Суд РА. Если Кассационный Суд или другие суды в процессе рассмотрения дела либо жалобы считают, что применяемый правовой акт противоречит Конституции РА, то обязаны приостановить производство по делу и обратиться в Конституционный Суд РА.

## SUMMARY

### *Court of Review of the RF as the body of forming the judicial policy*

In this article the author develops the subjects of the functions of the Court of Review in the sphere of the judicial policy.

A.Ghambaryan notices that before the constitutional reforms the Court of Review of the RF didn't possess sufficient reputation in power system. Moreover, with the view of avoidance of contradictions with other bodies of the political power, the detriment of judicial protection of human rights limited own power, refusing the subject of judicial control legality of decisions of the President of the RF and the Government of the RF. The establishment of the constitutional status of the Court of Review of the RF as the body providing uniform application of the law, has essentially changed its role in public life and character of legal tools of influence on public life. The judicial policy generated by the Court of Review of the RF has led to basic changes in a number of spheres, affecting the maintenance and priorities of activity of enforcement authorities.

In the article is mentioned that the stability of decisions of the Court of Review is deformed when judicial certificates are taken out inconsistent to each other, showing the unjustified, unmotivated various approach. In such cases the Court of Review of the RF from the body providing uniform application of the law, develops into a source of legal uncertainty. The unity and stability of a policy of the Court of Review isn't broken, when the Court of Review changes the former position, accurately motivating in the judicial certificate necessity of such change. In cases, when there is a necessity of a change of legal positions the Court of Review of the RF should consider similar affairs.

According to the author, in the sphere of definition of constitutionality of legal certificates the duty of maintenance of uniform application of Constitution of the RF is assigned to the constitutional Court of the RF.

**ԳՈՌ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 19-ը, որը վերնագրված է՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը», սահմանում է հետևյալը.

«Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովումն իրականացնում են այդպիսի գաղտնիք կազմող տեղեկություններ տնօրինող, դրանց օգտագործմամբ աշխատանքներ կատարող պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները՝ իրենց իրավասության սահմաններում և իրենց առջև դրված խնդիրներին համապատասխան:

Պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կազմակերպման պատասխանատվությունը դրվում է դրանց ղեկավարների վրա:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ կատարվող աշխատանքների ծավալից կախված՝ պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների կողմից ստեղծվում են պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց գործառնությունները որոշում են նշված ղեկավարները Հայաստանի Հանրապետության կառավարության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ հաշվի առնելով իրենց կողմից տարվող աշխատանքների առանձնահատկությունները»:

Առաջին իսկ հայացքից երևում է, որ «Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը» հոդվածում խոսքն առանձին պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման մասին է, ինչը, մեր կարծիքով, ակնհայտ անհամապատասխանություն է վերնագրի և բովանդակության միջև: Ասվածը հիմնավորելու համար նախ փորձենք պարզաբանել «կազմակերպում» եզրույթը, որը կօգնի ուրվագծել քննարկվող հոդվածի գործողության շրջանակները:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «կազմակերպել» բառն ունի տասը բացատրություն, որոնցից առանձնացնենք քննարկվող հոդվածի բովանդակությանն առավել

առնչվող երկուսը. «2. մի որևէ նպատակի կամ գործի հաջող իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել՝ ջանքեր գործադրել» և «4. մի բանի մեջ կարգ մտցնել՝ սահմանել, կարգավորել»<sup>1</sup>: «Իրավաբանական հանրագիտարանում» (ռուսերեն) «կազմակերպումը» բացատրվում է որպես «որևէ ոլորտում համաձայնեցված, ներքին կարգապահության վրա հիմնված գործունեության ապահովում»<sup>2</sup>: «Անվտանգության ժամանակակից հանրագիտարանային բառարանում» (ռուսերեն) «կազմակերպում» բառը բացատրվում է որպես «2.ամբողջի՝ կառուցվածքով պայմանավորված մասերի կարգավորվածություն, համաձայնեցվածություն, փոխազդեցություն»<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ՝ «կազմակերպումը» սերտորեն կապված է «կառավարում» հասկացության հետ: «Կազմակերպման» և «կառավարման» հարաբերակցությունը չդարձնելով հատուկ ուսումնասիրման առարկա՝ արձանագրենք, որ գրականության մեջ կայունացած է այն միտքը, որ կազմակերպումը կառավարման գործառնույթ է: Դեռ ավելին՝ «կազմակերպումը կառավարումն ապահովող գործառնույթ է՝ ուղղված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն»<sup>4</sup>: Գրականության մեջ լայնորեն կիրառվում է նաև «կառավարման կազմակերպում» արտահայտությունը:

Վերոգրյալը, կարծում ենք, հիմք է տալիս Օրենքի հոդված 19-ում կիրառված «կազմակերպում» եզրույթը դիտարկել հենց կառավարման գործառնույթի, իսկ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը»՝ պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում իրականացվող պետական կառավարման կազմակերպման տեսանկյունից: Ընդ որում՝ պետական գաղտնիքի պաշտպանության կառավարումը պետք է դիտել որպես ազգային անվտանգության ոլորտում պետական կառավարման բաղկացուցիչ մաս:

Հասկանալի է, որ ինչպես այլ երկրներում, Հայաստանում ևս պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը դիտվում է որպես դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և, պետական գաղտնիքի կարևորությունից ելնելով, իրականացվում է պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից՝ ոլորտի նորմատիվ իրավական կարգավորման, զանազան ծրագրերի, ընթացակարգերի մշակման, դրանց իրականացման ֆինանսավորման և այլ ձևերով: Ընդ որում, եթե կազմակերպումը դիտենք ավելի նեղ առումով,

ապա դա գործադիր իշխանության գործունեությունն է նշված ոլորտում: Այդ են վկայում, մասնավորապես, Օրենքի հոդված 8-ով պետական գաղտնիքի պաշտպանության համակարգում կառավարությանը վերապահված լիազորությունները Օրենքի կատարումն ապահովելու, ոլորտում պետական ծրագրեր մշակելու և հաստատելու, ինչպես նաև դրանց գործնական իրականացումն ապահովելու ուղղությամբ, Օրենքի հոդված 20-ով սահմանված պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման կարգը, որի համաձայն պետական գաղտնիքի պաշտպանության ֆինանսավորումն իրականացվում է «պետական բյուջեի միջոցների հաշվին»: Բյուջեն, ինչպես հայտնի է, Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում կառավարությունը, հետևաբար՝ որոշում նաև պետական ծախսերը պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում:

Այն, որ պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը երկրի բարձրագույն իշխանության խնդիրն է, վկայում են նաև պետական գաղտնիքի մասին այլ երկրների օրենսդրությունները, որոնցով այդ երկրների բարձրագույն իշխանության մարմիններն օժտված են պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման (ոլորտի կառավարման) լայն լիազորություններով<sup>5</sup>: Բերենք միայն Լատվիայի Հանրապետության օրինակը, որի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի հոդված 7-ում (վերնագրված է՝ «Պետական գաղտնիքի պաշտպանությունը») ուղղակիորեն սահմանված է՝ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը դրվում է նախարարների կաբինետի վրա»<sup>6</sup>:

Մեր կարծիքով, այնքան էլ հիմնավորված չէր օրենսդրական փոփոխությունների (ՀՕ 317, 318, 18.04.2002) արդյունքում տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասող և դրանց պաշտպանության ոլորտում լիազորություններ ունեցող սուբյեկտների ցանկից ՀՀ Ազգային ժողովի հանումը, քանի որ դա նշված հարաբերությունների օրենսդրական կարգավորում իրականացնող և այդ հարաբերություններում անմիջական մասնակցություն ունեցող, հետևապես պատասխանատվություն ստանձնող մարմին է (ԱԳՀ բոլոր երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության հստակ լիազորություններ են սահմանված ներկայացուցչական մարմինների համար):

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը» շատ ավելի լայն հասկացություն է, քան պետական գաղտնիքի պաշտպանության ուղղությամբ առանձին պետական մարմիններում, ձեռնարկություններում իրականացվող գործունեությունը, ինչպես սահմանված է Օրենքի հոդված 19-ում: Նշված հանգամանքը, կարծում ենք, ոչ միայն և ոչ այնքան հոդվածի վերնագրի և բովանդակության անհամապատասխանության խնդիր է: Դրանով նսեմանում է, եթե չասենք՝ աղավաղվում է պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման, իսկ ավելի լայն իմաստով՝ ոլորտի կառավարման խնդիրը, ինչն իր հերթին չի կարող բացասաբար չանդրա-

դառնալ պետական գաղտնիքի պաշտպանության արդյունավետության վրա: Այդ իսկ պատճառով արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս, ելնելով պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում կառավարության լիազորություններից, պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը, այսինքն՝ ոլորտի կառավարումն ամենալայն ընդգրկման մեջ իրականացնում է երկրի բարձրագույն իշխանությունը՝ ի դեմս կառավարության, այլ ոչ թե առանձին հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները: Վերջիններս միայն կազմակերպում են պետական գաղտնիքի պաշտպանությունը իրենց ղեկավարած առանձին պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների շրջանակներում, իսկ պաշտպանությունն անմիջականորեն իրականացնում են նշված հաստատությունները՝ իրենց կողմից հատուկ ստեղծված կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Այս իրողությունն իր հստակ ձևակերպումը պետք է գտնի նաև օրենսդրության մեջ:

Պետական գաղտնիքի անմիջական պաշտպանության պարտականությունը օրենսդրությամբ վերոհիշյալ հաստատությունների վրա դնելը, կարծում ենք, միանգամայն արդարացված է, քանի որ պետական գաղտնիքները ձևավորվում (մշակվում) են այդ հաստատություններում և միանգամայն տրամաբանական է, որ հենց դրանք էլ պետք է իրականացնեն իրենց իսկ կողմից ստեղծված (մշակված) տեղեկությունների պաշտպանությունը՝ ելնելով, մասնավորապես, դրանց կարևորությունից (գաղտնիության աստիճանից), իսկ ղեկավարները պետք է կազմակերպեն այդ գործընթացը տեղերում:

Արձանագրենք սակայն, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման և իրականացման հարցում, մեր կարծիքով, առկա է խնդրահարույց մի հարց, որին մանրամասն անդրադառնանք ստորև:

Ակնհայտ է, որ պետական գաղտնիքի պաշտպանությունը բավականաչափ բարդ գործընթաց է, որն առնչվում է տարաբնույթ խնդիրների՝ քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, իրավական, ֆինանսական և այլն: Կարծում ենք, անհերքելի է նաև այն, որ նշված խնդիրները հնարավոր է ճիշտ համադրել և լուծել միայն ինքնին պետական գաղտնիքի և դրա պաշտպանության հարցերում պատշաճ գիտական մոտեցում դրսևորելու և մասնագիտական պատրաստվածություն և ապահովելու պարագայում: Ասվածն առավել կարևորվում է պետական գաղտնիքի պաշտպանությունը որպես պետության գործառնայն դիտարկելու տեսանկյունից: Մինչդեռ ՀՀ պետական մարմինների համակարգում չկա պետական գաղտնիքի պաշտպանության ուղղակի գործառնայնությունով օժտված համապետական որևէ մասնագիտացված մարմին կամ պաշտոն, իսկ ՀՀ իրավական համակարգը գործող որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի համար չի սահմանում այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում առանձին հիմնարկ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձեռնարկությունների գործունեության համաձայնեցումն ու համակարգումը, ոլորտի օրենսդրության կատարելագործումը, կառավարության կողմից ծրագրերի, նորմատիվ իրավական ակտերի մշակմանը մասնագիտական օժանդակություն ցուցաբերելը, ինչպես նաև պետական գաղտնիքի պաշտպանության հետ անմիջականորեն չառնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետական գաղտնիքի տարածման հետևանքով պատճառված վնասի որոշումը, ինչն առ այսօր լուծված չէ, կադրերի պատրաստման կազմակերպումը, ուսումնական ծրագրերի մշակումը և բազմաթիվ այլ հարցեր, որոնք կարիք ունեն մասնագիտական մոտեցման: Հասկանալի է, որ կառավարությունը, հանդիսանալով քաղաքական մարմին և համարված լինելով քաղաքական (ոչ մասնագիտական) պաշտոններով, վերոհիշյալ խնդիրներն իրականացնել չի կարող, և նրա համար նման լիազորություններ սահմանված էլ չեն: Իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված միակ մասնագիտական մարմինները գործում են սուկ առանձին հիմնարկ-ձեռնարկությունների շրջանակներում՝ «հաշվի առնելով իրենց կողմից տարվող աշխատանքների առանձնահատկությունները» (Օրենքի 19-րդ հոդված):

Կառավարման տեսությունից հայտնի է այն կարևոր դերը, որ արդյունավետ կառավարման գործում հատկացված է կառավարման մարմիններին, դրանց իրավասությունների սահմանմանը, առանձին մարմինների իրավասությունների հստակ տարանջատմանը: Ցավոք, ՀՀ օրենսդրության մեջ չկա առանձնացված նորմ, որը համապարփակ ձևով սահմաներ պետական գաղտնիքի պաշտպանության մարմինները և դրանց իրավասությունները: Մինչդեռ մի շարք երկրներում ոչ միայն սահմանված են այդպիսի մարմիններ իրենց իրավասություններով, այլև դրանք իրավամբ դիտված են որպես մեկ միասնական համակարգի՝ «պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգի» կառուցվածքային տարրեր, որտեղ ցանկացած համակարգին բնորոշ ձևով հստակ սահմանված են ինչպես յուրաքանչյուր մարմնի իրավասությունները, այնպես էլ այդ մարմինների ստորակարգությունն ու փոխգործակցությունը մեկ ընդհանուր՝ պետական գաղտնիքի պաշտպանության նպատակով, համակարգ, որն ի վիճակի է նորմատիվ իրավական կարգավորման և վերահսկողական գործառնություններով ազդելով այլ պետական մարմինների վրա՝ ապահովել պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ողջ համալիրի իրականացումը: Կարծում ենք՝ Հաստատանի պարագայում հնարավոր չէ խոսել նման համակարգի գոյության մասին:

Ավանդը հիմնավորելու և մեր շարադրանքն ավելի առարկայական դարձնելու համար փորձենք ներկայացնել ԱՊՀ տարածաշրջանի մյուս երկրներում գործող պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգերը՝ նկատի ունենալով այդ երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության իրավական կարգավորման որոշակի ընդհանրությունները Հայաստանի հետ:

Ռուս հետազոտող Ռ.Վ.Կորսունը, ուսումնասիրելով ԱՊՀ երկրների պետական գաղտնիքի

մասին օրենսդրությունները, եկել է այն եզրահանգման, որ տարբեր երկրներում գործում են պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների տարբեր համակարգեր, ինչը բացատրում է դրանցում պետական կառավարման համակարգերի, վերջիններիս ձևավորման ավանդույթների, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ծավալների, դրանց հետ առնչվող սուբյեկտների քանակի և այլ տարբերություններով:

Պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների առավել ընդարձակ համակարգ է սահմանված ՌԴ օրենսդրությամբ: Ռ.Վ.Կորսունը, իր աշխատանքում անդրադառնալով Ռուսաստանում պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգին, նշում է. «Պետական գաղտնիքի մասին օրենքի ընդունմամբ Ռուսաստանի Դաշնությունում ձևավորվել է պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների եռաստիճան համակարգ, որի վերին օղակը զբաղեցնում է մասնագիտացված կոլեգիալ մարմինը, որը համակարգում է պետական գաղտնիքի պաշտպանություն իրականացնող պետական իշխանության դաշնային մարմինների և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների՝ պետական գաղտնիքի մասին դաշնային օրենսդրության կատարումն ապահովող պետական ծրագրերի, նորմատիվ իրավական ակտերի և մեթոդական փաստաթղթերի մշակման և կենսագործման նպատակով իրականացվող գործունեությունը»<sup>8</sup>: Խոսքն այստեղ ՌԴ պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովի մասին է, որի կազմն իսկ կարող է վկայել այն բարձր տեղի ու դերի մասին, որ հանձնաժողովը զբաղեցնում է պետական իշխանության մարմինների համակարգում: Այսպես՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ռուսաստանի տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայության տնօրենը, նախագահի տեղակալների պաշտոնները՝ Անվտանգության դաշնային ծառայության տնօրենի և պաշտպանության նախարարի առաջին տեղակալները, հանձնաժողովի կազմի մեջ են մտնում նաև տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ՝ ղեկավարների կամ առաջին տեղակալների (տեղակալների) մակարդակով, իսկ հանձնաժողովի ընդհանուր ղեկավարումը, կանոնադրության համաձայն, իրականացնում է Ռուսաստանի Դաշնության նախագահը<sup>9</sup>:

Եռաստիճան այս համակարգի երկրորդ աստիճանում այն մարմիններն են, որոնք իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում միջգերատեսչական լիազորություններ: Այդպիսիք են՝ Անվտանգության դաշնային ծառայությունը, Արտաքին հետախուզության ծառայությունը, Տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայությունը և այլն:

Երրորդ աստիճանում պետական գաղտնիքների օգտագործմամբ աշխատանքներ կատարող պետական իշխանության մարմիններն են, հիմնարկները, ձեռնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական գաղտնիքի

պաշտպանության գծով դրանց կառուցվածքային ստորաբաժանումները:

Նշենք նաև, որ Ռ-Դ օրենսդրությամբ հստակ տարանջատված են պետական գաղտնիքի պաշտպանության բոլոր մարմինների իրավասությունները՝ դրանց կրկնումը բացառելու նպատակով, իսկ ողջ համակարգի վերին օղակում, ինչպես նշեցինք, Պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովն է, որը կանոնադրությամբ օժտված է շուրջ քսան միջգերատեսչական (համապետական բնույթի) լիազորություններով, որոնք ընդհանրական ձևով կարելի է ներկայացնել այսպես՝ պետական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն, ավելացրած՝ օրենսդրության կատարելագործման խնդիրները:

Վրաստանում, ըստ էության, գործում է Ռ-Դ համակարգի պարզեցված տարբերակը: Այստեղ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, «պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված կազմակերպչական միջոցառումներն ապահովող գործադիր իշխանության հատուկ լիազորված մարմին է հանդիսանում Պետական գաղտնիքի պաշտպանության պետական տեսչությունը, որը կանգնած է պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգի վերին օղակում: Հաջորդիվ՝ Վրաստանի ներքին գործերի նախարարությունն է (հակահետախուզության ղեկավարումն ենում) և հետախուզության պետական ղեկավարումն ենում, որոնցից առաջինը «գործադիր իշխանության մարմին է, որն իրականացնում է պետական գաղտնիքի պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցառումները և վերահսկում է դրանց կատարումը», իսկ երկրորդը՝ «գործադիր իշխանության հիմնարկություն է, որն իրականացնում է Վրաստանի սահմաններից դուրս տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, կազմակերպությունների և գործուղման մեջ գտնվող, իրենց գործունեության բնույթով պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ կապված անձանց կողմից պետական գաղտնիքի ռեժիմի պահպանության ապահովման միջոցառումներ»<sup>10</sup>: Վրաստանի պետական գաղտնիք տնօրինող մյուս մարմիններն օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում են պետական գաղտնիքի պաշտպանության միջոցառումների իրականացումը:

Գործադիր իշխանության համակարգում պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմիններ են գործում նաև Մոլդովայի (Պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովը), Ղազախստանի (Ղազախստանի Հանրապետության պետական գաղտնիքի պաշտպանության լիազորված պետական մարմինը), Տաջիկստանի (կառավարությանն առընթեր Պետական գաղտնիքի պաշտպանության գլխավոր վարչությունը) հանրապետություններում<sup>11</sup>:

Ուկրաինայի օրենսդրությամբ թեև նախատեսված չէ պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմին, սակայն սահմանված է գաղտնիքների պաշտպանության

հարցերով փորձագետների ինստիտուտը, իսկ երկրի Անվտանգության ծառայությունը օժտված է միջգերատեսչական լայն իրավասություններով, մասնավորապես՝ համակարգում է վերոնշյալ փորձագետների գործունեությունը, վերահսկում է գաղտնիքի ռեժիմի ապահովումը և այդ նպատակով իրականացնում հակահետախուզական գործունեություն: Ուկրաինայի օրենսդրությամբ սահմանված է նաև, որ պետական մյուս մարմինները (այդ թվում՝ իրավապահ մարմինները) պարտավոր են գաղտնիքների հետ աշխատանքներ կատարող սուբյեկտների նկատմամբ իրենց գործողությունները համաձայնեցնել Անվտանգության ծառայության հետ՝ գաղտնիքների արտահոսքը կանխելու նպատակով:

ԱՊՀ-ի մյուս երկրների (մասնավորապես՝ Դրոզդասանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի) պետական ապարատներում նույնպես առանձնացված չեն պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմիններ: Այս երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում հիմնական դերակատարներ են հանդիսանում անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմինները՝ տարբեր ծավալի լիազորություններով: Հետաքրքրական է, սակայն, որ այս երկրների պետական գաղտնիքի մասին օրենքներով հստակ սահմանված են պետական գաղտնիքի պաշտպանության գործում անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմինների իրավասությունները:

Վերադառնալով Հայաստանի օրինակին՝ դարձյալ նշենք, որ մեր հանրապետությունում ևս պետական գաղտնիքի պաշտպանության համակարգում ձևավորված չէ համապետական մասնագիտացված մարմին (պաշտոն)՝ միջգերատեսչական այնպիսի իրավասություններով, որոնք հնարավորություն կտային արդյունավետորեն լուծել վերն առաջադրված խնդիրները: Այնուամենայնիվ, վերլուծելով ՀՀ պետական մարմինների համակարգը և այս բնագավառում նրանց իրավասությունները, կարելի է արձանագրել, որ մեզանում ևս պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում առանցքային դերակատարություն ունի ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման մարմինը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: Ըստ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 28.12.2001թ.)՝ ազգային անվտանգության մարմինները «Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության և պետության անվտանգությունը» («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 2):

Պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում ազգային անվտանգության ծառայության մարմինների հիմնական իրավասությունները ևս ամրագրված են այդ օրենքով, որի 15-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններն իրավունք ունեն «օրենքով սահմանված կարգով տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնել պետական վերահսկողու-

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն»։ Նույն օրենքի 16-րդ հոդվածի ժ) կետի համաձայն՝ նրանք պարտավոր են «մասնակցել պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վերահսկել պետական մարմիններում, զինվորական կազմավորումներում, կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանումը, սահմանված կարգով միջոցառումներ իրականացնել՝ կապված քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տալու հետ»։ Նկատենք, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նույնպես պետական գաղտնիքի պաշտպանության գործում ազգային անվտանգության ծառայության մարմիններին վերապահված է վերահսկողության գործառույթը. «Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման միջգերատեսչական վերահսկողությունը հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառի կառավարող պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» (Օրենքի 25-րդ հոդված)։

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությամբ պետական գաղտնիքի պաշտպանության գործում ազգային անվտանգության մարմիններն ընդհանուր առմամբ օժտված են հետևյալ հիմնական իրավասություններով.

- պետական գաղտնիքի պաշտպանության նկատմամբ միջգերատեսչական վերահսկողության իրականացում,
- մասնակցություն պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ուղղությամբ միջոցառումների մշակմանն ու իրականացմանը,
- մասնակցություն քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տալու գործընթացին։

Ավելացնենք, որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովման անհրաժեշտությունը» դիտվում է որպես հակահետախուզական գործունեության հիմք («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 2-րդ մասի գ) կետ)։ Նկատի ունենալով, որ հակահետախուզական գործունեությունը, որն իրականացվում է հիշյալ օրենքով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով և ազգային անվտանգության մարմինների ներքին գերատեսչական իրավական ակտերով սահմանված կարգով, մշտապես իրականացվող գործունեություն է՝ կապված օտարերկրյա հետախուզություններից սպասվող վտանգների մշտական առկայության հետ, ուստի պետական գաղտնիքի պաշտպանությունը նույնպես մշտապես իրակա-

նացվող գործունեություն է։

Ինչպես տեսնում ենք՝ ԱԱԾ-ի իրավասությունները բավականաչափ լայն են, սակայն ըստ էության դրանք ևս բավարար չեն այն որպես պետական գաղտնիքի պաշտպանության մասնագիտացված մարմին դիտելու համար։ Խնդիրն այն է, որ մասնագիտացված մարմինն օժտված պետք է լինի նաև այլ՝ ազգային անվտանգության մարմիններին ոչ այնքան բնորոշ իրավասություններով։ Փորձենք մանրամասնել ասվածը։

Պետական գաղտնիքի պաշտպանությունը պետության գործունեության ուղղություն է, գործառույթ (ընդ որում՝ մշտապես իրականացվող) նույն այդ պետության, հասարակության և անհատի հանդեպ։ Հասկանալի է, որ պետական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է համաձայն օրենսդրության պահանջների, որոնք պարտադիր են կատարման բոլոր սուբյեկտների կողմից, հետևաբար՝ պետական գաղտնիքների պաշտպանության գործում միասնական պետական քաղաքականությունն ու դրա արդյունավետությունն ապահովված կարելի է համարել, եթե հետևել միայն նշված սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների կատարմանը։ Սակայն օրենսդրության գործնական կիրառման փորձն ինչպես այս, այնպես էլ այլ ոլորտներում ցույց է տալիս, որ առանց գործի պատշաճ կազմակերպման, փոխգործողությունների համաձայնեցման և համակարգման (այսինքն՝ կառավարման), նշված պահանջների գործնական կիրառման ընթացքում կարող են ի հայտ գալ և հաճախ ի հայտ են գալիս լուրջ բացթողումներ։ Այսպես՝ առկա են մնում այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝

- պետական գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կատարելագործումը,
- օրենսդրության գործնական կիրառության ընթացքում ի հայտ եկած թերությունների համապարփակ վերլուծությունը,
- դրա հիման վրա առաջարկություններ ներկայացնելը,
- պետական գաղտնիքի պաշտպանությամբ զբաղվող պաշտոնատար անձանց պատրաստումը, վերապատրաստումը, որակավորման բարձրացումը։

Եթե, դուրս գալով պետական գաղտնիքի գուտ պաշտպանության շրջանակներից, փոքր-ինչ ընդլայնենք հարցերի շրջանակը, ապա պետք է նշենք նաև այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝

- պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակումը և վերամշակումը,
- պետական գաղտնիքի տարածման հետևանքով պետությանը, ինչպես նաև տեղեկությունը գաղտնագրելու հետևանքով տեղեկության սեփականատիրոջը հասցված վնասի չափերը որոշելու կարգը և այլն։

Սրանք հարցեր են, որոնց լուծումը հնարավոր է միայն մասնագիտական մոտեցմամբ և այնպիսի մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից, որ ստեղծված է (նշանակված է) հենց այդ նպատակով։ Ուստի, մեր կարծիքով, նպատակահարմար է առանձին նորմով սահմանել պետական գաղտնիքի



պաշտպանության մարմինները և դրանց իրավասությունները, մասնագիտացված մարմնի բացը լրացնելու համար կամ ստեղծել նման հատուկ մարմին, կամ ազգային անվտանգության մարմիններն օրենսդրությամբ օժտել լրացուցիչ լիազորություններով, մասնավորապես՝

1. պետական մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված գործունեության համակարգում,

2. պետական գաղտնիքի պաշտպանության իրավական կարգավորման և պետական գաղտնիքի պաշտպանության համակարգի կատարելագործման վերաբերյալ ՀՀ նախագահին, վարչապե-

տին առաջարկությունների ներկայացում,

3. պետական գաղտնիքն այլ պետությանը կամ միջազգային կազմակերպությանը փոխանցելու հնարավորության հարցի քննարկում և այդ կապակցությամբ մասնագիտական (փորձագիտական) եզրակացության տրամադրում կառավարությանը,

4. պետական գաղտնիքի պաշտպանության ուղղությամբ աշխատանքներ իրականացնող մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործունեության կազմակերպում և այլն:

<sup>1</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1974թ., էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս «Юридическая энциклопедия». М., 1997. С. 292.

<sup>3</sup> Տե՛ս Котенев А.А., Лекарев С.В. «Современный энциклопедический словарь по безопасности». М., 2001. С. 449.

<sup>4</sup> Տե՛ս մասնավորապես Кнорринг В.И. «Теория, практика и искусство управления». М., 2007. С. 50, Միրզոյան Վ. «Կառավարման փիլիսոփայություն», Եր., 2007, էջ 11-13:

<sup>5</sup> Տե՛ս [www.medialaw.ru](http://www.medialaw.ru) կայքի նշված էջը:

<sup>6</sup> Տե՛ս [www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm](http://www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm):

<sup>7</sup> Տե՛ս Корсун Р.В. «Правовой институт государственной тайны и его отражение в законодательстве государств, входящих в СНГ». Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2007. С. 146.

<sup>8</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 137:

<sup>9</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 138, տես նաև՝ «Положение о Межведомственной комиссии по защите государственной тайны», «Государственная тайна и ее защита в Российской Федерации». Под общ. ред. Вуса М.А. и Федорова А.В. СПб, 2007, հավելված 2, էջ 675:

<sup>10</sup> Տե՛ս [www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm](http://www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm):

<sup>11</sup> Տե՛ս [www.medialaw.ru](http://www.medialaw.ru) կայքի նշված էջերը:

РЕЗЮМЕ

*Проблемы организации защиты государственной тайны в Республике Армения*

В статье автор анализирует проблемы правового регулирования организации защиты государственной тайны в РА и приходит к выводу, что организация защиты государственной тайны не нашла должного отражения в законодательстве как отдельная функция государства. В законодательстве РА организация защиты государственной тайны рассматривается только на уровне отдельных органов, учреждений, предприятий и организаций, что существенно снижает важность проблемы и чревато опасностью возникновения разногласий, несогласованных действий. Этому также способствует отсутствие в системе государственных органов специализированного органа или должности по защите государственной тайны, наделенного полномочиями курации и систематизации действий в указанной области. В законодательстве не закреплена также норма, определяющая органы защиты государственной тайны и их полномочия в целостном виде.

В статье проблема обсуждается в контексте сопоставления законодательства стран СНГ и РА.

SUMMARY

*The problems of organization of the State Secret Defence in the Republic of Armenia*

The author analyzes low regulation of the organization of state secret defence and concludes that in the legislation it doesn't have proper reflection as a state function, it is considered only in the level of establishment-enterprises and organizations and in the level of their leaders, which reduces the importance of the problem and it is full of the different kinds of disagreement in the field. The fact in the system of the national organs there is not national-wide any specialized organ or position of state secret defence, which has authority of monitoring and systematization on other organs, which sets up the defence of national defence and its jurisdictions.

In the article the problem is considered in the context of comparison of legislation on UIC and RA.

**ՄԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի  
փորձագիտական վերլուծական բաժնի գլխավոր  
մասնագետ

**ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԻՄԱՍՏՈՎ**

«Սահմանադրական դատարանի մասին»  
ՀՀ օրենքի<sup>1</sup> 63րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝  
«Իրավական ակտի սահմանադրականությունը  
որոշելիս սահմանադրական դատարանը գնահա-  
տում է ինչպես այդ ակտը, այնպես էլ **ձևավորված  
իրավակիրառական պրակտիկան**»: Մեր կարծիքով  
օրենսդիրն ամրագրել է այս պահանջը՝ երաշխավո-  
րելու սահմանադրական արդարադատության ամ-  
բողջականությունը և սահմանադրական դատարա-  
նի կողմից իր առջև դրված խնդիրների արդյունա-  
վետ լուծումը: Որպեսզի առավել տեսանելի լինի  
սահմանադրական արդարադատության շրջանակ-  
ներում իրավակիրառական պրակտիկայի ուսում-  
նասիրման խիստ կարևորությունը և անհրաժեշտու-  
թյունը Սահմանադրության գերակայության ու ան-  
միջական գործողության երաշխավորման հարցում,  
անհրաժեշտ է անդրադառնալ դրա էությանը,  
առանձնահատկություններին, դրա՝ հասարակա-  
կան հարաբերությունների իրավական կարգավոր-  
ման վրա ունեցած ազդեցությանը: Վերջինով է  
առավելապես պայմանավորված իրավակիրառա-  
կան պրակտիկայի նշանակությունը:

Գ. Ռիպերը նշում է. «Օրենքը դեռ ողջ իրա-  
վունքը չէ: Այն իր կյանքի ընթացքում խուսափում է  
իր ստեղծողի կողմից ճնշումներից, իսկ եթե այն կա-  
ռավարում է դատավորներին, ապա իրավաբանա-  
կան միջավայր է թափանցում դատական իշխանու-  
թյան միջոցով, որը պարտավոր է կատարել դրա  
պահանջները, ստիպել դրան ապրել»<sup>2</sup>:

Ն.Ն. Վոպլենկոյի և Ա.Պ. Ռոժնովի կողմից  
իրականացվել է հիմնարար հետազոտություն իրա-  
վակիրառական պրակտիկայի վերաբերյալ, որն իր  
արտացոլումն է գտել համանուն մենագրության  
մեջ<sup>3</sup>, որում տեղ գտած գիտական վերլուծությունը և  
եզրահանգումները բազմիցս կկիրառվեն սույն հոդ-  
վածի շրջանակներում:

Իրավակիրառական պրակտիկայի վերա-  
բերյալ տրվում են տարաբնույթ մեկնաբանություն-  
ներ: Մասնավորապես, էլեկտրոնային իրավաբա-  
նական բառարանում տրվում է հետևյալ բնորոշու-  
մը. «Իրավակիրառական պրակտիկան դատավոր-  
ների և այլ իրավակիրառողների՝ համընդհանուր  
ճանաչում ստացած, իրավաբանական նշանակու-  
թյուն ունեցող վարքագիծն է՝ հիմնված իրավական  
նորմերի ձևավորված մեկնաբանման, դրանց բացե-  
րի և անհատականությունների լրացման վրա»<sup>4</sup>:

Ն.Ն. Վոպլենկոյի և Ա.Պ. Ռոժնովի բնորոշ-  
մամբ իրավակիրառական պրակտիկան հասարա-  
կական հարաբերությունների իշխանական անհա-

տական կարգավորման փորձն է, որը, ի լրումն իրա-  
վական կարգավորման նորմատիվ համակարգի, մի  
շարք դեպքերում հանդիսանում է իրավաբանական  
գործերի լուծման հիմքը<sup>5</sup>: Նրանց կարծիքով դատա-  
կան պրակտիկայի՝ «որպես դատական գործունեու-  
թյան բաղադրատարրի և արդյունքի» կայացման  
մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ  
կոնկրետ գործով օրենքի կիրառման և արդարադա-  
տական որոշում կայացնելու համար դատարանին  
անհրաժեշտ է մեկնաբանել օրենքը, հստակեցնել  
դրա իմաստը, կոնկրետացնել օրենքի՝ բառերի ձևով  
արտահայտված հասկացությունները և դրանց արդ-  
յունքում ստեղծել իրավադրույթ, որը թույլ կտա ճա-  
նաչել օրենքի իմաստը և այն կիրառել կոնկրետ  
դեպքում: Սակայն պրակտիկ գործունեության արդ-  
յունքը միայն իրավադրույթներով չի սահմանա-  
փակվում<sup>6</sup>:

Անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգա-  
մանքը, որ պրակտիկան պարզապես գործունեու-  
թյուն չէ՝ այն գիտակցված, նպատակատիրական  
գործունեություն է:

Իրավակիրառման անհրաժեշտությունը ծա-  
գում է այն ժամանակ, երբ իրավունքի իրացման  
գործընթացի փուլերից մեկում պահանջվում է պե-  
տաիշխանական լիազորություններով օժտված  
իրավասու մարմնի միջամտությունը:

Գրականության մեջ որպես իրավակիրա-  
ռական պրակտիկայի հիմնական տարրեր առանձ-  
նացվում են հետևյալները՝

- մեկնաբանման նախադեպերը,
- իրավունքի կիրառման նախադեպերը,
- գործարար սովորույթը,
- կոնկրետացնող դատողությունները և են-  
թաօրենսդրական ակտերը,
- ղեկավար պարզաբանումները և այլն<sup>7</sup>:

Ա.Բ. Վենգերովն առանձնակի ընդգծում է,  
որ *մեկնաբանման նախադեպը* չի նույնանում երկրի  
բարձրագույն դատական ատյանների կողմից յու-  
րաբանչյուր գործով օրենքի պաշտոնական կազու-  
ալ մեկնաբանման հետ, ինչը շատ տարածված է:  
Հենց «նախադեպ» օրինակ և դրանով իսկ հասարա-  
կական հարաբերությունների լրացուցիչ կարգավո-  
րիչ լինելու հնարավորություն՝ դրան տալիս են  
հետևյալ հատկանիշները՝

1. մեկնաբանվող նորմի իմաստին և իրա-  
վունքի հիմնական սկզբունքներին համապատաս-  
խանությունը,
2. դատական պրակտիկայի կողմից տեղի  
ունեցած մեկնաբանման ընդունումը, այսինքն՝ հա-

մանման գործերով մի անգամ օրենքի ձևավորված ընկալման կիրառման բազմակիությունը,

3. մեկնաբանման ակտում իրավունքի նորմը՝ հայտնի նորմը, ընդհանուր բնույթի պատկերացումը, պարզաբանելու և կիրառելու առնչությամբ որոշակի դրույթի մշակումը, որը միջնորդավորված է հասարակական հարաբերությունների կրկնվող, էական առանձնահատկություններով,

4. մեկնաբանման նախադեպին այն հրապարակելու ձևով արտաքին դրսևորում տալը<sup>8</sup>:

Ընդհանրացնելով իրավական նորմի մեկնաբանման նախադեպի բնույթի վերաբերյալ գիտության մեջ առկա դատողությունները՝ նշված աշխատանքում հեղինակներն առանձնացնում են դրա հետևյալ հիմնական հատկանիշները՝

1. Մեկնաբանման նախադեպը հանդիսանում է, որպես կանոն, կոնկրետ իրավակիրառական գործը լուծելիս կիրառման ենթակա իրավական նորմի կազույ պատկերացման արդյունք, իրավակիրառական մեկնաբանումից ծնված և դրանով պայմանավորված արտադրանք<sup>9</sup>:

Կոնկրետ գործի շրջանակներում մեկնաբանման արդյունքում իրավակիրառող մարմինը՝ առավելապես դատարանը, վերջնական և հստակ բովանդակություն է հաղորդում իրավական նորմին: Որպես մեկնաբանման նախադեպ, այն զննատեսություն համար անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչքանով է այն վերաժվում իրավահարաբերություններ կարգավորողի՝ հետագայում իր կամ այլ դատարանների կողմից համանման գործեր լուծելիս:

Իրավակիրառական պրակտիկայի, մասնավորապես, դատական պրակտիկայի կարևորության վերաբերյալ հիշատակման է արժանի Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանի 08.04.2007 թվականի որոշումը, որտեղ վերջինս իրավական դիրքորոշում է արտահայտել, որ դատական պրակտիկան անխուսափելիորեն հանգեցնում է զարգացման և միշտ առկա է հնարավորությունը, որ այն կարող է լրացվել նոր մեկնաբանողական եզրահանգումներով կամ նույնիսկ ամբողջությամբ փոխվել:

Դատական որոշումների կայացման պրակտիկայի փոփոխությունները ցանկալի չեն, հատկապես բարձրագույն դատարաններում, որոնց խնդիրն է միասնականացնել ստորադաս դատարանների գործունեությունը, քանի որ դրանք խախտում են իրավունքի գերակայության սկզբունքը, մասնավորապես, դատական որոշում կայացնելու կանխատեսելիության սկզբունքը: Այդ պատճառով ներկա կարգավորումը սահմանադրական դատարանին տալիս է առկա դատական պրակտիկայից տարբերվող այլ պարտադիր ուժ ունեցող որոշում ընդունելու իրավասություն, իսկ դատարանները պարտավոր են զգույշ և զուսպ վարվել դատական պրակտիկայի տարբեր դրսևորումների հետ ու, թեև նման ընթացակարգ օրենքով նախատեսված չէ, հատուկ դեպքերում շեղվել կանխատեսելիության սկզբունքից՝ ներկայացնելով հիմնավոր պատճառներ պրակտիկայից տարբերվող որոշում կայացնելու համար<sup>10</sup>:

2. Ա.Բ.Վենգերովի և Պ.Ա. Գուկայի կարծիքով մեկնաբանման նախադեպը կոնկրետ գործով ընդունված իրավակիրառական (առավելապես դատական) որոշումն է, որն ստեղծում է օրենքում (իրավունքի նորմում) բովանդակվող իմաստի ավելի հս-

տակ ձևակերպում<sup>11</sup>: Սրա արդյունքում տրվում է մեկնաբանման նախադեպի հետևյալ բնորոշումը.

«Մեկնաբանման նախադեպն ինչպես իրավակիրառողի կողմից պետական կամքի ավելի ճիշտ ընկալումն է, որն իր տառացի (ճիշտ, համարժեք) արտացոլումը չի ստացել նորմատիվ ակտի տեքստի բառային շարադրանքի մեջ, այնպես էլ պետական կամքի ավելի ճիշտ մեկնաբանությունն է, դրա հարմարեցումը կոնկրետ իրավակիրառական իրավիճակի լուծման պահին իրավակիրառողի մոտ առկա և իրավունքի ավանդական իրավաբանական աղբյուրներում ամրագրված իրավական նորմերին<sup>12</sup>:

Իրավական նորմերի կիրառման ընթացքում առաջանում են իրավական կոլիզիաներ, որոնք իրավական կոմունիկացիայի ընթացքում ծագող խոչընդոտների տարատեսակ են: Իրավական կոլիզիաները լուծելու, իրավական կոմունիկացիան վերականգնելու ճանապարհները բավականին շատ են, որոշակի տեսակի վարքագծային իրավական կոլիզիաներ կարող են վերացվել միայն պետության իշխանական, լեգիտիմ և կոմունիկատիվ-իրավական գործունեության ճանապարհով<sup>13</sup>:

«Մեկնաբանությունը, - գրում է Ի.Ա. Իվանիկովը, - երևույթի էության մտավոր վերլուծության ճանապարհով նախկինում անհայտ ինչ-որ բանի բացատրությունն է կամ մեկնաբանությունը: Որպես անհատական պատկերացում հանդես եկող մեկնաբանությունը կարող է հետագա ճանաչման և հասկացության-եզրույթային լեզվական ձևակերպման գործընթացում վերաժվել իրավական նորմի»<sup>14</sup>:

Հեղինակներն ուշադրություն են դարձնում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ որոշ դեպքերում իրավունքը կիրառող մարմինները և դրանց պաշտոնատար անձինք նորմը մեկնաբանելիս առաջնորդվում են «արդարության և հավասարության մասին սեփական պատկերացումներով՝ ներկայացնելով դրանք որպես օրենսդրի մտադրություն»<sup>15</sup>:

3. Ինչպես արդարացիորեն նշում են որոշ հեղինակներ մեկնաբանման նախադեպի պարտադիր հատկանիշ է հանդիսանում դրա հրապարակումը, որը բացահայտում է նախադեպի տեղեկատվական բնույթը: Միայն այդ դեպքում է մեկնաբանման նախադեպը վերաժվում իրավունքի ոչ ավանդական աղբյուրի և հասարակական հարաբերություններ կարգավորողի<sup>16</sup>:

4. Մեկնաբանման նախադեպի իրավական նորմի նոր ընկալումն է, որը պարունակվում է օրինական ուժի մեջ մտած և վերադաս դատական ատյանների կողմից չբեկանված դատական որոշումներում<sup>17</sup>:

Ներկայումս անհնար է վիճարկել այն փաստը, որ դատական համակարգը, հետևաբար նաև դատավորները իրավունք ստեղծողի դեր են կատարում: Այնուամենայնիվ, դատավորների շարժում և «տուրք» առաքելության հայեցակարգը չի կարող հանգեցնել դատավորների՝ հնարավոր բարեփոխումների իրականացման կամ դատական ընդդատությանը վերապահված որոշ կատեգորիաների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ճանապարհով դատական համակարգը հասարակությունը վերափոխելու գործիքի վերաժելու իրավունքի ամրագրմանը<sup>18</sup>:

5. Մեկնաբանման նախադեպի կարգավորիչ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներուժը կայանում է ոչ միայն իրավակիրառական ակտում պարունակվող մեկնաբանման նորույթով և պահանջվածությամբ, այլ նաև դրա համոզիչ լինելով: Վերջինս առկա է, եթե իրավական նորմի նոր մեկնաբանությունը ա) տեղավորվում է պետության կողմից իրականացվող իրավակիրառական քաղաքականության շրջանակներում, բ) համապատասխանում է արդարության և համամարդկային արժեքների վերաբերյալ հասարակության ձևավորված պատկերացումներին, գ) համապատասխանում է դատավորների կամ իրավակիրառող մարմինների այլ պաշտոնատար անձանց պրոֆեսիոնալ իրավագիտակցությանը, դ) համապատասխանում է սահմանադրական և այլ ճյուղային օրենսդրության ընդհանուր հիմունքներին և սկզբունքներին, ե) կիրառման համար պարզ է և իրավակիրառող մարմնի պաշտոնատար անձի համար չի պահանջում որևէ էական մտավոր-կամային պայմաններ, զ) իրավակիրառական ակտում շարադրված է ձևական տրամաբանության օրենքներին համապատասխան, զգաստ, հետևողական և պրոֆեսիոնալ իմաստով «գեղեցիկ»<sup>19</sup>:

Վերոնշյալի առնչությամբ ուշագրավ է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴ-Ո665 որոշմամբ ցուցաբերած մոտեցումը, որում, մասնավորապես, փաստվում է. «Ինչպես վկայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վճռաբեկ դատարանների կայացրած որոշումների ուսումնասիրությունը, այդ դատական ատյանները ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1ին կետի 2րդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը մեկնաբանել են առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր.ի 14 և 15 հոդվածների և ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1ին կետի պահանջները: Եթե ընդհանուր իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1-ին կետի 2րդ պարբերության դիսպոզիցիան գույքողել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքացու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1ին կետի 2րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

Քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 2րդ պարբերության՝ նման ձևակերպմամբ առկայությունը և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը խոչընդոտում են իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների իրականացումը՝ դատական կարգով բողոքարկելու որոշակի ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցը, որի հետևանքով վտանգվում է արդարադատության մի ամբողջ ինստիտուտ»<sup>20</sup>:

Սահմանադրական դատարանը, ուսումնա-

սիրելով դատարանների՝ վիճարկվող նորմի վերաբերյալ ունեցած պատկերացումները, հանգել է այն համոզման, որ թեև նորմը հստակ չէ և այդ անհստակությունը դատարանները վերացրել են իրենց կողմից տրված մեկնաբանման միջոցով՝ դրանով իսկ որոշակի բովանդակություն տալով վիճարկվող նորմին, այնուամենայնիվ, այդ մեկնաբանությունը մատուցվում է իրավունքի սուբյեկտներին որպես օրենքի բովանդակություն, օրենսդրի կամք և այդ մեկնաբանությունը չի բխում Սահմանադրության պահանջներից:

Իրավակիրառական պրակտիկայի երկրորդ կարևորագույն տարրը հանդիսանում է *իրավական նորմի կիրառման նախադեպը*, որն ընդհանրացված տեսքով իրենից ներկայացնում է *իրավունքի որոշակի նորմերի ընկալման և կիրառման վերաբերյալ իրավաբանական պրակտիկայում մշակված ստանդարտացված կանոն*, որը դրսևորվում է 1) միասեռ կատեգորիայի գործերով այս կամ այն նորմը՝ դրա տեղի ունեցած սկզբունքային մեկնաբանման համատեքստում ստանդարտացված տիպային լայնատարած կիրառելու կամ 2) միասեռ կատեգորիայի գործերը լուծելիս նորմերի՝ տարերայնորեն ձևավորված և աստիճանաբար նույնականացված կիրառումն՝ առանց կոնկրետ գործով իրավունքի կիրառման անհատական ակտում դրան պաշտոնական կամ հեղինակավոր մեկնաբանություն տալու կամ 3) միասեռ գործերով սպացույցների նվազագույն թույլատրելի համակցության, գործի լուծման համար էական հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողության և, վերջին հաշվով, իրավակիրառական գործի փաստացի հիմքի իրավաբանական որակման համար դրանց բավարար և որակյալ լինելու պահանջներ մշակելու մեջ<sup>21</sup>:

Իրավակիրառական պրակտիկայի ձևավորման հաջորդ օղակը նախադեպությունից բխող իրավադրույթն է<sup>22</sup>: Սույն հոդվածի շրջանակներում չանդրադառնալով իրավադրույթի էությանն ու բովանդակությանը՝ կարևոր ենք համարում ընդգծել դրա կարևորությունն իրավահարաբերությունները կարգավորելիս: Ս. Ի Վիլյանսկիի կարծիքով դատական պրակտիկան դատարանների կողմից միասեռ կոնկրետ գործեր լուծելիս ձևավորված իրավական դրույթներն են, որոնք մշակվել են համապատասխան օրենքով սպառնիչ ամբողջականությամբ և հստակությամբ չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառելու արդյունքում<sup>23</sup>:

Կարելի է առանձնացնել իրավադրույթի բովանդակությունը բացահայտող հետևյալ ընդհանուր հատկանիշները.

- իրավադրույթն իրենից ներկայացնում է իրավաբանական նորմերի կիրառման առնչությամբ կայուն տիպային որոշում, որն իրականում ձեռք է բերում ընդհանուր կանոնի գծեր,
- իրավադրույթները կյանքի են կոչվում իրավակիրառման ոչ ստանդարտ իրավիճակներով՝ ա) գործող պոզիտիվ իրավունքի նորմերի անհստակությամբ, վերացականությամբ և չափազանց ընդհանրացվածությամբ, բ) իրավունքի և օրենքի բացով, գ) իրավունքում համեմատաբար որոշակի դիսպոզիցիաների և սանկցիաների գոյությամբ, որտեղ կոնկրետ իրավիճակի լուծումը դրվում է իրավական նորմը կիրառող մարմնի կամ պաշտոնատար անձի հա-

www.lawinstitute.am

յեցողությունից կախվածության մեջ, դ) տեքստի մեջ չափազանց վերացական իրավական նորմերի առկայությամբ, այսինքն՝ «գնահատողական հասկացությունները», ե) «իրավական վակուումի» իրավիճակի առկայությունը, որտեղ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների համար ակնհայտ է, բնագոյաբար կամ հստակ գիտակցվում է, որ այս կամ այն իրավիճակը, հասարակական հարաբերությունն սկզբունքորեն պետք է կարգավորվի իրավական նորմերով, միևնույն ժամանակ, ավանդական աղբյուրը բացակայում է օրենսդրի կողմից պետաիրավական կյանքի տեմպից և դինամիկայից հետմնալու պատճառով, գ) այսպես կոչված «օրենսդրի որակյալ լրության» իրավիճակի առկայությունը, երբ վերջինս հատուկ օրենքի տեքստում չի կարող կամ չի ցանկանում ներառել նորմի տարրերը բավարար հստակությամբ և ամբողջականությամբ:

Իրավադրույթի իրավակարգավորիչ ներուժն իրացվում է իր կողմից իրավական նորմի մասը կոնկրետացնելու միջոցով և այդ դեպքում իրավադրույթը կարելի է անվանել իրավաբանական նորմի մաս՝ ստեղծված իշխանական իրավաիրացման գործընթացում:

• Իրավադրույթն իրավաբանական պարտադիրությամբ օժտված վարքագծի կանոն է և այլն<sup>24</sup>:

Իրավակիրառական պրակտիկայի հաջորդ տարրը իրավակիրառական գործունեության սովորությունն է, որն իրենից ներկայացնում է դատարանի (դատավորի), իրավունքը կիրառող այլ մարմնի կամ պաշտոնատար անձի ստերեոտիպային, բազմաթիվ անգամներ կրկնվող վարքագիծ, որը կապված է իրենց էական հատկանիշներով համընկնող իրավակիրառական իրավիճակների լուծման նպատակով իրավական նորմերի իրացման հետ: Ընդ որում, իրավակիրառողների այս համընդհանուր ընդունված վարքագիծը հիմնվում է իրավական նորմերի ձևավորված մեկնաբանության կամ դրանց բացերը և անհստակությունները լրացնելու վրա, որոնք ամփոփված են սովորույթի մեջ և ստացել են իրավադրույթի կարգավիճակ<sup>25</sup>: Իրավակիրառական պրակտիկայի սովորությունը, որպես կանոն, ձևավորվում է բարձրագույն դատական ատյանների պրակտիկայում, ինչպիսիք են, օրինակ, սահմանադրական դատարանը, վճռաբեկ դատարանը և այլն:

Այսպիսով, սովորությունն իրավադրույթի «մաքրումն» է և դրա կազմակերպական ձևակերպվածությունը որոշակի բանաձևի տեսքով, որի հիման վրա հեղինակները պնդում են, որ այն իրավակիրառողների իրավական դիրքորոշման հստակ և կոնկրետ դրսևորումն է, որն իր մեջ միավորում է դոկտրինան, սովորույթը և պրակտիկան<sup>26</sup>:

Ամփոփելով իրավակիրառական պրակտի-

կայի վերաբերյալ ծավալուն վերլուծությունը՝ հեղինակները ուշադրություն են դարձնում բարձրագույն դատական ատյանների՝ հատկապես սահմանադրական դատարանի կողմից իրավաստեղծ մեկնաբանման վրա, որը չի նույնանում դատական մախադեայի հետ: Ըստ նրանց իրավաստեղծ մեկնաբանությունը ՌԴ բարձրագույն դատական ատյանների կողմից իրավական նորմերի դատասահմանադրական վերահսկողության կարգով վերջիններիս մեկնաբանման իրականացումն է, որի արդյունքում իրավաբանական ուժից զրկվում են սահմանադրական օրենսդրությանը հակասող իրավական նորմերը: **Իսկ դրա արդյունքում կայացված ակտն իր պատճառաբանական մասով դառնում է իրավունքի աղբյուր այնքանով, որքանով որ հստակեցնում և պարզաբանում է սահմանադրական տեքստի վերացական դրույթները**<sup>27</sup>:

Հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայի գործնական նշանակությունը և հետագայում դատական պրակտիկայում կանխատեսելիության և սահմանադրականության սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳ-ՈՂ75 որոշման եզրակացված մասում հակիրճ ձևակերպել է վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ նույն որոշման պատճառաբանական մասում հստակ շարադրելով նշված բովանդակության հիմնավորումները, և միաժամանակ նշել, որ «**Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը**»:

Ելնելով վերոգրյալից և վերլուծելով ՀՀ սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումները<sup>29</sup>՝ գտնում ենք, որ անխուսափելի է այն եզրահանգման գալը, որ օրենքի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս, սահմանադրական դատարանը ոչ միայն կարող է, այլ նաև պարտավոր է<sup>30</sup> գնահատել իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությունը, պարզել, թե ինչպես է իրավակիրառողն օրենքը մատուցում անձանց, ում վրա տարածվում է այդ օրենքի գործողությունը, քանի որ իրականում և փաստացի առկա հարաբերությունների որակից է կախված երկրում սահմանադրականության մակարդակը, և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միջոցով է ցանկալին դառնում իրական, անցնում սահմանադրությունից դեպի սահմանադրականություն ճանապարհը<sup>31</sup>, ինչը պետք է լինի բոլոր, առանց բացառության, իրավակիրառ մարմինների և, հատկապես, բոլոր դատարանների ամենօրյա բարեխիղճ աշխատանքը:

www.lawinstitute.am

<sup>1</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» (այսուհետ՝ ՄԳ մասին ՀՀ օրենք) ՀՀ օրենքի աղբյուրը՝ [http://www.concourt.am/armenian/law\\_cc/index.htm](http://www.concourt.am/armenian/law_cc/index.htm)  
<sup>2</sup> Տե՛ս Жан-Луи Бержель. *Общая теория права*. Под общей редакцией Даниленко В.И. Москва. NOTA BENE, 2000. С. 536.  
<sup>3</sup> Տե՛ս Вовленко Н.Н., Рожнов А.П. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004.  
<sup>4</sup> Տե՛ս <http://dic.academic.ru/dic.nsf/lower/17411>

- <sup>5</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 113.
- <sup>6</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 66.
- <sup>7</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 114-115.
- <sup>8</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 117.
- <sup>9</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 119.
- <sup>10</sup> Տե՛ս Ռոդոնյան աղբյուրը՝ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) .CODICES» տեղեկատու համակարգ՝ CZE-2007-1-005, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>
- <sup>11</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 123-124.
- <sup>12</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 130.
- <sup>13</sup> Տե՛ս Поляков А.В. Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода, Санкт-Петербург, Изд-вом Санкт-Петербургского государственного университета, 2004. С. 792.
- <sup>14</sup> Տե՛ս Чепурнова Н.М., Серегин А.В. Теория государства и права. Учебное пособие, Москва, 2008. С. 333.
- <sup>15</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 131.
- <sup>16</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 132-133.
- <sup>17</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 138-139.
- <sup>18</sup> Տե՛ս Жан-Луи Бержелль, *Общая теория права*. Под общей редакцией Даниленко В.И. Москва, NOTA BENE, 2000. С. 536.
- <sup>19</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 139.
- <sup>20</sup> Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-665.htm>
- <sup>21</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 146-147.
- <sup>22</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 147.
- <sup>23</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 147.
- <sup>24</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 160.
- <sup>25</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 172.
- <sup>26</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 174.
- <sup>27</sup> Տե՛ս Վոլլենկո Н.Н., Рожнов А.П. Правоприменительная практика: понятие, основные черты и функции, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 192.
- <sup>28</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-975 որոշումը, աղբյուրը՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-975.pdf>.
- <sup>29</sup> Տե՛ս ՍԳՈ-665, ՍԳՈ-753, ՍԳՈ-844, ՍԳՈ-930, ՍԳՈ-943 որոշումները:
- <sup>30</sup> Տե՛ս Եթե նույնիսկ օրենքով մնան պահանջ չնախատեսվի, դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ սահմանադրական արդարադատության համար այդ կենսական կարևոր նշանակություն ունեցող պահանջը հաշվի առնելու համար:
- <sup>31</sup> Տե՛ս Арутюнян Г. *Слагаемые конституционализма: верховенство права, стабильное развитие*, Конституционное правосудие. Выпуск 2(52)2011. Ереван 2011. С. 16.[http://www.concourt.am/armenian/con\\_right/2.52-2011/vestnik52.pdf](http://www.concourt.am/armenian/con_right/2.52-2011/vestnik52.pdf)

## РЕЗЮМЕ

**Конституционно-правовое содержание правоприменительной практики в контексте Закона РА о Конституционном Суде**

В рамках конкретного дела, в результате толкования, правоприменительный орган, в основном суд, формулирует окончательное и точное содержание правовой нормы. Чтобы оценить это как прецедент толкования, нужно иметь в виду, насколько такое толкование становится регулятором правоотношений в тех случаях, когда суды рассматривают подобные дела. Судебная практика - это правовые положения, которые сформировались в результате рассмотрения судами однородных дел.

Акты высших судебных инстанций со своими мотивирующими частями становятся источниками права настолько, насколько конкретизируют и разъясняют абстрактные положения конституционного текста.

## SUMMARY

**The notion of the "law application practice" in the context of the Law of RA "On the Constitutional Court"**

In frames of a specific case, a law enforcement authority (generally a court) interpreting the law formulates definitive and precise meaning of a legal norm. In order to treat it as a precedent of interpretation, one needs to take into consideration to what extent this interpretation applies to legal relationships in other cases of similar nature tried at the court of law. Judicial practice is comprised of legal positions elaborated as a result of adjudication of cases of the same category. The acts of highest judicial authorities with their motivating parts become the source of law to the degree to which they specify and interpret abstract provisions of the text of Constitution (or constitutional text).

### ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի  
առաջին բաժնի պետ,  
Երևանի «Գլաժոք» համալսարանի իրավագիտության  
ամբիոնի հայցորդ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄԸ

Իրավական կարգավորումը և իրավունքը մարդկային, հասարակական ֆեոնոմեններ են: Իրավունքը ստեղծվում է մարդկանց կողմից, գործում է մարդկանց միջոցով և մարդկանց համար: «Իրավունքը նման չէ այսպես կոչված ֆիզիկական բնական ուժերին, որոնք գոյություն ունեն մարդու գործողություններից անկախ, ինչ որ օբյեկտիվորեն մարդուն հակաենթադրվող: Ընդհակառակը, իրավունքը կարգ է՝ սահմանված մարդկանց կողմից իրենց համար: Իր գործողություններում մարդը ենթարկվում է պատճառահետևանքային օրենքին կամ գործում է ազատ, կամայականորեն, այս հարցում դա որևէ նշանակություն չունի: Ինչ էլ որ լինի՝ ըստ պատճառականության օրենքի կամ ազատության օրենքի, իրավունքը այդուհանդերձ ստեղծվում է ոչ թե անկախ, այլ ընդհակառակը, ոչ այլ կերպ քան մարդու գործունեության միջոցով, նրա միջնորդությամբ»<sup>1</sup>: Հետևաբար, իրավունքի մարդկության մեջ գոյության և գործողության հիմքերը կապված են մարդու էության հետ: Իսկ մարդն իր էությամբ «կենսասոցիալական հոգևոր» էակ է: «Մարդը որպես էակ ընդունակ է ակտիվորեն գործելու, հարմարվելու հանգամանքներին կամ փոխելու դրանք իր կարիքներին համապատասխան, ստեղծելու բնության մեջ գոյություն չունեցող առարկաներ, իր շուրջը ձևավորելու հատուկ արհեստական միջավայր՝ քաղաքակրթություն և ժամանակ առ ժամանակ այն ավերելու, որպեսզի նորից իր իսկ ուժերով ձեռնարկի դրա վերաստեղծումը և կատարելագործումը»<sup>2</sup>: Այսպիսով, մարդու՝ որպես էակի հիմնական տարրերիչ առանձնահատկությունը այլ կենսաբանական էակներից կայանում է նրանում, որ մարդու գոյությունը միաժամանակ ընթանում է բնության մեջ, հասարակության մեջ և մշակույթում<sup>3</sup>: Բնության մեջ մարդը բնական էակ է և ապրում է բնական օրինաչափություններով, հասարակության մեջ սոցիալական էակ է և գործում է հասարակական օրենքներին (ներառյալ իրավական) համապատասխան, իսկ մշակույթում, որպես հոգևոր իդեալական արժեքների ամբողջություն, մարդն ապրում է հոգևոր կյանքով<sup>4</sup>: Մարդու գոյության և էության այս երեք կողմերը՝ կենսաբանական, հասարակական և իդեալական, անխզելի են ու անբաժան: Դրանք, որպես մարդկության գոյության եմփիսանական կողմեր, փոխալայմանավորված և փոխկապված են, միմյանց վրա փոխազդում են: Հասարակական կյանքի իրավական ոլորտում մարդը գործում է իր էության այդ երեք անխզելի նորմերին համապատասխան: Ամեն ինչ սկսվում է իրավական իդեալից՝ որպես հոգևոր աշխարհի երևույթ:

Ձևավորվելով որպես իդեալ՝ իրավական գաղափարները ունեն զուտ բնական և հասարակական արմատներ: Հենց այդ սխեմայով է զարգանում հասարակական կյանքը արդեն մի քանի հարյուրամյակ, եթե այդ իդեալը ներկայացնենք որպես բնական իրավունքի տեսություն: Մարդու կենսաբանական (բնական) էությունը հիմք տվեց մշակելու բնական իրավունքի տեսությունը որպես իդեալ: Այդ իդեալն իր իրականությունն ու պաշտոնական ամրագրումն ստացավ իրավունքի դրական աղբյուրներում (օրենքներում): Սակայն միևնույն է այդ իդեալը, որպես անհրաժեշտություն, դեռևս մնում է որպես չիրացված հնարավորություն, նորմատիվ ձև ունեցող իդեալի տեսք, քանի դեռ չի վերածվել իրականության և իրավակարգի: Հասարակական կյանքի իրավական համակարգի գործողության ընթացքում իրավունքի գոյության այդ երեք ձևերը՝ իդեալը, նորմը և իրականությունն ունեն տարբեր հասցեատեղեր: Իդեալը մշակում են բարձր հոգևոր արժեքների կրողները: Օրենսդրի խնդիրն է ապահովել այդ իդեալի (օրինակ՝ բնական իրավունքի կատեգորիաների) վերածումը դրական իրավունքի՝ արտահայտված նորմատիվ ակտերում: Իրավական կյանքի հաջորդ շրջան ենթադրում է անցում պոզիտիվ-իրավական նորմերից իդեալի կենսագործման իրականացման, կիրառման: Այսպիսով, ցանկացած իրավական համակարգի ձևավորման և կայացման սկզբում առաջին շարքում է հայտնվում իրավական իդեալը՝ որպես տեսություն: Այն դեռևս ընդամենը իդեալ է, երազանքի պես մի բան: Սակայն իրավական իդեալը, որպես պիտոյի (անհրաժեշտի) նորմատիվ-արժեքային կերպար, ունի բարձրագույն, կատարյալ ձև<sup>5</sup>: Իրավական իդեալն ունի նպատակային բնույթ և ընդունակ է հեղաշրջելու իրավագիտակցությունը և դրա միջոցով իրավական կյանքը և համակարգը: Իրավական իդեալը, որ համապատասխանում է սոցիալական շահերին և սկզբնապես գոյություն ունի միայն իրավագիտակցության մեջ, իր ձևական և քաղաքակիրթ արտահայտությունն է գտնում իրավաբանական օրենքում: Իրավական իդեալը, որպես օրենքների տեքստում շարադրված կայուն նորմերի համակարգ, հասարակության համար երաշխիք է անվերջ փոփոխությունների, անկայունության և անորոշության դեմ, որովհետև հասարակական կյանքի ձգտումներից մեկն էլ կայուն կողմորոշիչներն են: Եթե չլինեք մարդկանց փոփոխականությունը և շահերի բախումը, ապա չէր լինի նաև իդեալին իրավական նորմատիվ ձև տալու անհրաժեշտությունը: Սակայն օրենքի նորմը ըստ էության

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նույնալիսի իդեալական կառույց է, ինչ որ դատողությունը (իդեալը), որ գտնվում է իրավագիտակցության մեջ: Չէ որ հենց ինքը՝ նորմատիվ ձևը (օրենքը), դեռ իրական կյանքը չէ, այլ ընդամենը փաստաթուղթ, տեքստ, որ ուղղված է ապագային, այսինքն՝ միայն օրենքի հրապարակմամբ մենք չունենք այն ինչը որ կա, այլ ընդամենն այն, ինչը որ պետք է լինի: Այսպիսով, որպեսզի դա դառնա իրականություն, այսինքն՝ իրական կյանքը ընթանա օրենքի նախանշած հունով, անհրաժեշտ են նոր ջանքեր՝ ուղղված դրական իրավունքի կենսագործմանը: Օրենքով ամրագրված իդեալն ինքնին չի երաշխավորում իրավակարգի գոյություն, այսինքն՝ օրենքին համապատասխանող հարաբերություն: Մա հասարակական կյանքի օրինաչափություններից է, որովհետև «մարդիկ, որպես կանոն, մտածում են մի բան, ասում այլ բան, անում երրորդը (և բոլորը տարբեր կերպ): Ինչպես օրենքի բառերը չեն գործում առանց դրանք գիտակցելու, այնպես էլ իրավական պատկերացումները միայն նախանշում են վարքագծի հնարավոր ուղիները որպես «անհրաժեշտ» (պիտոյ), սակայն չեն պարունակում բավարար կամային ինչպես մեք դրանց իրականացման համար»<sup>6</sup>: Հետևաբար, իրավունքն իր գոյությամբ արժեքավոր է ոչ թե այնքանով, որ գոյություն ունի օրենքում և նույնիսկ իրավագիտակցությունում (որպես գիտելիք և պատկերացում), այլ որքանով, որ կենսագործված է մարդկանց գործողություններում և վարքագծում հասարակական հարաբերությունների կենդանի շրջանառության մեջ՝ վերածվելով արդեն կարգավորված փաստի՝ իրավակարգի: Ինչպես և ցանկացած իրավական ակտի, օրենքի ընդունումը, հեշակումը միայն գործի սկիզբն է, խնդիրը կյանքում այն կենսագործելն է, գործնականում՝ իրականացնելը: Օրենսդրության իրականացումը ֆիզիկական և իրավաբանական անձանց այնպիսի վարքագիծ, գործողություն և գործունեություն է, որոնցով կյանքում կենսագործվում են իրավական կարգադրարգրերը: Ի տարբերություն այլ սոցիալական նորմերի իրականացումից (սովորույթ, բարոյականություն և այլն)՝ օրենսդրության իրականացումն ունի իր յուրահատկությունները, որոնք բխում են իրավասահմանումների բուն բնույթից: Այդ սահմանումները միայն պիտոյ են, որոնք պետք է կենսագործել գոյի, իրավական հնարավորությունը՝ իրավական իրականության: Այդպիսի փոխակերպումն իրականացվում է որոշակի սկզբունքներով՝ մշակված իրավագիտության տեսության և պրակտիկայի կողմից»<sup>7</sup>:

Առաջադրված փիլիսոփայական-տեսական կառույցը կարելի է կիրառել ցանկացած իրավահասկացողության վրա կառուցված իրավական տեսության նկատմամբ: Այսպես, բնական իրավունքը որպես իդեալ է ներկայացնում Մ.Ն. Եգորովը, ըստ որի՝ բնական իրավունքը կատարելագործվելու կոչ է գործող իրավունքի համար, բայց ոչ միայն կոչ, այլ այդպիսի կատարելագործման պարտադիր ուղղություն: «Բնական իրավունքը հանդես է գալիս որպես իդեալ, որին պետք է ձգտի գործող իրավունքը իր զարգացման պատմական ճանապարհին: Այն հայտ է, որ ոչինչ, բացի մարդկային բանականությունից ի վիճակի չէ որոշելու և ձևակերպելու այդպիսի իդեալը: Այդպիսի իդեալին հասնելու համար բնական իրավունքը պետք է տա արտաքին ազատության բնութագիրը իր ծավալով և բովանդակու-

թյամբ, ինչպես նաև որոշի իրեն ներկայացնող և սահմանափակող նորմերի պահանջները: Որպես իդեալ հասկացված բնական իրավունքը ոչ մի կերպ չի հակասում իրավունքի բնորոշմանը՝ իրավունքը դա արտաքին ազատությունն է ներկայացված և սահմանափակված նորմով»<sup>8</sup>: Այսպիսով, փիլիսոփայական մոտեցման դեպքում մարդկային հասարակության իրավական համակարգի կայացումը սկզբնավորվում է իրավական իդեալից (ծրագրից, տեսությունից), անցնելով պոզիտիվացման գործընթացը, վերածվում նորմատիվ ձև ունեցող իրավական պահանջների (տեքստի): Որպես պիտոյ, այդ պոզիտիվ իրավական ձևը դեռևս իրականություն չդարձած հնարավորություն է: Այն դեռևս չի կենսագործվել իրական կյանքում: Հետևաբար իրավական համակարգի շարժումը պետք է շարունակվի իրավական նորմատիվ ձևը կյանքում կենսագործելու և այդպիսով իդեալը իրականություն դարձնելու համար: Այս ամբողջ շղթան ըստ էության իրավունքի կենսագործողությունն է, որի վերջնական նպատակը իրավական իդեալին համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

«Իրավունքի կենսագործում» գիտական կատեգորիայի փիլիսոփայական-իրավական հարթության վրա վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ «իրավունքի կենսագործում» հասկացությունը և դրա վրա կառուցված տեսությունն արդի դարաշրջանում ավելի լայն դիրքերից վերահիմաստավորման կարիք ունի, քանի որ իրավունքի կենսագործումը, որպես գործընթաց և արդյունք, ընդգրկում է իրավունքի (որպես էության կամ իդեալի կամ սկզբունքի) ձևավորման (դրականացման) ու զարգացման գործընթացը, ինչպես նաև իրավական ձևերում ամրագրված նորմերի կենսագործման, իրավակարգի վերածման գործընթացը: Այսպիսով, իրավունքի կենսագործումը ենթադրում է ոչ միայն իրավունքի բոլոր ստեղծելիքների կողմից իրավունքի պաշտոնական ձևերում ամրագրված իրավական կարգադրարգրերի բարեխիղճ, անշեղ և խստագույն կենսագործումը, (օգտագործման, պահպանման կատարման, կիրառման միջոցով), այլև որպես օբյեկտիվ էություն կամ իդեալ, կամ սկզբունք հասկացված իրավունքի կենսագործում իրավական պաշտոնական ձևերում: Մակայն իրավունքի կենսագործում հասկացության ընդգրկման սահմանները կախված են նրանից, թե ինչ ենք հասկանում «իրավունք» ասելով: Այսպիսով ինչպես իրավունքի փիլիսոփայության ու տեսության, իրավագիտության այլ ոլորտների հիմնահարցերի, այնպես էլ իրավունքի կենսագործման տեսության հիմնախնդիրների լուծման համար ուղեմիջային տեսական ու գործնական նշանակություն ունի նաև իրավահասկացողությունը:

Իրավական տեսության ցանկացած վարկածի հիմքում դրված է իրավահասկացողություն ինչ-որ տարբերակ: «Իրավաբանական դոգմատիկական և պրակտիկական անպայմանորեն հետևում են իրավունքի ընդհանուր տեսության մեթոդաբանական մասին, որի հիմնահարցը կամ հարցերի հարցն «իրավունք, հասկացության բնորոշումն է»<sup>9</sup>: Իրավունքի կենսագործման տեսության տարբեր վարկածների հիմքում, ըստ էության, ընկած է իրավահասկացողության որևէ տիպ, հետևաբար՝ հենց իրավահասկացողությունն է այն մեթոդաբանական



հիմքը, որը կանխորոշում է իրավունքի կենսագործման տեսության տիպը:

Իրավահասկացողության տարբերակների տիպաբանական վարկածներից են համարվում հետևյալ մոտեցումները՝ իրավահասկացողության լեգիտատական և իրավաբանական տիպեր<sup>10</sup>, իրավաբանական մտածողության իդեալիստական (մետաֆիզիկական) և պոզիտիվիստական տիպեր<sup>11</sup>, իրավահասկացողության բովանդակային (սուբստանցիոնալ), ձևական և խառը տիպեր<sup>12</sup>:

Ֆրանսիացի իրավագետ Ժ. Բերթելի դասակարգմամբ իրավական մտածողության տիպերն են համարվում պոզիտիվիստականը և իդեալիստական-մետաֆիզիկականը: «Իրավաբանական պոզիտիվիզմը որպես արժեք ճանաչում է դրական իրավունքի նորմերը և ցանկացած իրավունք հանգեցնում է տվյալ դարաշրջանում և պետության մեջ գործող նորմերին՝ ուշադրություն չդարձնելով այն բանին՝ արդար է արդյո՞ք այդ իրավունքը, թե՛ ոչ: Այսպիսով իրավունքը դառնում է որպես ինքնավար առարկա՝ նույնացված պետության կամքի հետ... Այդ իրադրությունում չպետք է առաջանա բախում իրավունքի և պետության միջև, որը հանդես է գալիս որպես իրավունքի միակ աղբյուրը...»<sup>13</sup>: Ժ. Բերթելի այս դատողություններից բխում է, որ պոզիտիվիստական իրավամտածողության համար «իրավունքի կենսագործումը» հասկացությունն ունի նեղ, նորմատիվիստական իմաստ և հանգում է միայն նորմատիվ ձևում ամրագրված պետական կամքի՝ իրավունքի նորմի կենսագործմանը (պահպանմանը, կատարմանը, օգտագործմանը, կիրառմանը): Մինչդեռ իդեալիստական փիլիսոփայական իրավամտածողության շրջանակում «իրավունքի կենսագործումը» հասկացությունը ձեռք է բերում ավելի լայն շրջանակ: Ըստ Ժ. Բերթելի՝ իրավաբանական իդեալիստական փիլիսոփայության դասական տարբերակը բնական իրավունքի տեսությունն է, որի հիմնարար գաղափարներն են՝ «...բնական իրավունքը ծագում է բնությունից, գոյություն ունեն դրական իրավունքից վեր կանգնած և դրա վրա ճնշող չգրված օրենքներ, ձգտումը դեպի (իդեալական) արդարությունն առաջնային է (իրական) օրենքների հարգման նկատմամբ...»: Ստացվում է, եթե դրական իրավունքից վեր գոյություն ունի չգրված բնական իրավունք, որը «ճնշում է» դրական իրավունքի վրա, ապա «իրավունքի կենսագործումը» հասկացությունը նախևառաջ ընդգրկում է այդ «ճնշման» գործընթացը, բնական օրենքները դրական իրավունքի վերածելու գործընթացը, իսկ այնուհետև նոր միայն՝ պաշտոնապես հաստատված դրական իրավունքի կենսագործումը (իրականացումը) իր ձևերով:

Ըստ Վ.Ս.Ներսեսյանցի՝ իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը վկայում են իրավահասկացողության երկու հակադիր տիպերի գոյության մասին՝ իրավաբանական և լեգիտատական<sup>14</sup> (որը և՛ նորմատիվիստական, և՛ պոզիտիվիստական է): Այս դասակարգման հիմքում դրված է իրավունքի և օրենքի, օրենսդրության (դրական իրավունքի) նույնացման կամ առանձնացման չափանիշը: Լեգիտատական իրավահասկացողության համար «ի՞նչ է իրավունքը» հարցը, ըստ էության, շատ պարզ և միանշանակ հարց է. «իրավունքն արդեն պաշտոնապես գրված, գործող, դրական իրավունքն է: Օրինականությունն այստեղ չունի հիմ-

նախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա»<sup>15</sup>: Հետևաբար «իրավունքի կենսագործումը» հասկացությունն օրինականության համար նշանակում հասարակական հարաբերություններում կենսագործել այն, ինչն արդեն կա որպես դրական իրավունք: Այդ տեսանկյունից իրավունքի կենսագործումը չի կարող ունենալ այլ իմաստ, բնորոշման բարդություններ ու տարրնթերցություն: Ըստ Վ.Ս. Ներսեսյանցի՝ իրավաբանական կոչված իրավահասկացությունը իրավունքն առանձնացնում, տարբերում է դրական իրավունքից, արդեն սահմանված, պաշտոնական իրավունքից, օրենսդրությունից, և գոյություն ունի երկու վարկածներով՝ բնական-իրավական և ազատական-իրավաբանական: «Իրավաբանական իրավահասկացողության համար իրավունքը հասարակ կամայական և սուբյեկտիվ իշխանական կարգադրագիր չէ, այլ օբյեկտիվ իր ինքնուրույն, սեփական բնույթով (օրենսդրի կամքից չկախված), իր էությանը և յուրահատկությանը, մի խոսքով՝ իր սկզբունքով ինչ որ բան»<sup>16</sup>:

Լեգիտատական մոտեցման համար «ի՞նչ է իրավունքը» հարցը, ըստ էության, գոյություն չունի, քանի որ նրա համար «իրավունքն արդեն պաշտոնապես տրված, գործող, պոզիտիվ իրավունքն է: Լեգիզմն այստեղ չունի հիմնախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա»<sup>17</sup>:

Այսպիսով, իրավահասկացողության ձևական, պոզիտիվիստական, նորմատիվիստական, լեգիտատական տիպերում իրավունքի կենսագործումը հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացողության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործումը» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական ձևերում (պաշտոնական), աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական իրավական վարքագծում: Իրավաբանական գրականությանը բնորոշ իրավական մտածողությունը, նույնացնելով օրենքը (օրենսդրությունը) և իրավունքը, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը):

Իրավունքի և օրենքի տարբերակման վրա կառուցված իրավամտածողությունը, տարանջատելով իրավունքը և օրենքը իրավական կարգավորման համակարգի առջև դնում է նոր խնդիր՝ պաշտոնականացնել, այսինքն՝ դրական օրենսդրության ձևով արտահայտել միայն իրավունքը (դրա էությունը, սկզբունքը, գաղափարը) և դրա օբյեկտիվ պահանջները: Այդ խնդիրը նախորդում է դրական իրավունքի կենսագործման իրականացմանը, և կարևոր է նրանով, որ իրավունքի պոզիտիվացումը մեխանիկական, ինքնաբերաբար ենթադրվող գործընթաց չէ:

Իրավունքի դրականացման արդյունքում (իրավատեղծագործության միջոցով) ստեղծված իրավական ձևը (աղբյուրը) կարող է ինչպես համապատասխանել իրավունքին, այնպես էլ՝ չհամապատասխանել, շեղվել, հակասել իրավունքին: Իրավական պաշտոնական ձևն արժեքավոր է նրանով և այնքանով, որքանով որ արտահայտում է իրավունքը, այսինքն՝ իրավական է (իրավական օրենք է): Քանի որ իրավական ձևի իրավականությունը չի երաշխավորված ինքնաբերաբար, ուրեմն իրավագիտության առջև բացի դրական իրավունքի դրույթների կենսագործման՝ իրականացման տեսական

իմաստավորումից անհրաժեշտ է ճանաչել և իմաստավորել, իրավունքի կենսագործում հասկացության շրջանակների մեջ ներառել նաև իրավունքի դրականացման գործընթացը՝ որպես իրավաբանական կառուցակարգ: Արդյունքում տեսական հնարավորություն է առաջանում հիմնավորելու նոր իրավական հասկացության առկայությունը, այն է՝ «իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ», որի բաղադրատարրերն են իրավունքի (էություն) վերածումը դրական իրավունքի (ձևի) և դրական իրավունքի կենսագործումը (իրականացումը):

<sup>1</sup> Տե՛ս Կորկուнов М.М. Лекции по общей теории права, Спб. Юридический центр пресс. 2003. С. 341.  
<sup>2</sup> Տե՛ս Բачинин Ж.А., Сальников В.П. Философия права. Краткий словарь. Спб. Изд. “Лан”, 2000. С. 360.  
<sup>3</sup> Տե՛ս Բачинин Ж.А. Сальников В.П. Философия права. Краткий словарь. Спб. Изд. “Лан”, 2000. С. 360.  
<sup>4</sup> Այդ հոգևոր-իդեալական արժեքները կարող են լինել կրոնական, բարոյական, գեղարվեստական, փիլիսոփայական, ներառյալ իրավական փիլիսոփայական բնույթի մշակութային արժեքներ:  
<sup>5</sup> Տե՛ս Բачинин В.А., Сальников В.П. Философия права. Краткий словарь. СПб. Изд. “Лан”, 2000. С. 117.  
<sup>6</sup> Տե՛ս Лейст О.Э. Сущность права. Проблемы теории и философии права. М. Изд. “Зерцало-М”, 2002. С. 270:  
<sup>7</sup> Տե՛ս Керимов Д.А. Проблемы общей теории права и государства. В 3 т. Т. 1. Социология права.- М. 2001. С. 195:  
<sup>8</sup> Տե՛ս Егоров С.Н. Аксиоматические основы теории права, Спб. Изд. “Лексикон”, 2001. С. 92:  
<sup>9</sup> Տե՛ս Քոչարյան Ս.Ս. Իրավաբանական իրավահասկացությունը և օրինականության հիմնախնդիրը, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 112:  
<sup>10</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999. С. 75: Հենտելով Վ.Ա. Ներսեսյանցի մոտեցմանը Վ. Չետվերնինն առաջարկում է իրավահասկացողության պոզիտիվիստական (լեգիստական և սոցիոլոգիական) և ոչ պոզիտիվիստական տիպերը (տե՛ս Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М. 1997):  
<sup>11</sup> Տե՛ս Бержель Ж. Общая теория права. М. 2000. С. 40-41.  
<sup>12</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Манова Г.Н. М., 1995. С. 34, 37.  
<sup>13</sup> Տե՛ս Бержель Ж. Общая теория права. М. 2000, С. 48-49.  
<sup>14</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999. С. 75.  
<sup>15</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 32.  
<sup>16</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 34-35.  
<sup>17</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 32.

**РЕЗЮМЕ**

**Философские представления проблем реализации права в системе правового регулирования**

Прошлые и современные философские учения о реализации права включают в себя тот или иной вариант различения права и закона, что собственно и определяет философско-правовой профиль соответствующего подхода. Речь при этом идет о различных формулировках такого различения, в частности, о различении права по природе и права по человеческому установлению, права естественного и права волеустановленного, справедливости и закона, естественного права и человеческого права, естественного права и позитивного права (сам термин “позитивное право” возник в средневековой юриспруденции), разумного права и позитивного права, философского права и позитивного права, правильного права и позитивного права и т. д.

Процесс реализации права, наряду с необходимостью учета объективных свойств и требований права, зависит от многих объективных и субъективных факторов (социальных, экономических, политических, духовных, культурных, собственно законотворческих и т. д.).

Поэтому, говоря об общем (и едином) понятии позитивного права и соответствующих дефинициях, мы имеем в виду правовой закон, т. е. позитивное право в его совпадении, но не в расхождении и противоречии с объективными свойствами и требованиями права. Мы оперируем правовыми определениями и правовыми понятиями, подразумевающими объективную правовую природу и характер соответствующих феноменов.

**SUMMARY**

**THE PHILOSOPHICAL APPREHENSIONS OF THE ISSUE OF THE LEGAL ACCOMPLISHMENT IN THE SYSTEM OF THE LEGAL REGULATION**

This article states that the law and the legal regulation in accordance to the philosophical aspects originated from the legal ideals that is the plan and the theory pass the process of the positivism and transform to the legal requirements with normative form.

It is apparent that the positive legal form has not still realized. Furthermore, the process of the legal structure must be continued to accomplish above mentioned legal normative form and ideal in practice.

It is significant to mention that the article promotes and confirms the issue of new legal definition that is the legal structure of the law accomplishment with the components of the legal transformation to the positive legal type and positive legal implementation. This kind of analysis and the emanated conclusion consider to be an undisputed novelty in the present theory of law.

**ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի միջազգային և  
եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ  
ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿԻԼԻԿԻԱՅԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ՎԵՆԵՏԻԿԻ ԵՎ ՋԵՆՈՎԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ**

XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին խիստ բարձրացավ Կիլիկիայի հայկական թագավորության նավահանգիստների, շուկաների և տարանցիկ ճանապարհների դերը ժամանակաշրջանի միջազգային առևտրում: 1258թ. սոնդոյների կողմից Բաղդադի գրավմամբ իրենց նշանակությունը կորցրին սիրիական նավահանգիստներ հասնող հարավային ուղիները, և սկսեց զարգանալ Թավրիզ-Այաս քարավանային ճանապարհը: Այսպես դարձավ տարածաշրջանում Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական գործունեության գլխավոր նավահանգիստներից մեկը: Կիլիկիայի դերի բարձրացումը միջազգային առևտրում նպաստում էր, որպեսզի ավելի շատ օտարերկրյա վաճառականներ ժամանեն թագավորություն, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում Արմտյան Եվրոպայից, մասնավորապես իտալական քաղաքներից եկածները:

Կիլիկիայի հայկական պետության միջազգային առևտրական կապերի զարգացումը ավելի ու ավելի էր մեծացնում Կիլիկիա ժամանող օտարերկրացիների կարգավիճակի բարելավման անհրաժեշտությունը: Ինչպես հայտնի է, միջնադարյան Եվրոպայում և Ասիայում գործող մի շարք սովորույթներ անտեսում էին օտարերկրացիների իրավունքները, որևէ կերպ պաշտպանված չէր վերջիններիս անձի և սեփականության անձեռնմխելիությունը: Օտարերկրացիների անպաշտպանությունը դժվարություններ էր ստեղծում նախ և առաջ վաճառականների համար՝ այլ երկրներում իրենց առևտուրն իրականացնելիս: Թերևս այս հանգամանքի բերումով օտարերկրացիների իրավունքների պաշտպանության խնդիրն առավել հաճախ էր արժեքավորում պետությունների միջև կնքվող առևտրական համաձայնագրերում:

Կիլիկյան պետությունն իր ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններում տիրող անկարգության պայմաններում չէր կարող պաշտպանել Կիլիկիա ժամանող բոլոր օտարերկրացիների իրավունքները՝ անտեսելով փոխադարձ շահավետության սկզբունքը: Կիլիկիայի թագավորություն ժամանող օտարերկրացիներից առավել լայն իրա-

վունքներով էին օժտված Կիլիկիայի հետ ամենից վաղ առևտրական կապեր հաստատած ջենովացիները և վենետիկցիները, որոնք, լինելով միջերկրածովյան առևտրի գլխավոր դերակատարներ, Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական փոխանակության գլխավոր միջնորդներ, մեծապես նպաստում էին Կիլիկյան պետության ներքին և արտաքին առևտրի զարգացմանը: Դատելով մեզ հասած իրավական աղբյուրներից՝ Կիլիկիայի հայկական թագավորության առաջին առևտրական համաձայնագրերը կնքվել են հենց Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ, որոնց հիման վրա լայն արտոնություններ են շնորհվել Կիլիկիա ժամանող վերջիններիս հպատակներին<sup>1</sup>:

Միջնադարյան Եվրոպայում և Ասիայում որևէ երկիր մտնելու և այնտեղ մնալու համար օտարահպատակը պետք է համապատասխան թույլտվություն ունենար, հակառակ դեպքում ապահովված չէր տեղական ֆեոդալի կամայական գործողություններից և մինչև անգամ կարող էր նրա կողմից ստրկացվել: Եթե օտարահպատակը մահանում էր մեկ այլ երկրի տարածքում, ապա նրա գույքը ժառանգում կամ յուրացնում էր ֆեոդալը<sup>2</sup>: Օտարերկրացիների համար մեկ այլ խնդիր էր ստեղծում «ափամերձ իրավունքը»: Դեռ հնուց «ափամերձ իրավունքը» հասկացվում էր որպես նավաբեկության արդյունքում օտար պետության ափամերձ գոտում հայտնված կամ ափ նետված նավի, նավի մնացորդների, նավաբեռի, նավի անձնակազմի և ուղևորների նկատմամբ ափատիրոջ իրավունքը՝ տնօրինելու այդ ամենն ըստ իր հայեցողության: Մովորաբար գույքն առգրավվում էր ափատիրոջ կողմից, իսկ կենդանի մնացած մարդիկ գերևարվում էին կամ ստրկացվում, հաճախ վերջիններիս դիմաց պահանջվում էր փրկագին<sup>3</sup>: Կիլիկյան թագավորությունում ևս օտարերկրացիներն առանց թագավորի հատուկ թույլտվության երկիր ազատ մուտք գործելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու իրավունք չունեին: Հետևաբար, օտարերկրյա պետություններին շնորհված արքայական խրիստովներում նախ և առաջ սահմանվում էր օտարերկրացիների անձի և սեփականության անձեռնմխելիությունը Կիլիկիա

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու դեպքում: Այսպես, 1201թ. մարտին Լևոն II-ի կողմից Ջենովայի Հանրապետությանը շնորհված խրիստովույուն ասվում է. «Ուստի և քեզ՝ Օգերիո դը Պալլոյի, Ջենովայի քաղաքացու, որ ջենովացիների կողմից եկել էս իմ արքայական կուրիայի մոտ, իմ արքայական մեծության մոտ և ազատություններ, սեր ու հարգանք ես փնտրում իմ թագավորության մեջ, իմ արքայական կուրիայի համաձայնությամբ ազատություն եմ տալիս ցամաքով ու ծովով ժամանելուն և մեկնելուն, առք ու վաճառքին, նավահանգիստ մտնելուն և նավահանգստից դուրս գալուն: Շնորհում եմ և կամենում, որ բոլոր ջենովացիներն իրենց իրերով ու ապրանքներով իմ ամբողջ թագավորության մեջ՝ քաղաքներում, գյուղերում և իմ ողջ տարածքում, որ այժմ ունեն և որն ինձ է տրվել որպես Աստծո պարգև, և իմ բարոնների ողջ տարածքում վնասներ չկրեն և վտանգի չենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, գնան ու վերադառնան, վաճառեն և գնեն ազատ ու հանգիստ կերպով, առանց արգելքների և ճնշումների, տուրքերի ու հարկերի»<sup>4</sup>:

1201թ. դեկտեմբերին Լևոն II-ի կողմից Վենետիկին տրված խրիստովույուն ևս սահմանվում էր վենետիկցիների՝ Կիլիկիա ազատ ժամանելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու իրավունքը՝ իրենց պատկանող գույքի հետ միասին: Այդ իրավունքը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Ուստի, իմ արքայական առատաձեռնությամբ, նրա (Վենետիկի դոժի) խնդրանքով, շնորհում եմ և նվիրում նրա ժառանգներին և բոլոր վենետիկցիներին, ի նշան նրա և վենետիկցիների հանդեպ իմ տաժած սիրո և հարգանքի, որն արտացոլվել է այս արտոնագրում, ազատություն ցամաքում և ծովում, քաղաքներում, նավահանգիստներում և անցումային կետերում, կարող են գալ ու գնալ ցանկացած ապրանքով: Նրանք իրավունք են ստանում գնել և վաճառել ցանկացած ապրանք իմ ողջ տարածքում, իմ տիրույթներից դուրս գալ անվտանգ, ապահով, հանգիստ կերպով, առանց ճնշումների և խոչընդոտների, տուրքերի և հարկերի... Վենետիկցիներն իրենց պատկանող իրերի ու ապրանքների հետ միասին չպետք է վնասներ կրեն և վտանգի ենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ իշխանության ներքո և իմ տիրույթներում... Շնորհում եմ և կամենում, որ բոլոր վենետիկցիներն իրենց ապրանքների հետ միասին անվտանգ և ապահով կերպով իմ տիրույթներում մնան այնքան ժամանակ, որքան որ իրենք կցանկանան»<sup>5</sup>:

Նույն ոգով է կազմված նաև Հեթում I-ի և Չարել թագուհու կողմից 1245թ. մարտին Վենետիկին շնորհված խրիստովույունը. «Մենք հաստատեցինք նրանց (վենետիկցիների)՝ արտոնություններ ստանալու խնդրանքը և շնորհեցինք բոլոր վենետիկցիներին, ովքեր հիմա կան և դեռ գալու են, բոլոր այն վենետիկցի վաճառականներին և վենետիկցիներին, ովքեր գտնվում են ծովի այս կողմում, որպեսզի, մեր երկիր ժամանելիս, վնասներ չկրեն և վտանգի չենթարկվեն մեր և բոլոր նրանց կողմից այն բոլոր վայրերում, որոնք գտնվում են կամ գտնվելու են մեր իշխանության ներքո, որպեսզի նրանք իրենց ապ-

րանքներով գան ու գնան, գնեն և վաճառեն առանց տուրքերի»<sup>6</sup>:

Բացի վերոնշյալ իրավունքներից, այս խրիստովույունում սահմանվում էր նաև Կիլիկիայի տարածքով վենետիկցիների ազատ տարանցման իրավունքը: Վենետիկցի վաճառականներին թույլատրվում էր Կիլիկիայի տարածքով անարգել կերպով և ցանկացած տեսակի ապրանքներով անցնել մեկ ուրիշ պետություն, որի հետ Կիլիկիան հաշտ էր:

Վերոնշյալ դրույթները կրկնվում են նաև Վենետիկին տրված 1261թ., 1271թ., 1307թ., 1323թ. խրիստովույուններում:

Ինչպես արդեն նշվեց, քննության առնվող ժամանակաշրջանում կարևորություն ունեն «ափամերձ իրավունքի» հետ կապված իրավակարգավորումները: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Վենետիկի և Ջենովայի հետ Կիլիկիայի կնքած համաձայնագրերում առկա «ափամերձ իրավունքին» վերաբերող դրույթները, որոնք ուղղված էին նավաբեկության ենթարկված վենետիկցիների և ջենովացիների անձի և սեփականության անձեռնմխելիության ապահովմանը: Այս առնչությամբ 1201թ. Լևոն II-ի կողմից ջենովացիներին շնորհված խրիստովույուն ասվում է. «Բացի այդ շնորհում եմ և կամենում, որ եթե ջենովական նավերը իմ թագավորության ծովափերին վտանգվեն կամ նավաբեկության ենթարկվեն, ապա այն ամենն, ինչ կարող է փրկվել՝ նրանց նավը, իրերն ու ապրանքները, չպետք է վնասներ կրեն և վտանգի ենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, և ջենովացիներին պատկանող ունեցվածքը պետք է առանց խոչընդոտների նրանց վերադարձվի: Եթե իմ թագավորության ծովափերին վտանգվեն կամ նավաբեկության ենթարկվեն այլ ազգային պատկանելության նավեր, իսկ այդ նավերում գտնվեն ջենովացիներ իրենց ապրանքների հետ միասին, ապա այն իրերն ու ապրանքները, որոնք օրենքով ջենովացիներին են պատկանում և եթե դա նրանք կարողանան ապացուցել, պետք է անվնաս և ապահով մնան, և ջենովացիներին պատկանող գույքը պետք է առանց խոչընդոտների նրանց վերադարձվի»<sup>7</sup>:

1201թ. դեկտեմբերին Լևոն II-ի կողմից Վենետիկին շնորհված խրիստովույուն «ափամերձ իրավունքին» վերաբերող դրույթները ընդհանուր առմամբ համընկնում են Ջենովային տրված խրիստովույուն դրույթների հետ, թեև այստեղ արձանագրվում են նոր մանրամասներ: Այսպես, եթե նավաբեկության ենթարկված վենետիկյան նավի վրա գտնվում էին անձիք, ովքեր վենետիկցիներ չէին, ապա վենետիկյան դրոշը չէր կարող պաշտպանել վերջիններին. «Շնորհում եմ նաև և կամենում, որ այն դեպքում, եթե վենետիկյան նավը իմ թագավորության ծովափերին վնասվի կամ նավաբեկության ենթարկվի, ապա բոլոր նրանք, ովքեր խույս կտան վտանգից, պետք է ազատ և ապահով լինեն: Նրանք իրենց իրերի և ապրանքների հետ միասին պետք է ազատ լինեն և վնասներ չկրեն այն բոլոր մարդկանցից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, բացառությամբ այն դեպքերի, երբ նավի վրա գտնվեն վենետիկցի

չհանդիսացող անձիք, որոնց ողջ ունեցվածքը կենթարկվի իմ արքայական կուրիա իշխանությանը: Եթե իմ թագավորության ասիերի մոտ վտանգվի կամ նավաբեկության ենթարկվի այլ ազգային պատկանելության նավ և, եթե այդ նավի վրա գտնվի վեներտիկցի, ապա նրա իրերն ու ապրանքները պետք է անվնաս և ապահով մնան և ազատ լինեն այն բոլոր մարդկանցից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում»<sup>8</sup>:

1245թվ. Վենետիկին շնորհված խրիստովուլում կատարվում են նոր լրացումներ: Այստեղ շեշտվում է այն, որ ոչ մի վեներտիկցի չպետք է որպես իր սեփականություն ներկայացնի վեներտիկցի չհանդիսացող անձանց նավերը և գույքը՝ դրանք ազատելու նպատակով:

Կիլիկյան պետության կողմից նորամուծություն էր նաև Լևոն III-ի՝ 1271թ. խրիստովուլում տեղ գտած այն դրույթը, ըստ որի նավաբեկության ենթարկված վեներտիկյան նավի վրա գտնվող, սակայն վեներտիկցի չհանդիսացող անձիք և նրանց գույքը հայտնվում են Վենետիկի և Կիլիկիայի համատեղ կառավարման ներքո, ինչը կրկնվում է նաև 1307թ. և 1323թ. խրիստովուլներում. «Եթե վեներտիկյան նավը նավաբեկության ենթարկվի մեր տարածքում, ծովափերին կամ ծովում, ապա այն ամենն, ինչ կփրկվի ծովից՝ լինեն մարդիկ, նավը կամ այլ տեսակի իրեր, ապահով կլինեն, և վնասներ չեն կրի մեր և մեր հպատակների կողմից: Եթե նավաբեկության ենթարկված նավի վրա գտնվեն այլ ազգային պատկանելության անձիք և ապրանքներ, ապա նրանք կհայտնվեն մեր՝ նրանց հետ համատեղ կառավարման ներքո: Վեներտիկցիները չպետք է իրենց պաշտպանության ներքո վերցնեն այլազգի անձանց նավն ու ապրանքները կամ ազատեն դրանք որպես իրենցը: Այն դեպքում, եթե նավաբեկության ենթարկվի այլ ազգության պատկանող նավ, որոնց վրա կլինեն վեներտիկցիներ, ապա վեներտիկցիներն ազատ կարձակվի և նրա համար ոչ մի խոչընդոտ չի հարուցվի, և սա տարածվում է նրա և նրա ողջ ունեցվածքի վրա, ընդ որում նա պետք է ապացուցի, որ դա իրեն է պատկանում, իսկ այլ ազգային պատկանելության անձինք և նավը կհայտնվեն մեր՝ նրանց հետ համատեղ կառավարման ներքո»<sup>9</sup>:

Կիլիկյան թագավորների խրիստովուլներում պաշտպանվում էր նաև վեներտիկցիների և ջենովացիների ժառանգության իրավունքը: Կիլիկիայում մահացած օտարերկրացիների գույքն անցնում էր պետական գանձարանին: Կիլիկիան վեներտիկցիներին և ջենովացիներին շնորհած խրիստովուլներով հրաժարվում է այս սովորույթից հօգուտ վերջիններիս: Կիլիկիայում մահացած ջենովացիների և վեներտիկցիների գույքն այլևս ենթակա չէր բռնագրավման, այլ պետք է անցներ պետական վերահսկողության տակ՝ այնտեղ մնալով այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխան իշխանություններն այն չէին պահանջել օրինական ժառանգների համար: Այսպես, 1201թ. Վենետիկին շնորհված խրիստովուլում ասվում է. «Շնորհում են նաև և կամենում, որ եթե որևէ վեներտիկցի հանգամանքների բերումով մահանա իմ տարածքում և իր իրերի ու ապրանքների հետ կապված կարգադրություն կատարած լինի՝

դրանք հանձնելով իր համաքաղաքացիներից որևէ մեկին կամ մեկ ուրիշի, ապա մահացածի կարգադրությունը փոփոխման ենթակա չէ: Իսկ եթե մահանա առանց կարգադրություն կատարելու և եթե որևէ վեներտիկցի ներկա գտնվի, ապա մահացածի իրերն ու ապրանքները կհանձնվեն վեներտիկցուն, ով էլ որ նա լինի, առանց որևէ առարկության: Եթե վեներտիկցին մահանա կարգադրություններ կատարելով կամ առանց կարգադրության և համաքաղաքացիներից ոչ ոք ներկա չլինի, նրա ողջ ունեցվածքը անարգել կերպով ի պահ կտրվի Հովհաննեսին՝ Միսի պատվարժան արքեպիսկոպոսին, հայոց մեծանուն թագավորի կանցլերին կամ նրա իրավահաջորդին՝ այնտեղ մնալով այնքան ժամանակ մինչև մահացածի ունեցվածքի հետ կապված կարգադրություն կլինի Վենետիկի, Դալմացիայի և Խորվաթիայի մեծանուն դոժից իր կնիքով կնքված նամակով, ինչը պետք է ի կատար ածվի առանց որևէ առարկության»<sup>10</sup>:

1245թ. և 1261թ. խրիստովուլներում ընդգծվում է, որ մահացած վեներտիկցու ողջ ունեցվածքը պետք է գտնվի պետական վերահսկողության ներքո, քանի դեռ Վենետիկի դոժից<sup>11</sup> կամ Աքքայում գտնվող վեներտիկի բայլից<sup>12</sup> մահացածի ունեցվածքի հետ կապված հանձնարարական նամակ չի ստացվել: 1271թ., 1307թ., 1323թ. խրիստովուլներում նույնպես առկա է միևնույն մոտեցումը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում մահացածի ունեցվածքի հետ կապված կարգադրությունները կատարվելու էին Վենետիկի դոժի և Հայաստանում Վենետիկի բայլի կողմից: Ջենովացիների ժառանգության իրավունքի հետ կապված 1288թ. դեկտեմբերին Լևոն III-ի կողմից Ջենովայի հանրապետությանը շնորհված խրիստովուլում նշվում է հետևյալը. «Եթե ջենովացին մահանա առանց կտակի, ապա մեր պաշտոնյաները չեն կարող նրան պատկանող իրերն իրենց վերցնել: Դրանք պետք է հանձնվեն վեներտիկցիներին, որպեսզի տնօրինվեն համաձայն սովորույթի»<sup>13</sup>:

Կիլիկիայի թագավորությունը պաշտպանում էր նաև օտարերկրացիների գույքի ֆիզիկական անվտանգությունը: Մասնավորապես, Կիլիկիան պարտավորվում էր վերադարձնել իր տարածքում կողոպտիչների կողմից վեներտիկցիներից և ջենովացիներից հափշտակված գույքը: Այս առնչությամբ 1201թ. ջենովացիներին շնորհված խրիստովուլում ասվում է. «Շնորհում են նաև և կամենում, որ եթե իմ տարածքում գտնվող որևէ չարագործ ջենովացուն կողոպուտի ենթարկի մինչև նրա՝ իմ երկրից դուրս գալը, ապա տուժած ջենովացին կարող է բողոքել իրեն կողոպուտի ենթարկելու առթիվ իրենից հափշտակված վերադարձնելու համար, որը մեր կողմից կվերադարձվի առանց որևէ պատճառաբանության»<sup>14</sup>: Իսկ վեներտիկցիներին 1201թ. շնորհված խրիստովուլում նշվում է. «Եթե վեներտիկցին իր ճանապարհորդության ընթացքում կողոպուտի ենթարկվի, ապա նրանից հափշտակվածը կվերադարձվի այնպես, ինչպես կջանայինք վերադարձնել մեր սեփականը»<sup>15</sup>: Կարևոր է նշել, որ այս դրույթը կրկնվում է նաև 1245թ., 1261թ., 1271թ., 1307թ., 1321թ. Վենետիկի Հանրապետությանը շնորհված խրիստովուլներում:

Կիլիկիայի հայկական թագավորությունում քավականին առաջադիմական լուծում էր տրված

օտարերկրացիների միջև ծագող վեճերի քննության իրավագործության հարցին: Կիլիկիան, ելնելով ժողովուրդների ավանդույթները հարգելու սկզբունքից, հաշվի առնելով վեճերի լուծման ազգային առանձնահատկությունները, օտարերկրացիներին շնորհել էր իրենց միջև ծագած քաղաքացիական վեճերը և միջնացնելու նկատմամբ կատարված թեթև հանցագործություններն ինքնուրույն քննելու իրավունք: Սակայն ծանր հանցագործություններին վերաբերող գործերի քննությունը հանդիսանում էր հայկական դատարանների բացառիկ իրավագործության հարց: 1215թ. Լևոն II-ի կողմից Ձենովայի Հանրապետությանը շնորհված խրիստոփոլյուն մասնավորապես շեշտվում էր Կիլիկիայի տարածքում ջենովացիների՝ անկախ դատարաններ ունենալու իրավունքն ըստ իրենց սովորույթների: Այնուհետև մատնանշվում էր, որ ջենովացիներն իրենք են լուծելու իրենց միջև ծագող վեճերը, բացառությամբ գողության և սպանության դեպքերի, որոնք արդեն քննվելու էին թագավորական դատարանի կողմից<sup>16</sup>: Հատկանշական է նաև 1201թ. Ձենովային շնորհված խրիստոփոլյուն սահմանված այն դրույթը, ըստ որի ջենովացիների և այլազգի անձանց միջև դատական հայցի դեպքում գործը քննվելու էր ջենովական դատարանում, եթե մեղադրվողը ջենովացի էր, և թագավորական դատարանում, եթե ջենովացին հայցվորն էր<sup>17</sup>:

Կիլիկիայի թագավորների կողմից Վենետիկի Հանրապետությանը շնորհված խրիստոփոլյուն վեճերի կցիցներին նույնպես թույլատրվում էր լուծել իրենց միջև ծագող վեճերը, սակայն վենետիկցիների միջև գողության և սպանության դեպքերը, ինչպես նաև նրանց և հայերի կամ այլազգի անձանց միջև ծագող վեճերը և ծանր հանցագործություններին վերաբերող գործերը քննվելու էին թագավորական դատարանում: Այսպես, 1201թ. Վենետիկին շնորհված խրիստոփոլյուն ասվում է. «Բացի այդ, շնորհում են և կամենում, որ եթե իմ տարածքում վեճ ծագի վենետիկցիների միջև, ապա այն կարող է լուծվել վենետիկցիների կողմից, սակայն, եթե վեճը լուծվելու համար վենետիկցիներից ոչ ոք ներկա չլինի, վեճը կլուծվի վերոնշյալ հարգարժան արքեպիսկոպոսի (Սիսի արքեպիսկոպոսի) կամ նրա իրավահաջորդ-

ների ներկայությամբ: Եթե վեճ ծագի վենետիկցու և որևէ այլազգի անձի միջև և մարդ սպանվի, ապա դատաստանն իմ թագավորական դատարանում կլինի: Եթե այլ տեսակի վեճ ծագի վենետիկցու և ցանկացած այլազգի անձի միջև, ապա դատաստանն իմ թագավորական դատարանում կլինի»<sup>18</sup>:

Այս մոտեցումը առկա է նաև Վենետիկին շնորհված մյուս խրիստոփոլյուններում: Ընդ որում, 1271թ. խրիստոփոլյուն նույնպես հաստիկ ընդգծվում է, որ գողության և սպանության դեպքերը պետք է քննվեն թագավորական դատարանի կողմից. «Եթե մեր տարածքում երկու կամ ավելի վենետիկցիների միջև վեճ ծագի, ապա գործը կքննվի Հայաստանում վենետիկցիների բայի կողմից: Եթե վեճ ծագի վենետիկցու և հայի կամ վենետիկցու և այլազգի անձի միջև, կամ եթե տեղի ունենա գողություն կամ սպանություն, ապա գործը կքննվի մեր թագավորական դատարանում: Եթե գողություն կամ սպանություն կատարվի և կողմերից երկուսն էլ վենետիկցիներ լինեն, ապա գործը կքննվի թագավորական դատարանում: Եթե վեճ ծագի երկու վենետիկցիների միջև և համաձայնության գալու համար վենետիկցիներից ոչ ոք ներկա չլինի, ապա գործի առթիվ պետք է դիմել Սիսի արքեպիսկոպոսին»<sup>19</sup>:

Կիլիկիայի հայկական թագավորությունը, մեծապես կարևորելով իր արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների ծավալումը, օտար պետությունների հետ այդ հարաբերությունների կայուն զարգացման հիմքում տեսնում էր փոխադարձ համագործակցության ամրապնդումը, ինչպես նաև իր տարածքում վերջիններիս հպատակների, հատկապես վաճառականների իրավունքների հարգումը և պաշտպանությունը: Միջնադարյան միջազգային հարաբերությունների համակարգում, որտեղ պետությունների կողմից օտարերկրացիների իրավունքների անտեսումը սովորական և օրինաչափ երևույթ էր, Կիլիկյան պետության կողմից օտարահպատակների անձնական և սեփականության իրավունքների պաշտպանության հարցի կարևորումը ժամանակաշրջանի առումով առաջադիմական մոտեցում էր:

<sup>1</sup> Տե՛ս Կիլիկիայի հայկական թագավորության՝ Ձենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ կնքած մեզ հայտնի առևտրական պայմանագրերը կազմվել են խրիստոփոլյունի ձևով: Խրիստոփոլյուն (հուն. chrysgbullon - ոսկե կնիք) ի սկզբանե գործածվել են բյուզանդական կանցելարիայում որպես իրավական ակտի տեսակ: Խրիստոփոլյունի ձևով հրապարակվել են օրենքներ, կազմվել են հրովարտական, կնքվել են միջպետական պայմանագրեր: Դրանք լայնորեն շրջանառվել են նաև Կիլիկիայի հայկական թագավորության կանցելարիայում: Խրիստոփոլյուն առանձնանում են իրենց ձևակերպման հանդիսավորությամբ: Սովորաբար հաստատվում էին միապետի կողմից կարմիր քանաքով դրված ստորագրությամբ և ոսկե կնիքով:

<sup>2</sup> Տե՛ս Левин Д. История международного права, М., 1962. С. 30.

<sup>3</sup> Տե՛ս Барсегов Ю. Отказ Армян от “Берегового права”, Պատմա-քաղաքագիտական հանդես 1(52), Եր. 1971, էջ 95:

<sup>4</sup> Տե՛ս Langlois V. Le tresor des chartes d'Armenie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Le Tresor Des Chartes D'Armenie ou Cartulaire De La Chancellerie Royale Des Roupeniens, Venise, 1863, p. 106, «Undo, tibi Ogerio de Pallo, civi lanuensi, pro parte Ianuensium ante regiam majestatem et regiam curiam meam venienti, et requirenti, amorem, honorem et libertatem in regno meo, dono et concedo, assensu regalis curie mee, libertatem per terram et per mare eundi et redeundi, vendendi et emendi, intrandi in portum et exeundi de portu. Concedo etiam et volo ut omnes Ianuenses, cum rebus et mercimoniis suis, per totum regnum meum, in civitatibus, casalibus, in omni terra mea, quammmodo habeo, et quam, Deo ausiliante, acquisiturus sum, et in omni terra baronum meorum, sint salvi et securi ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo; eant et redeant, vendant et emant, libere, quiete, sine omni contrarietate et servicio, sine omni dictione, sine omni pacto et sine omni exactione, seu angaria tributi vetigalis».

<sup>5</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, 111, «Ex regali itaque munificentia mea, ipsius requisitione, dono et concedo plenius ei omnibus que successoribus suis et omnibus Veneticis, amore et honore suo, omnium que Venetorum, sicut continetur in presenti privilegio, libertatem per terram et per mare in civitatibus, in portibus, in pontis, eundi et redeundi cum quibuslibet mercimoniis. [intrandi et exeundi cum quibuslibet mercimoniis]. Et habeant potestatem plenam vendendi et emendi quelibet mercimonia per totam terram meam, et extrahendi de tota terra mea, salve, secure, libere, quiete, sine omni servitio, sine omni dictione, sine omni angaria, et sine omni passagio... Corpora, res et mercimonia Venetorum sint salva et secunda ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo... Concedo et volo, ut omnes Venetici habeant potestatem standi salvi et securi cum omnibus bonis suis, quamdiu voluerint, in omni terra mea et per totam terram meam».

<sup>6</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 114, «et nos confirmavimus ad petitionem eorum predictum privilegium, et dedimus nostrum omnibus Veneticis, qui sunt et qui futuri sunt; quod omnes mercatores et omnes homines Venetici, qui sunt ultra mare et citra, et veniunt in terram nostram, securi et sine timore sint a nobis et [ab] omnibus nostris, in omnibus locis qui sunt vel erunt sub dominio nostro, tam persone eorum, quam res et omnia sua bona, eundo et redeundo, vendendo et emendo, sine datione».

<sup>7</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 106, «Concedo insuper et volo, ut si naves Ianuensium in litoribus (sic) regni mei quoquo modo periclitari vel frangi, quod absit, contingant, corpora, res et mercimonia eorum sint salva et secunda ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo; et ad Ianuenses redeant proprietatem, sine omni occasione et contrarietate. Et si forte constiterit naves aliarum gentium in littoribus regni mei frangi vel periclitari, in quibus aliquis Ianuensis cum mercimoniis suis fuerit, res et mercimonia que legitime fore sua, seu Ianuensium probare poterit, sint salva et secunda, et ad suam redeant proprietatem, sine omni occasione et contrarietate».

<sup>8</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, «Concedo etiam et volo, ut, si quodlibet vassellum Venetorum passum fuerit naufragium, vel rupturam in toto littore mei regni, omnes hii, qui evasserint de periculo illo, sint salvi et securi. Corpora, res et mercimonia eorum sint salva et secunda et libera ab omnibus hominibus, qui sunt et qui erunt sub potestate et dominio meo, hoc excepto, quod, si quis intersit, qui non sit Veneticus, ipsius res omnes potestati curie mee subiaceant. Et si navis seu vasellum aliarum gentium periclitata fuerit vel fracta in toto littore regni mei, et interfuerit Veneticus aliquis, res et omnia bona ipsius sint salva et secunda et libera ab omnibus hominibus, qui sunt et qui erunt sub potestate et dominio meo».

<sup>9</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 152, «E se vassiau de Veneze brise en toute nostre terre, en rive de mer ou en mer, tot quant che sera delivrn de la mer, soit home, vassiau ou autre chose, toute sera sans doute e sanz penser de nos e de nos subjns. E se home de autre nation ne autre chose, seront au vassiau chi brisera, si demorront e nostre comandement avec le leur. Et les Venetiens vassiau ne autre chose d'home d'autre nation ne prendront en leur garde ou delivreront come le leur. Et se autre manere de vassiau brise, en che y soit Venetiens, li Venetien soit franz et sans pene, luy e toutes ses choses lesqueles il provera che soient soues; e le vassiau e les homes d'autre nation demourront au nostre comandement avec le leur».

<sup>10</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110-111, «Concedo similiter et volo, ut, (si) aliquis Veneticus aliqua predestinatione in terra mea morte preoccupatus fuerit, et bonorum suorum ordinationem fecerit, ipsamque in manibus Venetici sen cujuslibet comiserit, et fuerit mortuus, ordinatio ipsa stabilis sit et firma; et si sine ordinatione facta, subito mortuus fuerit, et aliquis Veneticus interfuerit, res et bona mortui in manibus ipsius adstantis Venetici, quicunque sit, sine contradictione aliqua deveniant. Et si aliquis Veneticus non interfuerit, et cum ordinatione seu sine ordinatione facta, subito mortuus fuerit, omnia bona ipsius in manibus domini Johannis, venerabilis Sisensis archiepiscopi, illustris regis Armenie cancellarii, seu successorum suorum archiepiscoporum, sine aliqua contradictione deveniant; que tam diu sub custodia habeat, quousque ex mandato illustris ducis Yenetie, Dalmatie et Croatiae recipiat per litteras, tamen sigillo suo sigillatas; cui illa tradere et assignare debeat, seu quid super luis factorum sit; et secundum tenorem ipsarum litterarum predicti ducis mandatum de rebus mortui, sine aliqua contradictione adimpleatur».

<sup>11</sup> St'u Վենետիկի Հանրապետությունը գլխավորողի տիտղոսը (VIII- XVIII դդ.):

<sup>12</sup> St'u Այլ պետությունում Վենետիկի պաշտոնական ներկայացուցիչը, ով գրավում էր Վենետիկի և վենետիկցիների շահերի և իրավունքների պաշտպանության հարցերով:

<sup>13</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 157, «Si un Grnois meurt sans avoir fait de testament (ah intestat), nos officiers ne pourront mettre la main sur ses effets; la commune les prendra et en disposera suivant la coutume».

<sup>14</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 107, «Concedo denique et volo, ut si aliquis malefactor in terram meam venerit ad affidandum vel non affidandum, et Ianuensis depredatus fuerit antequam de terra mea exeat, Ianuensibus de ablatis juste conquerentibus ablata, pro posse restitui faciamus sine occasione».

<sup>15</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, «... et si aliquod dampnum in ipso itinere Venetico viatori evenerit, ad restituenda ablata, tanquam mea propria operam dare et studium».

<sup>16</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 126, «... dono et concedo in tota terra mea quam ego nunc habeo vel habiturus sum, liberam curiam, secundum morem et consuetudinem Janue, ut nullus Ianuensis, vel filius Ianuensis, aut aliquis dictus Januensis, teneatur in curia alicujus, nisi in curia Januensium, super offensione aliqua, nisi super excessu furti et homicidii respondere».

<sup>17</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 107, «Et si aliquis clamor factus fuerit contra aliquem Ianuensem, accusatus in curia Ianuensium, faciat justiciam. Et si Ianuenses, de quocumque alio alterius nationis clamorem fecerint, accusatus in regali curia mea, faciat justiciam».

<sup>18</sup> St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 111, «Concedo preterea et volo, ut, si aliqua contentio vel discordia in terra mea inter Venetos emerserit, ut per Venetos, si interfuerint, emendetur; qui si absentes fuerint, in presentia predicti venerabilis archiepiscopi, sive successorum suorum archiepiscoporum, previa ratione emendetur. Et si aliqua contentio vel discordia mortalis inter Venetos et quascumque gentes emerserit, et mors subito hominis irruerit, in regali curia mea per justicie sententiam decidatur. Et si aliqua alia contentio vel discordia inter Venetos et quascumque gentes emerserit, similiter in regali curia mea per iudicii sententiam finiatur».

<sup>19</sup> St'ú Langlois V. Le trésor des chartes d'Armenie, p. 153, «E se entre deus Venetiens ou plusors sera contens en nostre terre, le bail de Venetiens chi sera en Ermenie faze la raisons. E se contens sera, entre Venetiens et Hermins ou home d'autre nation, chi ne soient Venetiens, ou se faze larecin on sanc, ou murtre, la raison de ce en (la) nostre roial ante cort se faze. Ensement, se entre les Venetiens, que les deus parties soient Venetiens, se faze murtre, ou sanc, ou larecin, la raison de ce en la nostre roial aute cort se faze. E se contens sera entre Venetiens, e che Venetiens n'y soit a acorder les ensemble, per la raison de l'arcivesque de Sis s'adressent».

## РЕЗЮМЕ

*О личных и имущественных привилегиях и иммунитетах, дарованных иностранцам по международным договорам, заключенным Киликийским армянским царством с Венецианской и Генуэзской республиками*

Киликийское армянское царство, придавая большое значение расширению внешнеторговых связей и развитию экономических отношений страны, особое внимание уделяло защите прав иностранцев, в частности прав иностранных купцов, прибывающих в Киликию. В данной статье рассматриваются вопросы личных и имущественных прав, предоставленных подданным Венеции и Генуи на территории Киликийского царства по международным договорам, заключенным Киликийским армянским царством с Венецианской и Генуэзской республиками.

## SUMMARY

*The personal and property privileges and immunities granted to foreigners by the international treaties signed between the Armenian Kingdom of Cilicia and the Republics of Venice and Genoa.*

The kings of Cilician Armenia, attaching great importance to the development of foreign trade and economic relations, have paid a special attention to the protection of rights of foreigners, especially foreign merchants arriving in Cilicia. The article examines the personal and property rights granted to Venetians and Genoese in Cilician Armenia by the international treaties concluded between the Armenian Kingdom and the Republics of Venice and Genoa.



### ՄԵՐՈՒԺԱՆ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ



## ՆԱՏՕ-Ի ԴԵՐԸ ԱՔԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Հարավային Կովկասը՝ Անդրկովկասը, ավանդաբար հանդիսանում է տարբեր ուժերի՝ գերտերությունների և ուժային կառույցների, շահերի և հակասությունների բախման հանգուցակետ: Այս հանգամանքը անկասկած իր հետքն է թողել տարածաշրջանի պետությունների պատմական զարգացման վրա: Տարեցտարի Հարավային Կովկասը ավելի ու ավելի է ընդգրկվում միջազգային ինտեգրացման գործընթացների մեջ:

Խորհրդային Միության քայքայումը և սառը պատերազմի ավարտը հնարավորություն տվեցին վերացնել պետությունների գաղութացված վիճակը Խորհրդային Միությունից իսկ էթնոքաղաքական միավորումները՝ ստալինյան տոտալ քաղաքականության գոհերի առկայությունը:

Այս քաղաքական միավորումների անջատողական առաջնորդները նշում են, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իրենց երկրները ապագադրությամբ վեցին և, հետևաբար, պետք է դիտարկվեն որպես առանձին պետություններ: Ի տարբերություն դրան՝ նախկին գաղութացման «տիտղոսային»՝ նախկին խորհրդային միության ազգերը, չեն կարողանում հաշտվել նախկինում իրենց պատկանող հողերի նկատմամբ վերահսկողության կորուստների հետ:

Իր ապագա անվտանգությունը Վրաստանը տեսնում է, ամենայն հավանականությամբ, միասնական եվրոատլանտյան անվտանգության համակարգի համատեքստում: Վրաստանը մեծ ակտիվություն է ցուցաբերում ընդհանուր անվտանգության եվրոպական համակարգի մեջ ներգրավվելու հարցում: Փաստացիորեն վրացական քաղաքականության այս ուղղությունը հանդիսանում է հիմնական:

Նշենք, որ Վրաստանը բնութագրվել է անվտանգության դեֆիցիտով և անկայունությունով 1991 թ-ից՝ անկախություն ձեռք բերելու պահից: Անկախացումից հետո ընկած ժամանակահատվածում այստեղ երկու արյունահեղ և երկարատև պատերազմներ են տեղի ունեցել Վրաստանի և իր ինքնավարությունների միջև, և երկու պատերազմներն էլ ավարտվել են կենտրոնական կառավարության պարտությամբ:

Վրաստանում ի սկզբանե գիտակցվում էր սեփական ուժերով առանձնացված տարածքների վերադարձի անկարողությունը: Ուստի՝ Վրաստանը ստիպված էր դիմել երրորդ ուժերի օգնությանը: Հակամարտությունների ողջ ընթացում Ռուսաս-

տանը հանդես էր գալիս որպես երրորդ կողմ: Վրաստանը պատրաստ էր վստահել վճռորոշ դերը Ռուսաստանի Դաշնությանը տարածքային ամբողջականության պահպանման գործընթացում, քանի որ Մոսկվան հնարավորություն ուներ ապահովել երկխոսություն բոլոր կողմերի հետ, հասնել խաղաղության իր խաղաղապահական առաքելության ժամանակ:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա պետք է ընդգծել, որ Վրաստանում Հյուսիսատլանտյան դաշինքի վերաբերյալ գոյություն ունի ամենակարող միության նվազ իդեալականացված պատկեր, որը հաղթանակ է տարել սառը պատերազմում: Դեռ ավելին՝ հասարակական կարծիքը դիտարկում է սերտ համագործակցության ձգտումը հետագա Դաշինք մուտք գործելու՝ որպես ազգային անվտանգության և եվրոպական քաղաքակրթությանը Վրաստանի պատկանելիության միակ երաշխիք:

Ինչո՞վ է առաջնորդվում Վրաստանը ՆԱՏՕ-ի մեջ ինտեգրվելու հարցում վրաց-աբխազական և վրաց-հարավօսիական հակամարտությունների և գլխավոր մրցակիցների՝ Վրաստանի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Ռուսաստանի շահերի տեսանկյունից:

Ինչպես ներկայացվում է, այստեղ պարզորոշ կերպով նկատելի են Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցվելու երեք առավել նշանակություն ունեցող ձգտման պատճառներ:

Առաջին հերթին կասկածից վեր է հանդիսանում այն, որ Վրաստանը դիտարկում է ՆԱՏՕ-ն որպես հիմնական գործիք, որի օգնությամբ նա իր կատարյալ վերահսկողության տակ կկարողանա վերադարձնել իրենից անջատված Հարավային Օսիայի և Աբխազիայի հանրապետությունները, ինչի մասին են վկայում Վրաստանի բարձրաստիճան ղեկավարների բազմիցս հայտարարությունները: Քանի որ, ամենայն հավանականությամբ, խաղաղ ճանապարհով Աբխազիան և Հարավային Օսիան չեն վերադառնա Վրաստանի կազմ, պարզ է, որ այս խնդրի լուծման համար հիմնական շեշտը պետք է դնել ռազմական լուծման վրա՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի ռեսուրսները:

Երկրորդ՝ հավելյալ նպատակը սերտորեն կապված է առաջինի հետ. դա Վրաստանի ձգտումն է վերջնականապես ազատվել Ռուսաստանի քաղաքական և ռազմական ազդեցությունից:

Երրորդ՝ ինչը նույնպես շատ կարևոր է

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի համար, հաշվարկը կատարվում է այն բանի գիտակցմամբ, որ ՆԱՏՕ-ին անդամակցվելը նրան կարող է բերել զգալի նյութաֆինանսական դիվիդենդներ:

1992 թ-ին Վրաստանը ճանաչվեց ՄԱԿ-ի կողմից և դարձավ վերջինիս անդամը և մտավ Conference on Security and Cooperation in Europe (CSCE)՝ «Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի» (ԵԱՀԽ) մեջ, որը 1994 թ-ին վերանվանվեց «Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն» (ԵԱՀԿ) ՕԵՇԵ, (Organization for Security and cooperation in Europe (OSCE))<sup>2</sup>: 1992 թ-ի մարտին իշխանության գլուխ է. Շելարդանաձեի գալուց հետո վերջնականապես ձևավորվեց Վրաստանի արտաքին քաղաքականության վեկտորը, որը կայանում էր Արևմուտքի հետ առավելագույնս մերձեցման մեջ:

1993 թ-ի սեպտեմբերյան դեպքերը, որոնք հանգեցրեցին Աբխազիայում վրացական զորքերի պարտությանը, և քաղաքացիական պատերազմի էսկալացիան ստիպեցին Վրաստանի ղեկավարությանը շտկել արտաքին քաղաքական ուղղվածությունը և միանալ ԱՊՀ-ին<sup>3</sup>: Սակայն այս մոտեցումը չէր բացառում «բազմավեկտորային» քաղաքականության իրականացումը պետական անվտանգության ապահովման ոլորտում: Ղեկավարվելով պրագմատիկ պատկերացումներով՝ վրացական դիվանագիտությունը ձգտում էր օգտակար կապեր հաստատել բոլոր հնարավոր ուղղություններով: Այսպես՝ հաշվի առնելով Ռուսաստանի շահերը Հարավային Կովկասում՝ Վրաստանը միևնույն ժամանակ չիրաժարվեց ամուր կապեր հաստատել Արևմուտքի հետ:

Վրաստանի կապերը ՆԱՏՕ-ի հետ ավելի մեծ թափ ստացան 1994 թ-ի հունվարի 11-ից հետո, երբ ՆԱՏՕ-ի գազաթնաժողովում ընդունվեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը (Partnership for Peace (PfP))<sup>4</sup>: Այն հաստատելուց հետո վեց ամիսների ընթացքում ծրագրում մասնակցելու ցանկություն արտահայտեցին 27 երկրներ: Վրաստանը առաջիններից մեկն էր, որ միացավ այս ծրագրին 1994 թ-ի մարտի 23-ին:

1999 թ-ի գարնանը Վրաստանը միացավ ՆԱՏՕ-ի և գործընկեր-երկրների համագործակցության հատուկ ծրագրին պաշտպանության պլանավորման ոլորտում Planning and Review Process (PARP)՝ «Ծրագրավորման և վերլուծության գործընթաց»<sup>5</sup>: Այս գործընթացները Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ մտցրեցին իրենց շտկումները՝ նախ և առաջ Վրաստանը սույն տարում դուրս եկավ Համագործակցության երկրների «Հավաքական անվտանգության պայմանագրից», որում նախկինում ընդգրկված էր և դրանով իսկ վերջնականապես ընտրեց ամերիկամետ արտաքին քաղաքական ուղղվածություն:

1999 թ-ի նոյեմբերին Ստամբուլում կայացած ԵԱՀԿ -ի գազաթնաժողովում որոշում ընդունվեց մինչև 2001 թ-ի հուլիսի 1-ը Վրաստանից ռուսական բազաները դուրս բերելու վերաբերյալ: Այս պահանջը առաջ քաշեցին Արևմուտքի երկրներն ու Թուրքիան, ինչը էլ ավելի բարդացրեց Վրաստանի և Ռուսաստանի՝ առանց այն էլ բարդ հարաբերու-

թյունները:

Վրաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի միջև հարաբերությունները այլ մակարդակի բարձրացրեցին ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացվող ամենամյա համատեղ ուսումնամարզումները և միջոցառումները: 2001 թ-ի ամռանը ծովափնյա վրացական Փոթի քաղաքի շրջակայքում իրականացվելու լայնամասշտաբ բազմազգ ռազմածովային ուսուցումներ «Cooperative Partner – 2001», որում ներառված էին մոտ 4300 զինվորականներ, տարբեր դասի 29 նավեր, 15 ռազմական և բեռնափոխադրող ինքնաթիռներ<sup>6</sup>:

Ներկայումս Վրաստանի և ՆԱՏՕ-ի համագործակցությունը հիմնականում իրականանում է «ՆԱՏՕ-ի հետ համագործակցության անհատական ծրագրի» շրջանակներում, Individual Partnership Action Plans (IPAP), որը ընդունվել է 2004 թ-ի օգոստոսին<sup>7</sup>: Այս փաստաթղթում որոշված են գործընկեր-երկրների նպատակներն ու նպատակակետերը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ քաղաքական խորհրդակցությունների անցկացման շուրջ, որոնք վերաբերում են պաշտպանության, անվտանգության և ռազմական պլանների ոլորտներում բարեփոխումների իրականացմանը, այդ թվում նաև՝ ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի հետ համագործակցության հնարավորությունները:

IPAP անհատական համագործակցության ծրագրի շրջանակներում հաստատվել են գործընկեր-երկրների նպատակներն ու նպատակակետերը ՆԱՏՕ-ի հետ քաղաքական խորհրդակցություններ իրականացնելու համար, որոնք վերաբերում են անվտանգության, պաշտպանության և ռազմական քաղաքականության ոլորտներում բարեփոխումներ կատարելուն, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի հետ համագործակցության հնարավորությունները: Այս խնդիրները արդեն լուծվում են PARP շրջանակներում PfP ծրագրի ենթատեքստում: Բացի այդ՝ այդ ծրագրերում ձևակերպված են ռազմական ուժերը ժողովրդական մոտեցմամբ ղեկավարելու, բնակչությանը տեղեկատվությամբ ապահովելու, գիտության, տնտեսության և արտակարգ իրավիճակներում համագործակցելու խնդիրները<sup>8</sup>:

Վրաստանը նաև փորձում է օգտագործել քաղաքական խորհրդատվությունների մեխանիզմը՝ IPAP շրջանակներում ՆԱՏՕ-ի գործընկեր-պետություններին Ռուսաստանի հետ իր բարդ հարաբերությունների մեջ ներքաշելու նպատակով, գլխավորապես Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցերում<sup>9</sup>: Անհրաժեշտ է նշել, որ ՆԱՏՕ-ի երկրները չեն ձգտում ներգրավվել Աբխազիայում և Հարավային Օսիայում հակամարտությունների կարգավորման հարցերում: Այս առումով ՆԱՏՕ-ի կողմից Վրաստանին տրված միակ աջակցությունը Ռուսաստանի առաջև դրած պահանջն է՝ իրականացնել պարտավորությունները, որոնք Ռուսաստանը ստանձնել է 1999 թ-ին Ստամբուլի ԵԱՀԿ գազաթնաժողովի ժամանակ, որում Մոսկվան համաձայնվել է իր բազաները դուրս բերել Վրաստանից մինչև 2001 թ-ի հուլիսի 1-ը<sup>10</sup>:

Անխոս, Ռուսաստանը չի համարվում չեզոք հաշտարար տվյալ հակամարտությունները կարգավորելու բանակցությունների ժամանակ: Եվ պաշ-

տոնական Թբիլիսիի ցանկությունը՝ մեծացնել միջ-նորդների թիվը և բանակցային գործընթացից առավելագույնս հեռացնել Մոսկվային, ամբողջովին հասկանալի է: Սակայն Մոլխոմին և Յխինվալին, ինչպես նաև Կրեմլը գտնում են, որ այլ պոտենցիալ միջնորդները չեն հանդիսանում չեզոք և օբյեկտիվ հաշտարարներ՝ այս տարածաշրջանում հետապնդելով իրենց շահերը: Կարելի է ենթադրել, որ ԱՄՆ-ի հիմնական նպատակը հանդիսանում է ոչ թե հարավօսիական և արխագական հակամարտությունների կարգավորումը, այլ իր դիրքերի հետագա ամրապնդումը այս տարածաշրջանում և այստեղից Ռուսաստանին դուրս մղելը:

ԱՄՆ-ում հասկանում են, որ քաղաքական խնդիրների համալիր լուծում պահանջելը լրիվ անօգուտ է. այն կարող է հանգեցնել տարածաշրջանում լարվածության էլ ավելի սրացմանը: Հյուսիսատլանտյան դաշինքի կապակցությամբ կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ն անմիջականորեն ներքաշված չէ Վրաստանի տարածքում հակամարտությունների մեջ: Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև եղած ռազմական համագործակցությունը սահմանափակվում է գործունեության ավանդական ձևերի շրջանակներում՝ «Համագործակցություն հանուն խաղաղության»:

Տարածաշրջանում խաղաղապահ ուժերի միջազգայնացումը հաճախ դիտարկվում է Արևմուտքում որպես Վրաստանում Ռուսաստանի ազդեցության սահմանափակման գործիք: Այս կոնցեպցիայի հիմքում ընկած դրույթը շատ պարզ է՝ նա, ով խաղաղապահի դեր է կատարում, ստանում է քաղաքական վերահսկողություն հակամարտության տարածաշրջանի վրա, որը նա ավելի շուտ կսկսի ամրապնդել և չի հրաժարվի դրանից հակամարտության կարգավորումից հետո նույնպես:

Մոսկվան Արխագիայի և Հարավային Օսիայի հետ իր սերտ հարաբերությունները բացատրում է այն բանով, որ երկու հանրապետությունների բնակիչներն էլ մեծամասամբ հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ: Չէ՞ որ ռուսական անձնագրերի ստացման գործընթացը Արխագիայի և Հարավային Օսիայի բնակիչների համար ծայրաստիճան պարզեցված էր, որի հետևանքով այս հանրապետությունների բնակիչների գերակշիռ մեծամասնությունը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի: Մերտ համագործակցությունը բացատրող մեկ այլ կարևոր փաստ է հանդիսանում Արխագիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը Ռուսաստանի կողմից, ինչպես նաև լայն պայմանագրա-իրավական բազան, որը կարգավորում է քաղաքական, ռազմա-մարտավարական, տնտեսական և այլ հարաբերությունները սովյալ պետությունների միջև: Իսկ իրականում Արխագիան և Հարավային Օսիան ներկայումս հանդիսանում են ամենաարդյունավետ լծակները, որոնց միջոցով Մոսկվան կարող է ճնշում գործադրել Վրաստանի վրա:

Վրաստանի համար ռազմավարական նպատակ է հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգներին իր կողմը ներգրավելը, վերոհիշյալ չճանաչված հանրապետությունների հետ հակամարտության հարցում, ինչպես նաև Արխագիայի և Հարավային Օսիայի հետ հակամարտություններին

նոր ձև հաղորդելը, որպեսզի այդ ձևը ունենա Ռուսաստանի և Արևմուտքի միջև հակամարտության տեսք, որտեղ Վրաստանը հանդես է գալիս որպես Արևմտյան աշխարհի մի մասնիկ:

Թբիլիսիում հասունանում է այն բանի գիտակցումը, որ գրեթե ոչ մի քաղաքադիվանագիտական միջոցներ չեն մնացել, որոնց օգնությամբ հնարավոր կլիներ ետ վերադարձնել Արխագիան և Հարավային Օսիան Թբիլիսիի իրավասության տակ, իսկ Մոսկվան էլ առավել ևս ամեն կերպ արգելք կհանդիսանա դրան:

Նշենք նաև, որ 2004 թ-ին Մ. Սահակաշվիլիի՝ իշխանության գլուխ գալուց հետո Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցությունը էլ ավելի խորացավ: Նոր իշխանությունները կարողացան քաղաքական հայտարարությունները փոխանցել գործնական դաշտ՝ պաշտպանության նախարար դարձավ քաղաքացիական դեմք, մեծացան ծախսերը, որոնք նախատեսված էին պաշտպանության ապահովման համար: 2004 թ-ի սեպտեմբերին Վրաստանը Աֆղանստան ուղարկեց 50 խաղաղապահներ, որոնք վերապատրաստում էին անցել 2002-2004 թթ. ամերիկյան հրահանգիչների կողմից: Սեպտեմբերի վերջին որոշում կայացվեց նրանց թիվը կրկնապատկել, 2003 թ-ին Իրաքում վրացական զինվորականների թիվը հասավ 300-ի : 2004 թ-ին վրաց զինվորականների ջոկատը ծառայում էր բրիտանական ուժերի հետ համատեղ «International Security Assistance Force of Afghanistan» (ISAF) - «Աֆղանստանի անվտանգության և աջակցության միջազգային ուժերի» շրջանակներում՝ օգնելով անվտանգություն ապահովել Աֆղանստանում նախագահական ընտրությունների անցկացման ժամանակ<sup>11</sup>:

2008 թ-ի փետրվարի 5-ին Վրաստանում արտահերթ նախագահական ընտրությունների անցկացման ժամանակ զուգահեռաբար կատարվում էր երկիրը ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդգրկելու հարցի հանրաքվեն, ուր բնակչության մեծ մասը՝ 77 տոկոսը, որոշում կայացրեց մտնել Հյուսիսատլանտյան դաշինքի մեջ: Այս հանրաքվեն ցույց տվեց, որ Վրաստանի հասարակության մեծ մասը աջակցում է Վրաստանի կառավարությանը՝ ՆԱՏՕ-ի մեջ ինտեգրվելու քաղաքականությանը<sup>12</sup>:

Փաստորեն, չնայած երկրում հաստատված բարդ իրավիճակին, էթնոտարածքային խնդիրների «չլուծված» լինելուն և Ռուսաստանի հետ ունեցած բարդ հարաբերություններին, Վրաստանին հաջողվեց մեծ առաջընթացների հասնել ՆԱՏՕ-ի կազմի մեջ ինտեգրվելու գործընթացում, որը արտացոլվում է ինչպես բավականին ընդգրկուն իրավական բազայի առկայությամբ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում, այնպես էլ պայմանավորվածությունների գործնական իրականացման ոլորտներում մի շարք համատեղ միջոցառումները, վրացական բանակի վերափոխումը ՆԱՏՕ-ի ստանդարտներով, զգալի ֆինանսական միջոցների տրամադրումը անվտանգության ոլորտում բարեփոխումների իրականացման համար և այլն:

Չնայած այս բոլոր հաջողություններին՝ այնուամենայնիվ ՆԱՏՕ-ի կազմի մեջ Վրաստանի



### ՄՀԵՐ ՄԱՍԱԶԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և  
մուսիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

## ՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միավորման իրավունքը մարդու՝ համատեղիալական նշանակության հիմնարար իրավունքն է: Միավորման իրավունքը սահմանող սահմանադրական նորմերը լայն հեռանկարներ են բացում մարդկային գործունեության տարբեր նպատակների իրացման համար<sup>1</sup>: Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում և իրավական պետությունում միավորման իրավունքի նշանակությունը՝ այն պետք է ապահովել սահմանադրական երաշխիքներով: Միավորվելու իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածում, համաձայն որի՝

*«Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:*

*Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:*

*Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:*

*Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման:*

*Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:*

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում միավորվելու իրավունքն ամրագրված է 30-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի միավորման իրավունք, այդ թվում՝ ստեղծելու արհեստակցական միություններ իրենց շահերը պաշտպանելու համար:

*Ոչ ոք չի կարող ստիպված անդամագրվել որևէ միավորման կամ մնալ այնտեղ»:*

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված միավորման իրավունքը երաշխավորված է նաև մի շարք ՀՀ օրենքներով, մասնավորապես 2001 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին», 2002 թվականին ընդունված «Կուսակցությունների մասին», 2000 թվականին ընդունված «Արհեստակցական միությունների մասին» և մի շարք այլ օրենքներով: Ռ-Ռ Սահմա-

նադրությունում ամրագրված միավորման իրավունքը երաշխավորված է նաև մի շարք Ռ-Ռ դաշնային օրենքներով, մասնավորապես, 1995 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին», 2001 թվականին ընդունված «Քաղաքական կուսակցությունների մասին», 1995 թվականին ընդունված «Արհեստակցական միությունների և նրանց գործունեության իրավունքների և երաշխիքների մասին» և մի շարք այլ դաշնային օրենքներով:

Այսպիսով, թե՛ ՀՀ Սահմանադրությունը, թե՛ Ռ-Ռ Սահմանադրությունը և թե՛ երկու երկրների գործող օրենսդրությունները երաշխավորում են յուրաքանչյուրի միավորվելու իրավունքը: Սակայն ոչ սահմանադիրը, ոչ օրենսդիրը և ոչ էլ իրավակիրառողն այն հարցի պատասխանը, թե ինչ է միավորումը, չեն տալիս: Ուստի, այս եզրույթի ստուգաբանության համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ բառարաններին: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում միավորումը սահմանվում է որպես միություն, կազմակերպություն<sup>2</sup>: Միավորումը նույն կերպ է բացատրվում նաև Մ.Ի.Օժոգովի բառարանում<sup>3</sup>: Ֆ.Ա.Բռուկհանովի և Ի.Ա.Եֆրոնովի հանրագիտարանային բառարանում միավորումը սահմանվում է որպես ընդհանուր նպատակով մի քանի անձանց միություն<sup>4</sup>:

Ռուսական իրավաբանական գրականությունում տարածված է այն տեսակետը, որ միավորումն իրենից ներկայացնում է անհատական և կոլեկտիվ գործողությունների արդյունք<sup>5</sup>: Միավորում եզրույթը սահմանվում է նաև որպես գործընթաց, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև նրա գործունեության դադարեցումը: Երկրորդ մոտեցումը լայն տարածում է ստացել միջազգային դատական ատյանների պրակտիկայում, մասնավորապես Եվրոպական դատարանը նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված միավորման իրավունքը տեսական, երևակայական կլինի. եթե իր մեջ ներառի միայն միավորում ստեղծելու իրավունքը և ազգային իշխանությունը հնարավորություն ունենա դադարեցնելու միավորման գործունեությունը՝ չպահպանելով Կոնվենցիայի պահանջները<sup>6</sup>: Սրանից հետևում է, որ Կոնվենցիայի պաշտպանությունը տարածվում է միավորման ողջ գործընթացի վրա: Այսինքն, այս տեսակետի համաձայն միավորումն իրենից ներկայացնում է գործընթաց, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև միավորման գործունեության դադարեցումը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նախատեսող բոլոր փուլերը:

Մենք համաձայն ենք միաժամանակ այս երկու մոտեցումների հետ էլ, քանի որ կարծում ենք, որ այս մոտեցումները միավորում իրավաբանական եզրույթը բնութագրում են երկու տարբեր կողմերից և մեկի ընդունումը չի ենթադրում մեխանիկորեն մյուսի բացառում: Հօգուտ մեր մոտեցման է խոսում նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Եվրոպական դատարանը մի շարք գործերում միավորմանն անդրադարձել է որպես երկարաժամկետ գործընթացի<sup>7</sup>, իսկ մյուս դեպքերում՝ որպես ընդհանուր նպատակով անձանց կամավոր միավորման (կազմակերպության)<sup>8</sup>: Մեր կարծիքով, միավորումը հանդիսանում է առաջինը՝ որպես անձանց որոշակի վարքագծի արդյունք, որն ընդհանուր նպատակով մի քանի անձանց կողմից սահմանված միություն (կազմակերպություն) է, երկրորդը՝ միավորումը գործընթաց է, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև նրա գործունեության դադարեցումը:

Սակայն վերոնշյալի հետ միաժամանակ ակնհայտ է, որ ցանկացած միավորում չէ, որ հանդիսանում է ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ: Գոյություն ունեն բազմաթիվ միավորումներ, որոնք չեն գտնվում միավորման իրավունքի օբյեկտի շրջանակներում, օրինակ՝ պետությունների միավորումները: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ միավորման իրավունքի օբյեկտ չեն հանդիսանում նաև հանրային իրավունքի միավորումները<sup>9</sup>: Այսպիսով, կարելի է առանձնացնել միավորման երկու տեսակ՝ միավորումներ, որոնք ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են, և միավորումներ, որոնք միավորման իրավունքի օբյեկտ չեն:

Որպեսզի որևէ միավորում միավորման իրավունքի օբյեկտ հանդիսանա, անհրաժեշտ է, որ նա ունենա որոշակի հատկանիշներ: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի իմաստով միավորում դիտարկելու համար Եվրոպական դատարանն օգտագործում է միավորման կամավոր բնույթի և ընդհանուր նպատակի չափանիշները: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, միավորումը կրում է առավել ձևական կազմակերպված բնույթ<sup>10</sup> և միավորումը նախատեսում է ընդհանուր նպատակով անձանց կամավոր միավորում<sup>11</sup>:

Կարծում ենք, որպեսզի որևէ միավորում ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ հանդիսանա անհրաժեշտ է, որ նա ունենա հետևյալ հատկանիշները՝

1. մի քանի միավորվող սուբյեկտների առկայություն,
2. միավորման կամավորություն,
3. նպատակի ընդհանրություն,
4. որոշակի, ներքին կազմակերպչական կապերի առկայություն:

Սակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրությունները երաշխավորում են տվյալ հատկանիշներ ունեցող ցանկացած միավորումում միավորվելու իրավունքը, թե՞ միայն սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով

նախատեսված միավորումների ձևերում միավորվելու իրավունքը, և արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրությունները երաշխավորում են առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում (միավորումներում) միավորվելու իրավունքը, թե՞ միայն ոչ առևտրային կազմակերպություններում միավորվելու իրավունքը:

Միավորումներին անդրադառնալիս թե՛ ՀՀ Սահմանադրության, թե՛ ՌԴ Սահմանադրության տարբեր հոդվածներում օգտագործված են տարբեր ձևակերպումներ: ՀՀ Սահմանադրությունում այս իրավունքի հետ կապված օգտագործվում են «կուսակցություններ», «կրոնական կազմակերպություններ», «միավորումներ», «արհեստակցական միություններ», «հասարակական միավորումներ» հասկացությունները: ՌԴ Սահմանադրությունն այս իրավունքի համար օգտագործում է «միավորում», «հասարակական միավորում», «քաղաքացիների միավորում», «կրոնական միավորում», «արհեստակցական միություններ» ձևակերպումները և այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ միավորման իրավունքի անմիջական և միակ արտահայտությունը սահմանադրությունում կամ օրենսդրությունում նշված միավորումների ձևերն են: Երկար ժամանակ ուսումնական և մենագրական գրականության մեջ գերիշխում էր այն կարծիքը, որ միավորման իրավունքի իրացումը հնարավոր է միայն «Հասարակական միավորումների մասին» ՌԴ օրենքի և այլ՝ հասարակական միավորումներին վերաբերվող օրենքների շրջանակներում թվարկված ձևերում<sup>12</sup>: Սակայն մենք կարծում ենք, որ միավորման իրավունքի օբյեկտը «ցանկացած միավորումն» է և միավորումն ընդհանրապես, և ոչ թե ՀՀ և ՌԴ սահմանադրությունների և համապատասխան օրենքներում նախատեսված միավորման տարբեր ձևերը: Այդպիսի եզրահանգում կարելի է անել ՀՀ Սահմանադրության և ՌԴ Սահմանադրության միավորման իրավունքին նվիրված հոդվածների վերլուծությունից:

ՌԴ Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համեմատական վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ սահմանադիրը սահմանում է միավորման իրավունքի դրական և բացասական բովանդակությունը: Զննարկվող իրավունքի դրական ձևակերպումն է՝ «Յուրաքանչյուր ոք ունի միավորման իրավունք, այդ թվում՝ ստեղծելու արհեստակցական միություններ՝ իրենց շահերը պաշտպանելու համար»: ՌԴ Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ուղղակիորեն չսահմանելով միավորման իրավունքի օբյեկտը, միայն մատնացույց են անում անձի միավորվելու հնարավորությունը և միայն մեկ հնարավոր ձևերից մեկում արհեստակցական միություններում միավորման հնարավորությունը: Միավորման իրավունքի բացասական ձևակերպումն է՝ «Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամագրվել որևէ միավորման կամ մնալ այնտեղ», այս ձևակերպումը պարունակում է միավորման իրավունքի օբյեկտը, ինչը ցանկացած միավորումն է ընդհանրապես:

Ի տարբերության ՌԴ Սահմանադրության, ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասում սահմանադիրը միավորման դրական իրավունքը սահմանելիս նշել է, որ յուրաքանչյուր ոք ունի այլ

անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում նաև արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասում միավորման բացասական իրավունքը սահմանել է, որ մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման: Այսպիսով, ՀՀ սահմանադիրը, ի տարբերություն ՌԴ սահմանադրի, միավորման թե՛ դրական, թե՛ բացասական իրավունքները սահմանելիս, միավորման իրավունքի օբյեկտ է համարում որևէ միավորում կամ ցանկանցած միավորում և ոչ թե միավորման որոշ ձևեր: ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորվում է յուրաքանչյուրի իրավունքը միավորվելու ցանկացած միավորումում, այլ ոչ թե միայն սահմանադրության մեջ նշված և համապատասխան օրենքներով նախատեսված միավորման առանձին ձևերում միավորվելու իրավունքը:

Հաջորդ կարևոր խնդիրն այն է՝ արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրություններով նախատեսված միավորվելու իրավունքը վերաբերում է և՛ առևտրային, և՛ ոչ առևտրային կազմակերպություններին, թե՛ միայն վերջիններին:

Առևտրային կազմակերպությունները ոչ առևտրայիններից տարբերվում են միայն նրանց նպատակով: Առևտրային կազմակերպությունների դեպքում նպատակը շահույթ ստանալն է: Ինչպես արդեն նշել ենք, միավորման հատկանիշներն են՝

1. մի քանի միավորվող սուբյեկտների առկայությունը,
2. միավորման կամավորությունը,
3. նպատակի ընդհանրությունը,
4. որոշակի ներքին կազմակերպչական կապերի և ֆորմալ ընթացակարգերի առկայությունը:

Կարծում ենք՝ որևէ հիմք չկա սահմանադրությամբ երաշխավորված միավորվելու իրավունքը սահմանափակել միայն ոչ առևտրային կազմակերպություններով, քանի որ առևտրային կազմակերպությունները նույնպես համապատասխանում են միավորմանը ներկայացված պահանջներին:

Նախ վերոնշյալով օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ եթե ՀՀ և ՌԴ սահմանադիրները ցանկանային միավորման իրավունքը սահմանափակել միայն ոչ առևտրային կազմակերպություններով, ապա սահմանադրություններում կերաշխավորվեր ոչ թե միավորումներում միավորվելու իրավունքն առհասարակ, այլ ոչ առևտրային կազմակերպություններում կամ շահույթ չհետապնդող միավորումներում միավորվելու իրավունքը, ինչպես մի շարք երկրների սահմանադրություններում: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն. «Հույներն իրավունք ունեն ստեղծել շահույթ ստանալու նպատակ չունեցող միավորումներ և հասարակական կազմակերպություններ՝ պահպանելով օրենքները, որոնք երբեք չեն կարող այդ իրավունքի իրականացումը պայմանավորել նախնական թույլատվություն ստանալու պայմանով»: ԵՎ երկրորդ ՌԴ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում<sup>13</sup> նշել է, որ ընկերակցությունները, սահմանափակ պատասխանատվության ընկերությունները, բաժնետիրական ընկերություններն իրենց էությանը հանդիսանում են անձանց միավորումներ: Այսինքն, միավորվելու սահմանադրական իրավունքը երաշխավորում է յուրաքանչյուրի միավորվելու իրավունքն անկախ

այն հանգամանքից՝ անհատը հետապնդում է շահույթ ստանալու նպատակ, թե՛ ոչ:

Այսպիսով, ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորվելու իրավունքը վերաբերում է նաև առևտրային կազմակերպություններին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ առևտրային կազմակերպությունը, հանդիսանալով իրավաբանական անձ, չի հանդիսանում միաժամանակ անպայման միավորում: Առևտրային կազմակերպություն (իրավաբանական անձ) լինելը դեռևս չի նշանակում, որ նա անպայման հանդիսանում է միավորում: Իրավաբանական անձի հատկանիշներից է համարվում նաև այն, որ նա կարող է միավորել մի քանի անձանց, սակայն դա ոչ միշտ է առկա: Հետևաբար, միավորում չի հանդիսանում այն առևտրային կազմակերպությունը, որը, հանդիսանալով իրավաբանական անձ, կազմված է միայն մեկ անդամից:

Այսպիսով, ոչ բոլոր իրավաբանական անձինք են հանդիսանում միավորում, կարծում ենք նաև, որ ոչ բոլոր միավորումներն պետք է անպայման իրավաբանական անձ հանդիսանան: Միավորման որպես իրավաբանական անձի կարգավիճակի առկայությունը կամ բացակայությունը հիմնականում կապված է նաև պետական գրանցման առկայությունը հետ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միավորումների պետական գրանցումն իրականացվում է կամավոր (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Հունգարիա, Նիդերլանդներ և Լեհաստան)<sup>14</sup>: Միավորման հիմնադիրները կարող են գրանցել միավորումը՝ ձեռք բերելով իրավաբանական անձի կարգավիճակ, որն իր հերթին հնարավորություն է ընձեռում միավորմանը սեփականություն ունենալ, աշխատողներ վարձել, բանկային հաշիվներ բացել և միավորման անունին իրականացնել այլ ֆինանսական և իրավաբան նշանակություն ունեցող գործունեություն: Միավորումները պետական գրանցման իրավունք պետք է ունենան, որպեսզի ձեռք բերեն իրավաբանական անձի կարգավիճակ և օգտվեն դրա հետ կապված իրավական հնարավորություններից, սակայն պետական գրանցումը, բացառությամբ մի քանի միավորումների (օրինակ՝ քաղաքական կուսակցություններ) ձևերի, պետք է լիովին կախված լինի հիմնադիրների կամքից: Չգրանցված միավորումների զոյությունը ժողովրդավարական երկներում արգելված չէ, իսկ դրանց գործունեությունը սահմանափակված է միայն այն մասով, որը կապված է իրավաբանական անձի կարգավիճակի բացակայությամբ:

Այս իմաստով միավորվելու իրավունքը դա մարդու յուրօրինակ իրավունքն է: Այն մասնավոր անձին հնարավորություն է տալիս ստեղծել իրավունքի նոր սուբյեկտներ: Սակայն կարծում ենք, որ սահմանադրությամբ երաշխավորված միավորվելու իրավունքը նաև հնարավորություն է ստեղծել միավորում, որն իրավունքի սուբյեկտ չի հանդիսանում: Այստեղ խոսքը գնում է «ոչ ֆորմալ» միավորումների մասին:

Այսպիսով, անձանց կողմից ստեղծվող միավորումները կարող են լինել քաղաքական, բարեգործական, մարզական, կրոնական, ձեռնարկատիրական և այլն: Վերլուծելով միավորման իրավունքը որպես ուղղակի գործողության սահմանադրաիրավա-

կան կատեգորիա՝ կարելի է հետևություն անել, որ միավորման իրավունքի իրացման արդյունքում կարող են ստեղծվել.

Հայաստանի Հանրապետությունում «Հասարակական կազմակերպությունների մասին», «Կուսակցությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքների հիման վրա ստեղծված միավորումներ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված կրոնական միավորումներ, ձեռնարկատիրական միավորումներ, որոնք ստեղծվում են տարբեր օրենքների հիման վրա, օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ միավորումներ և օրենսդրությամբ չնախատեսված միավորումներ: Ռուսաստանի Դաշնությունում «Հասարակական միավորումների մասին», «Քաղաքական կուսակցությունների մասին», «Արհեստակցական միությունների և նրանց գործունեության իրավունքների և երաշխիքների մասին» ՌԴ օրենքների հիման վրա ստեղծված միավորումներ, «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» ՌԴ օրենքի հիման վրա ստեղծված կրոնական միավորումներ, ձեռնարկատիրական միավորումներ, որոնք ստեղծվում են տարբեր օրենքների հիման վրա, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված

այլ միավորումներ և օրենսդրությամբ չնախատեսված միավորումներ, ինչպես նաև օրենսդրությամբ չնախատեսված «ոչ ֆորմալ» միավորումներ:

Այսպիսով՝ 1. Գոյություն ունեն միավորումներ, որոնք սահմանադրությամբ երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են, և միավորումներ, որոնք միավորման իրավունքի օբյեկտ չեն: ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են այն միավորումները, որոնք ունեն որոշակի հետևյալ հատկանիշները՝ ա) մի քանի միավորվող սուբյեկտների առկայություն, բ) միավորման կամավորություն, գ) նպատակի ընդհանրություն, դ) որոշակի ներքին կազմակերպչական կապերի առկայություն,

2. ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտը «ցանկացած միավորում» է, միավորում ընդհանրապես և ոչ թե ՀՀ և ՌԴ սահմանադրություններով և համապատասխան օրենքներով նախատեսված միավորման տարբեր ձևերը միայն,

3. ՀՀ և ՌԴ սահմանադրություններով նախատեսված միավորվելու իրավունքը վերաբերում է և՛ առևտրային, և՛ ոչ առևտրային կազմակերպություններին: Սակայն ոչ բոլոր առևտրային կազմակերպություններն (իրավաբանական անձինք) են հանդիսանում միավորում:

<sup>1</sup> St'u Алиев А.А. Защита права на объединение в Конституционном Суде РФ: Диссертация... к.ю.н. М. 2000. С.16.  
<sup>2</sup> St'u Հայոց լեզվի բազմաբանական բառարան. Հատոր 3. Երևան, 1974, էջ 534:  
<sup>3</sup> St'u Ожегов С.И. Словарь русского языка. М. 1973. С. 401.  
<sup>4</sup> St'u Брокгауз Ф.А. Ефрон И.А. Энциклопедический словарь. Т2. СПб, 1890. С.331.  
<sup>5</sup> St'u Моисеев А.М. Конституционное право граждан на объединение в политические партии и судебная практика его защиты: Диссертация... к.ю.н. М. 2008. С. 41.  
<sup>6</sup> St'u United Communist party of Turkey v. Turkey Judgment of 30 January 1998.  
<sup>7</sup> St'u նույն տեղում:  
<sup>8</sup> St'u Young, James and Webster v. The United Kingdom 13-08-1981.  
<sup>9</sup> St'u Le Compte, Van, Leuven, De Meyere v. Belgium, Judgment of 23 June 1981, Sigurdur A. Singurjonsson v. Iceland Judgment of 30 June 1993.  
<sup>10</sup> St'u Гомьен Д. Харрис Д. Зваак Л. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия. Право и практика М. изд-во МНИМП. 1998. С. 395.  
<sup>11</sup> St'u Young, James and Webster v. The United Kingdom 13-08-1981.  
<sup>12</sup> St'u Права человека: Учебник для вузов/ Отв. ред чл.-корр.РАН д.ю.н. Е.А. Лукашева.М.Издательство Норма. 2003. С.158.  
<sup>13</sup> St'u Постановление Конституционного Суда РФ от 24.10.1996 г. N 17-П; Постановление Конституционного Суда РФ от 12.10.1998 г. N 24-П.  
<sup>14</sup> St'u <http://www.icnl.org/knowledge/ijnl/index.htm>.

РЕЗЮМЕ

**Объект конституционного права на объединение в Республике Армения и Российской Федерации**

Статья посвящена объекту конституционного права на объединение в Республике Армения и Российской Федерации. Автор в статье рассматривает термин “объединение” и его основные признаки. В статье в качестве объединений рассматриваются также и коммерческие организации, отмечая, что право на создание объединений, гарантированное Конституциями РФ и РА распространяется также и на коммерческие организации.

SUMMARY

**The object of the constitutional right to freedom of association in the Republic of Armenia and the Russian Federation**

The article is devoted to the object of the constitutional right to freedom of association in the Republic of Armenia and the Russian Federation. The author in the article reviews the term “association” and its main features. In this article commercial entities are considered to be associations, noting that the right to freedom of association guaranteed by the Constitutions of the Republic of Armenia and the Russian Federation refers to commercial entities as well.



### ՀԱՅԿ ՄԱՍԱԶԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավունքի դատական մեկնաբանման առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առաջնային տեղ են զբաղում իրավաբանական գրականության մեջ որպես իրավունքի մեկնաբանման հնարքներ<sup>1</sup>, կամ միջոցներ<sup>2</sup>, կամ մեթոդներ<sup>3</sup> անվանվող իրավունքի մեկնաբանման տարբեր մոտեցումների կամ տեսակների ուսումնասիրությունը: Իրավունքի մեկնաբանման տարբեր մոտեցումների ուսումնասիրություններն սկսել են դեռևս Հին Հռոմում և այդ մոտեցումների կատարելագործման գործընթացը շարունակվում է մինչ այսօր<sup>4</sup>: Այս մոտեցումները կիրառելիս օգտագործվում են որոշ դատական փաստարկներ, որոնց միջոցով և տեղի է ունենում իրավունքի դատական մեկնաբանումը: Դրանք օգտագործվում են դատական կոնկրետ որոշումը կամ իրավունքի կոնկրետ մեկնաբանումը հիմնավորելու, իրավունքի մեկնաբանման խնդիրներն առաջ քաշելու, ինչպես նաև հակադարձ փաստարկներին պատասխանելու և դրանք թուլացնելու նպատակով<sup>5</sup>:

Գոյություն ունի իրավունքի դատական մեկնաբանման հիմնական մոտեցումների և փաստարկների մի զանգված, որն օգտագործվում է գրեթե բոլոր պետությունների դատական ատյանների կողմից՝ իրենց որոշումների հիմնավորման ընթացքում: Դատարանների կողմից իրավունքի մեկնաբանման ընթացքում կիրառվող դատական փաստարկների ցանկը որոշելն անհնար է, քանի որ տարբեր համակարգերում դատարանների կողմից տարբեր որոշումներում օգտագործվում են զանազան փաստարկներ: Այստեղ մենք կքննարկենք այդպիսի դատական փաստարկների հիմնական տեսակներից երկուսը, որոնք կներկայացնենք իրավունքի դատական մեկնաբանման լեզվաբանական մոտեցման շրջանակներում:

Քննարկվող փաստարկներից առաջինն իրավական ակտերում օգտագործվող սովորական բառերի տառացի իմաստից բխող փաստարկներն են: Դատարաններն իրենց որոշումները հիմնավորելիս հիմնականում ելնում են իրավական ակտերում օգտագործվող բառերի սովորական, տառացի իմաստից: Իրավական ակտերը ներառում են հիմնականում սովորական բառեր, որոնք ունեն ոչ մասնագիտական, առօրյա նշանակություն: Օգտագործված բառերի և արտահայտությունների իմաստը վերհանելու համար երբեմն անհրաժեշտ է լինում դիմել բառարանների և այլ լեզվաբանական ուսումնասիրությունների օգնությանը: Այն դեպքում, երբ օգտագործվող նման բառերն ունեն մեկից ավել նշանակություն և տեսակաճանաչող կարող են մեկնաբանվել մեկից ավել նշանակությամբ, դատարանները խնդիրը լուծում են բառի իմաստը գնահատելով

ամբողջ տեքստի իմաստի լույսի ներքո և որոշում են թե բառի որ նշանակությունն է լեզվաբանորեն առավել հարմար քննվող համատեքստում: Նման իրավիճակներում կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բառերը ժամանակի ընթացքում կարող են փոխել իրենց իմաստը, ձեռք բերել նոր իմաստ, որը կարող է հանգեցնել որոշ տարակարծությունների: Նման փաստարկների հիմնական կշիռն այն է, որ իրավական ակտերի տեքստերը հիմնականում գրված են դյուրըմբռնելի լեզվով և պետք է մեկնաբանվեն այնպես, ինչպես օգտագործված լեզվին տիրապետող շարքային անհատը տառացիորեն կմեկնաբաներ այն, եթե իհարկե, չկան նման մեկնաբանությունը բացառող ծանրակշիռ փաստարկներ:

Տառացի մեկնաբանման կանոնն իր ուղղակի ամրագրումն է գտել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Նույն հոդվածը շարունակում է այն միտքը, որ իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոխվի վերջինիս իմաստը: Այստեղ խոսքը իրավական ակտի տառացի իմաստի մասին է, քանի որ իրավական ակտերի մեկնաբանումն ինքնին իրավական ակտերի իմաստի բացահայտմանն ուղղված գործունեություն է: Հետևաբար, նշված կանոնն էլ ավելի է ամրապնդում իրավական ակտերի տառացի մեկնաբանման կանոնի դիրքերը և մեծացնում դրա վրա հիմնվող փաստարկների կշիռը: ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս հղում է կատարել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի վրա և հիմք ընդունել այն որոշում կայացնելիս<sup>6</sup>, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարվել է միայն այդ հոդվածին հղում կատարելով և դեռևս չի տվել նշված նորմի համապարփակ մեկնաբանություն: Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը գործերից մեկում, մեկնաբանելով «Իրավական կատերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, սահմանել է, որ իրավական նորմերը «պետք է մեկնաբանվեն օրենսգրքի (օրենքի կամ այլ իրավական ակտի) իմաստով՝ չփոփոխելով դրանց էությունը, չնեղացնելով կամ չընդլայնելով դրանք ..»<sup>7</sup>:

Հաջորդ դատական փաստարկը՝ իրավական ակտերում օգտագործվող սովորական կամ մասնագիտական բառերի և արտահայտությունների մասնագիտական նշանակությունից բխող փաստարկն է: Իրավական ակտերում օգտագործվում են նաև բառեր և արտահայտություններ, որոնք բացի իրենց տառացի, առօրյա նշանակությունից,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ունեն նաև կոնկրետ մասնագիտական-իրավական կամ այլ մասնագիտական նշանակություն: Դատական փաստարկման այն տարբերակը, որը շեշտը դնում է իրավաբանական եզրույթների իմաստի բացահայտման վրա, իրավաբանական գրականության մեջ հայտնի է նաև հատուկ իրավաբանական փաստարկ անվանմամբ<sup>8</sup>: Նման բառերի օգտագործման դեպքերում պետք է որոշել, թե որ նշանակությամբ է բառն օգտագործվել: Որոշ սովորական բառեր, ինչպիսիք են՝ «վկա», «մեղք» կամ «դիտավորություն» բառերը, իրավական ակտերում օգտագործվում են հատուկ իմաստով, որոնց սահմանումը շատ հաճախ տրվում է իրավաստեղծի կողմից: Այստեղ նույնպես երբեմն բառի կամ արտահայտության նշանակությունը կարող է որոշվել ընդհանուր համատեքստի լույսի ներքո: Սակայն պետք է զգույշ լինել, քանի որ երբեմն իրավունքի մեկ ճյուղում որևէ եզրույթին տրված իմաստը կարող է տարբերվել իրավունքի մեկ այլ ճյուղում միևնույն եզրույթին տրված իմաստից<sup>9</sup>: Բառի կամ արտահայտության նշանակությունը որոշելու համար կարող են կիրառվել նաև պատմական ուսումնասիրություններ՝ կապված այլ իրավական ակտերում քննվող բառի կամ արտահայտության ավանդական օգտագործման հետ, ինչպես նաև կարող են օգտագործվել նաև այլ ապացույցներ<sup>10</sup>: Փաստարկման այս տեսակի իմաստն այն է, որ եթե իրավական ակտում խոսվում է որևէ մասնագիտական գործունեության մասին, ապա օգտագործված մասնագիտական բառին պետք է տրվի համապատասխան մասնագիտական նշանակություն, անկախ նրանից դրանք կլինեն իրավաբանական եզրույթներ և արտահայտություններ, թե՛ այլ մասնագիտական բառեր:

Վերը նշված երկու փաստարկները ներկայացնում են իրավունքի մեկնաբանման լեզվաբանական<sup>11</sup> կամ քերականական<sup>12</sup> մոտեցումը: Չնայած նրան, որ իրավունքի դատական մեկնաբանման նման մոտեցումը քսաներորդ դարում մի փոքր զիջել էր դիրքերը, այնուամենայնիվ, այն այժմ էլ շարունակում է գտնվել առաջնային դիրքում: Ցանկացած իրավական ակտ իրավաստեղծի մտադրության բառային արտահայտությունն է<sup>13</sup>: Նման մոտեցման դեպքում բացի նրանից, որ շեշտը դրվում է մեկնաբանվող իրավական ակտում օգտագործված բառերի և արտահայտությունների տառացի և մասնագիտական իմաստի բացահայտման վրա (բառագիտություն), միաժամանակ այն ընդգրկում է նաև մեկնաբանվող տեքստի քերականական վերլուծությունը՝ ուսումնասիրելով մեկնաբանվող նախադասությունների կառուցվածքը, օգտագործված կետադրությունը, խոսքի մասերը և տեքստի այլ քերականական առանձնահատկություններ (հոլով, թիվ, սեռ, դեմք և այլն)<sup>14</sup>:

Այսպիսով, իրավունքի լեզվաբանական մեկնաբանման դեպքում մեկնաբանվող տեքստի սովորական, տառացի կամ մասնագիտական իմաստը չի փոխվում կամ զարգացվում<sup>15</sup>: Իրավաստեղծ մարմիններն իրավական ակտերում օգտագործվող բառերի մի քանի իմաստներից ընտրում են մեկը և տալիս դրան համապատասխան նշանակություն<sup>16</sup>: Հետևաբար, օրինաչափ է այն, որ ինչպես այլ տեքստերի մեկնաբանության դեպքում, իրավական ակտերի մեկնաբանման դեպքում էլ կիրառվեն միևնույն լեզվաբանական կանոնները<sup>17</sup>:

